

Բանալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌՈՒԵԱՏՈՒ

Է. ՏՄԻՒՄ 1968 ՍԵՄԵՏԵՐԵՐ ԹԻՒՆ 9

digitised by A.R.©

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԱՐԻՔ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐ
 Գ. ՄՆԱԳՅԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹՅԱՆ
 ԱՆԳԱՄԵՐ
 Զ. ԳԵՂԱՐԳԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
 Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԱՆՏԱԳԻՐ ԱՆԴԱՄԱՆԵՐԷՆ
 † ԵՅ. ՊՅՈՒՅԱՆ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռաձայնի թիւ. 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ն. ՊԵՇԻԿՅԱՆ
- Գ. ԳԵՂԱԿ
- Բ. ԵՂԻԱՏԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Յ. ԳԵՂԱՐԳԻ
- ՇԱՀԱՆԳՈՒԵՏ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- ԱՐՇԻ
- Ա. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- Թ. ԳԱՌՈՂԷ
- Պ. ԳԱՂՈՒՍՏԵԱՆ
- Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- Լ. ՄԿՐՏՉԵԱՆ
- Ն. Պ.
- Պ. Ս.
-
- ՆՇԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Է. ՕԱՐԻ, ԹԻՒ Ց

ՍՍՊՍՏՄՐԱԾԻ 1968

ՊԵՏՐՈՒՄ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՀԻՄՆԱԳԻՐԸ

Տարիներու ընթացքին ողջունեցինք նոր տեսակի բանաստեղծութիւններ:

Ամէն մէկ նորութիւն՝ բանաստեղծութիւնէն բան մը հանեց ու նետեց:

Նորութիւնը մերկութիւն ըլլալէ զատ, եղաւ նաեւ վիրարութիւն մը, որ անդամահատեց բանաստեղծութիւնը, միշտ անոր մէկ մասը կտրելով ու նետելով:

- Այսպէս՝ բանաստեղծութիւն
- Առանց յանգի,
- Ապա, առանց շարի,
- Առանց տունի,
- Յետոյ, առանց զգացումի,
- Հեղհեղէ, առանց կէտազրութեան,

Առանց գլուխի (արդէն առանց ոտքի էր),

Ու վերջապէս, առանց իմաստի: Ի մի բան. բանաստեղծութիւն, առանց բանաստեղծութեան:

Բանաստեղծութիւնը, հակառակ իր խողիտողած, խլիպ վիճակին, կրցաւ ապրիլ, քանի որ անմահ է:

Այս բոլորէն ետքն է որ յայտնուեցաւ բանաստեղծ մը, որ կը կոչուի Մար Նազա (Մարկոս Նազարեթեան), ապա կաւին անտիպ:

Մար Նազա որոշեց գրել բանաստեղծութիւններ աւելի քան նորազոյն, նորութեամբ մը, որ չունենայ ո՛չ նախնիք, ոչ ալ հետեւորդ:

Ու խոկաց, յանուն որոնումի:
Միակ ժիջոցը բանաստեղծութենէն
բան մը եւս հանելն էր:

Բայց իրմէ առջ, արդէն ամէն բան
հանած էին: Հանուելիք բան չէր մնա-
ցած՝ ջարդուած, պարպուած բանաս-
տեղծութենէ. ո՛չ զլուիք մնացած էր,
ո՛չ ոտքը, ո՛չ ծորթը, ո՛չ հոգին, ո՛չ
հաղուտները, ոչ իսկ կոծակները (կէ-
տադրութիւնը):

Մար նազայի անելիքը զժուարա-
ցած էր:

Հէք բանաստեղծութենէն մնացած
էին ճրատե՛ր, բառե՛ր ու բառե՛ր...»

Մար նազա ալ հանեց նետեց բառե-
րը, ու գրեց բանաստեղծութիւններ ան-
բարբառ, անբառ:

Գրեց ձայներով:

Կարծէր որ զրոյց մը ունենայինը
Մար նազայի հետ:

Ահաւասիկ.

- Ի՞նչպէս կը կոչուի ձեր հիմնած
քերթողական նոր զարոցը:

- Քալոֆոնի:

- Կը հաճե՛ք մէկ-երկու քերթուած
կարդալ, դրուած քալոֆոնիդով:

- Հանուելով: Ահաւասիկ առաջին
անսխալ հատորէն, որ կը կոչուի «Թամ-
Թամ», քերթուած մը.

Կուկուլիկու կուկուլիկու
կըս կըս կըսկըսակ
կուկուլիկու

զուտ զուտ զուտ

մէ մէ մէ մէ մէ մէ մէ

մօօ մօօ մօօ մօօ մօօ

մէ մէ մէ

մէ

մօօ

հաւ հաւ հաւ հաւ

տիմկ տամկ տիմկ տամկ տիմկ տամկ

հօ հէ հօ հէ հէ

կըս կըս կըս

զուտ

մէ մօօ մէ մօօ

հաւ

հէ

ճըս ճըս ճըս

ճիւ ճիւ

զըս զըս

զըս

կըլափ կըլափ կըլափ

- Հասկցայ: Գիւղական ձայներու
անսամպլը կը ներկայացուի: Այս ան-
բան, անբառ բանաստեղծութիւնով կը
պատկերացնէք զիւղական առաւօտը:

- Շատ ճիշդ: Ահաւասիկ ուրիշ մը.
Թիփ քափ քիփ քափ քիփ քափ
խըռռռ

քիփ քափ քիփ քափ քիփ քափ

խըռռռ

տըզ տըզ տըզ

քիփ քափ քիփ քափ քիփ քափ

տըզ

քիփ քափ քիփ քափ քիփ քափ

տիմկ տիմկ տիմկ տիմկ տիմկ տիմկ

օ օ օ

չիփ չափ չափ

քըփ

քըփ

քըփ

քըփ

քըփ շուփ

ճիւ ճիւ

շափ շափ

քըփ քըփ

ճիւ ճիւ

շափ շափ

- Ձեր երկրորդ քերթուածին տակէն
պիտի չկրնամ ելլել, առանց ձեր օգնու-
թեան:

- Վարժութեան հարց է: Քանի մը
օրէն, քերթուածներու տակէն կ'ելլէք,
առանց իմ օգնութեան: Երկրորդ բա-
նաստեղծութեան մէջ, օրիորդ մըն է
որ կը մեքենագրէ, զբանեկէն մը
մէջ: Ճանճ մը կը աքզայ. ուրեմն ա-
մառ է: Երկարօրէն կը մեքենագրէ:
Վերջապէս, կը հնչէ ժամացոյցը. վեցն
է. լրացած է աշխատանքի ժամը: Ար-
դուաբար: Մեքենագրուհին կ'իջնէ սան-
դուիներէն: Դրան աւջեւ իրեն սպասող
սիրահարին հետ կը համբուրուի: Միա-
սին մայթին վրայէն կը քայլեն, կը ճըռ-
ւողեն, կը համբուրուին: Ահա՛: Քալո-
ֆոնիք քերթուածով ընթերցողին մէջ
կ'ընթերցայ ձայնաճանաչումը: Քալոֆո-

քալ

նիք զերթուածը կը խթանէ ծոյլ, յաճառ, աւանականացած երեւակայութիւնը, կը հարուածէ մեր ուղտացած մըլտածոմաները, ու զանոնք կը թոցնէ փիլիսոփայական ուժախորտ, ընծայելով կանոնադրութիւն, ջուր եւ իտէլական հանգիստ: Տակաւին կը տապալին լեզուական պարիսպները, եւ առանց էսթրանժիտի, մեր դպրոցին պատկանող կը տարները կը դառնան միջնադարին: Մեծագոյն ու բարեբար զիւտ մըն է այս, մտաւորէն: Այլ չի մնար թարգմանութեան հարց: Մեր հիմնած քաղաքներին պատկանող սրելէ զերթուած կը դառնայ մասնիկի բոլոր ժողովուրդներուն: Համար, կը բաւէ որ ամէն ազգ իր գործածած զիրերով տպէ վայն: Եւ այսպէս, լեզու, զերեկանութիւն, ստորագրութիւն, կէտադրութիւն, տաղանջութիւն եւ այլ ռուսիաններ կը դառնան աւելորդ, անպէտք: Կը բաւէ միայն տաղանջ ունենալ: Պէտք է գիտնալ նաեւ որ ամենայն ինչ ձայն է: Շարժումը ձայն է, կեանքը ձայն է, ջրունը ձայն է, մահն անդամ ձայն է: Զայնը աշխարհակալ է: Ու ձայներով կարելի է վերարտադրել ամէն տեսակ պատկեր կամ ապրում:

- Գանի որ ձայնաւոր է ձեր քանատեղծութիւնը, հապա լուսութիւնը ի՞նչպէս կ'արտայայտէք...

- Կարծը մէկ պարագայ տողով, երկարը երկու - երեք պարագայ տողով: Զեր ձայնը կու տա՞ք մեր Զայնին:

- Բայց ընաւ բառ պիտի չգործածէ՞ք ձեր թուածներուն մէջ:

- Որչա՞ծ հմ դպրոցիս հետեւող բանաստեղծներուն թոյլ տալ որ գործածեն միայն քառասուն բառ, թայց միջնադարացած բառեր, որպէսզի ամէնուն համար ըլլան հասկնալի: Այդ քառասուն բառերէն դուրսը զանոնք բառեր գործածողները պիտի նկատուին հերձուածողներ:

- Այդ քառասուն բառերուն մէկ մասը կրնա՞ք ըսել:

- Ահաւասիկ - քանակը, ջրնայր, ջրնայր, ջրնայր, մայր, Ֆոնո, Ֆորթիւն,

Փանթագիա, Փրանք, մամզէլ, մատամ, մատոնա, միւսի, ջրնայր, քաւար, վակոն, վոտկա, նիէթ, նիչէփօ, մակէլ, սթերիլն, տոլար, սանտուիչ, զոթթէլլ, շամբայն, օփիում, մէտիում, ուիտի, սիկարէթ, ճագ, տէրոր, կանկըսթէր, ալէլուիա: Իսկ հայերէնէն անուած է մահն բառը միայն, զայն միջնադարացնելու որոշումով: Ուրեմն ի՞նչ է ձեր տպաւորութիւնը քաղաքներդ մի մասին...

- Համակ ձայն է, որով ազմկարար է: Երբ մարդիկ ազմուկ կը բարձրացընեն՝ ազմուկին դէմ պայքարելու համար, դուք ձեր լինանքի կարողութիւնով կը ստեղծէք նոր մուկ մը, ներեցէք, ազմուկ մը:

- Նիէ իմ քաղաքներդիս թերութիւնը ամողկարար ըլլալն է, իր առաւելութիւնն ալ ժամանակաշրջանիս հարազատ արտայայտիչը ըլլալն է: Քաղաքներով ստեղծուած գործ մը ի՞նչպէս կը գտնէք...

- Կը գտնեմ ճաշակաւոր գործ ու միտմանակ՝ գործնական ճաշակ:

- Ուրիշ ի՞նչ դիտողութիւն ունիք...

- Ըսեմ. ինչպէս աչքէ աչք կը տարբերի անտողութիւնը, ականջէ ականջ ալ կը տարբերի լողութիւնը: Արեւելեցիներս ոչխարին ձայնը կը լսենք «մէ՛», մինչդեռ Ծրանսացիները նոյն ձայնը կը լսեն «պէ՛», Մենք ոչխարի ձայնին կ'ըսենք «մայնի», «մէ՛» լսելու համար, իսկ Ծրանսացիները նոյն ձայնին կ'ըսեն «պէլէն», «պէ՛» լսելու համար: Աքլորին ձայնը մենք կը լսենք «կուկուլիկու», մինչդեռ Ծրանսացիները կը լսեն «քոքորիք»: Կը տեսնէք որ ազգէ ազգ տարբեր կերպով կը լսուին ձայները: Գուցէ կան ժողովուրդներ ալ որոնք ոչխարին ձայնը կը լսեն «պէ՛», իսկ աքաղաղինը՝ «կոկորիկոր»: Ուրեմն զանազան ազգերու պատկանող ընթերցողները պիտի չկոթուին ձեր շշուկներէն ու ժխորներէն, ձեր տուած ձայներէն:

- Լաւ ըսիք: Բառարան մը կը հրատարակենք: Յիսուն-վաթսուն էջնոց բառարան մը բաւական է բացատրելու

Համար ամէն բան: Անունն ալ կը դնենք
Ֆոններէնէ բառաբան: Ուրի՛շ դիտողու-
թիւն...

- Ձայները լսելու համար բաւական
է սկանչ ունենալը: Իսկ լսուած ձայնե-
րը թույլթիւն վրայ արձանագրելու հա-
մար կը բաւէ պարզօրէն դրել գիտնալը:
Ուրեմն ըստ ձեզի, այբուբենը ճանչցող
ու խուլ շեղող ամէն մարդ կրնայ բա-
նաստեղծ ըլլալ: Հապա ո՛ր մնաց տա-
ղանդը, արուեստը, մտածումը, զգա-
ցումը, երեւակայութիւնը, թո՛խը,
խորացումը, կշռոյթը, ներդաշնակու-
թիւնը եւայլն:

- Չարաշար կը սխալիք: Հանճարեղ
հարց մը կոյ ձայները ոճաւորելու, ու-
ղեւորելու, դասաւորելու, դաշնաւորե-
լու: Կայ տակաւին ինքնատիպ ձայն մը
դետեղել, որ հաւասար է դիւտի: Ձայն
մը, որ կը պատկերացնէ գործողութիւն
մը, կը ստեղծէ մթնոլորտ մը, կ'ամ-
բողջացնէ համերգը: Կարգացած քեր-
թըւածներէս երկրորդին մէջ «Եւ ճիւղը
սիրոյ ճոտողիւնն է, իսկ զչափ շուփօը՝
համբոյրը: Ահա՛ ստեղծագործութիւնը:

- Իրաւունք ունի՞ք: Ես ալ կը ձայ-
նեմ զչափ շափ շափօ:

- «Շափ շափ շափօը ի՞նչ է:

- Մտիահարութիւն:

- Ա՛, այո՛: Ենորհակալութիւն:

- Հետեւորդներ ունի՞ք ձեր դպրո-
ցին:

- Պիտի ունենամ բազմահազար հե-
տեւորդներ, վստահ եմ:

- Այդ մասին ոչ մէկ կասկած ու-
նիմ: Իսկ ե՞րբ հրատարակ պիտի ել-
լէք...

- Երբ աշխարհի անխորժ աղմուկ-
ները դադրին:

- Եւ զալիք քերթողները ա՛լ նորու-
թիւն պիտի չկրնան մէջտեղ բերել, քա-
նի որ ա՛լ հանելիք բան չմնաց բանաս-
տեղծութենէն: Ուրեմն բանաստեղծները
միայն բան ստեղծողներ չեն, այլ նաեւ
բանաւանդներ են:

- Դեռ ուրի՛շ շատ բաներ են բանաս-
տեղծները:

- Ծիլչ է: Բանաստեղծները բանա-
հաններ ըլլալէ զատ, են նաեւ բանդա-
ստեղծներ, բանաժամատներ, բանա-
բաղներ եւ բանթողներ:



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայոց պատմութիւն, կարմիր ազազակ,
 Դարերուն խորհէն գողանչազ զանգակ,
 Որքան խոր վերքեր սիրտդ խոցեցին,
 Քու վագրին ճամբան առջեւդ գոցեցին,
 Բացին յրամատ ուռնրուդ դիմաց,
 Ձիւզ բարձունքդ տապալեցին ցած:
 Արինուշտ մարդիկ դեռ չելան ատեան,
 Զուգելով դարձաք դու սորի մասեան:

Լըսէ, լըսէ ինձ, դու խօսքս լըսէ,
 Անցածն անցեր է, տարբեր է ներկան,
 Կը փայլի արդէն Հայոց սպասան:
 Անցեալին տուրքը, - տուրքին տակաւը, -
 Մենք պիտի գանձենք, բանակ ալօտը,
 Մեր հանդերուն մէջ լոյսը սերմանենք,
 Վազեմի մուքը հեռունք վանենք...:

Մենք կը թօթափենք շառերդ բոլոր
 Եւ կը գարդարենք քեզ աստղերով նոր:
 Նարդասով կ'օծենք, մաշկով ամէն գիր,
 Թագ ու մակամով կ'օծենք մեր երկիր:
 Նօք Տիգրաններով, Վարդաններով նոր,
 Խնձոյք սարքերով կը կազմենք թափօր...:

Խի՞նդ ու խնձիղ կը սնկենք մենք քու մէջ,
 Զահեր երփներանգ, կանթեղներ անշէջ:
 Մտքի գոհարով, յոյսով բոցակէզ,
 Հուրերով անմար կը գարդարենք քեզ:
 Շաղի ու շուրի շատրուն կ'ըլլաս,
 Բարկ գիճու մտան, գոհար ու ալտաս,
 Լոյսի համբարուն, յոյսի քանգարան, -
 Յուսկ կը դնենք ննգուքեան քերան...:

Յիշէ, մի մտնար, որ մենք միշտ Հայ ենք.
 Մերք կ'ընկրկինք բայց չենք փախչիր երբեք,
 Զենք լքեր ինչքը մեզ աւանդ սրտած,
 Տեղին արիւնով նախադրծուած:
 Ինկած էինք մենք, ստքի ենք ելած,
 Թաղեր էին մեր աւելին քան կէս,
 Անա մենք նարէն մտեր ենք կրկէս:
 Հայոց պատմութիւն, ազազակ կարմիր,
 Ծքէ անգամ մ'ալ ննդեն մեր երկիր, -
 Կ'ըլլանք մենք կայծակ, կարկուտ ու մրրիկ,
 Թշնամու գլխուն գերք ուսմբ կը պայթինք...:

Հասկ. Քաւիճ., 1967 ԳեղԱՄ-ԳեղԱԿ

ԲԻՒՋԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

Ա Տ Ա Ն Ա Յ Ի Տ Է Ր Վ Ի Շ Ը

- Անկարելի՛ է, հայրի՛կ, - կը պատէր Մարգրիտ, - ես չեմ ուզեր այսօր անդ մնալ. ես ալ ձեզի հետ պիտի գամ զիս մի՛ թողուք մինակս :

- Աղջի՛կս, միթէ՛ մենք եայլա՞ կ'երթանք-կոր, կամ թէ՛ երկիրնե՞ր չըջնու ու նաւասարգեան քէ՞՞ք ընելու, որ դուն զրկանք կարծես մեզի հետ չդալը, - փորձեց զայն հունդարտեցնել հայրը, - մենք կ'երթանք անորոշ խաւարին, դէպի դժոխքի ճամբան : Իսկ ո՞ւր պիտի գաս մեզի հետ : Ես քու բարիքիդ համար կարգադրեր եմ որ այստեղ մնաս տպահով :

- Ո՛ւ՛, - կը ցնցուէր տակաւին Մարգրիտ, - ես չեմ բաժնուիր ընտանիքէս : Աղատի՛նք թէ մեռնինք՝ միասին. մայրիկի՛ս հետ, եղբայրներու հետ, քեզի՛ մօտ, - սկսաւ լալ Մարգրիտ՝ թարթիչներէն ուլունդ-ուլունդ մարգարիտներ թափելով :

Այդ պահուն էր՝ փողոցի ծայրէն դարձեալ բարձրացաւ կառավարուտան մունետիկէ զուժկան ձայնը, որ ընդհատ-ընդհատ կը դռչէր թրթրէնով :

«Լսեցէ՛ք, հէ՛յ էհալի, հմացայ-չիմացայ ըսող չմնայ... Երե՛ք օրէն սկսեալ՝

Մէկ շարքուան ասեմանին, Ամէն կեալուր, Թէ՛ էքմէնի, Թէ՛ կաթուիկ, Թէ՛ Բըբուտ, Ի՛նչ խընդըր-խայըն ալ ըլլայ, Պիտի քշուի քաղաքէն, Երթայ սիւրկիւմ ու փուրկոււմ... Լսեցէ՛ք, հէ՛յ էհալի, հմացայ-չիմացայ ըսող չմնայ...»

Լսեցին հայր ու աղջիկ : Մարգրիտին փոքր եղբայրները պատշգամը վաղեցին՝ դիտելու թուրք լաճերու վոհմակը, որ մունետիկին շուրջ օղակ բռնած՝ յանկերգով կը կրկնէր անէծքը ու կը զուարճանար ծափ զարնելով :

«Ի՛նչ ալ ազուր կը կամչես, Տէլլալ-պապա, ճորէ՛ն կրկնէ - Ամէն կեալուր խընդըր-խայըն Ի՛եպի սիւրկիւմ ու փուրկոււմ...»

Բողիկ թաղատէրերու խառնաղմուկ թափօրն էր, որ կ'անցնէր :

Տան ներքնասենեակէն, Մարգրիտին մայրը՝ Տիկին Սաթիկ, որ ընտանիքին գաղթի պատրաստութիւնով կը դառնար, ձկնի գործը, վաղից, եկաւ իր հեկեկացող աղջկան մօտ:

— Մի՛ լար, ետպրի՛կու. ես քեզ ինձմէ չեմ բաժնոր, — բաւ անոր արցունքները սրբելով, եւ իր ամուսնոյն դաճանքով յանդիմանեց, — դուն ալ, ա՛յ մարդ, համբերէ՛ քիչ մը. թող անցնին սա երկու-երեք օրերը. թերեւս նորէն ավփ մը զայ, ամէն մարդ իր տունը-անդը մնայ: — Ավփ-մավփ չմնաց այլեւս — ողբաձայն դուրսը շարժեց Մազուտ աղան, — ամէն Հայոցի դէպի մահ ու մավփ կը քլուի... Չեւսա՞ք ի՛նչ թշուառ հօտերու նման ճամբաներուն թափուած անցան ասկէ հերոս Ջէյթունի ու Հածընի Հայերը՝ այր, կին, ծեր ու մանուկ իրարու ուսին կոթնած... Մե՛զ ալ անա աղաչէս պիտի խարաղանեն, քչեն, ասնին չէօրերուն... — Հապա՛, — անդրադարձաւ Տիկին Սաթիկ, — Ատանայի Հայութիւնը զե՛րծ պիտի մնար ազատանքէ՛ վալիին ու Փաշաներուն խօսքովը... — Այո՛, — հաստատեց Մազուտ աղան, — չորս ամիսէ ի վեր գաւառները կը պարզուին իրենց ամբողջ Հայ բնակչութենէն, եւ Ատանայի թուրք երեւելիները ամէն հաւաստիք տուեր էին, թէ մենք պիտի շտեղանանուէինք, որպէսզի երկրին անտեսութիւնը չքայքայուի... Իայց անցեալ շաբաթ Պոլսէն եկաւ-բուսա կեղերոնական կառավարութեան այդ նեխած բաները, որ զաղտնի ժողովի մը մէջ դրողոր է վալին ու թուրք աւազանին՝ թէ Վրոց շատ սխալ կ'ընէք Ատանայի կեանքները աքորէ զերծ պահելով: Որովհետեւ Ինկիլիդ ու Ֆիրէնի մարտանաւեր շարունակ կ'իլիկեան ջուրերու վրայ կը շրջին. եւ եթէ օր մը անոնք Տօհրթ-Եօլի ու Գարաթալի ծովեզերքէն ցամաքահանում մը փորձեն, այս խաչընկերը կը միանան անոնց ու մեր խէրը կ'անելին, 1909-ի ջարդերու վրէժը լուծելու... Լաւ մտածեցէք. տեսե՛սական շահը փոքր հաշիւ մըն է՝ ցեղա-

յին շահուն դիմաց: Եւ այդ ժողովին, միաձայն երդումով որոշեր են դէմ չեկնալ Ատանայի ալ Հայոց աքորին:

— Երկու օր առաջ, — ակնցուց խեղդուկ ձայնով մը Մազուտ աղան, — Հայ վաճառականներս կանչեցին Մեծ Սերայ. երեսուն հօգիտ շափ կայինք: Ու հոն, վալին ու Փոլիս-Միւսիլիին՝ ծանուցին, թէ Պոլսոյ կեղերոնին հրամանով մե՛նք ալ շարժուան մը պայմանաժամով պէ՛տք է դանդաղանալին գաղթի ելլէինք... Այլեւս ժամանակ չկորսնցնենք. դուն զնա՛ ճամբու պատրաստութեան դործերը շարունակէ, — բաւ իր կնոջ, իսկ Մարգրիտին դաճանքով յարեց, — աղջի՛կու, դուն ալ թու դպրոցի ծրարները պատրաստէ: Ես երթամ վաճառասան արարանները հաւաքեմ կղպեմ:

Դատապարտեալներու նման՝ մայր ու աղջիկ լուռ քաշուեցան սրահէն:

Ամէնէն առաջ, հարկ էր որ անոնք կարէին-լրացնէին իրենց ընտանիքը տարագրութեան դաշտերուն մէջ պատասպանելիք փոքրիկ վրանը՝ ծրար մը Թրեփանի կտակէն, զոր երկու օր առաջ սիրել տուած էր հայրիկը: Յետոյ՝ հարկ էր մանուկ ընտանիքի իւրաքանչիւր անդամի մէջքի կամարին շարք-շարք զետեղէին-կարէին ոսկի դրամները, հայրիկին, մայրիկին, և դարձաներու կամարներուն մէջ՝ անտես երկրներով: Ու դեռ կար անշուշտ՝ ուստեսեղէններու տուրքակները լեցնելու եւ անհրաժեշտ դոյքերու տեճկերը կապելու աշխատանքը: Ի՞նչպէս պիտի կարենար եօթը հողիւնոց ընտանիք մը երկու-երեք օրերու մէջ պատրաստուիլ աքորի ճամբուն... — Մայրի՛կ, ես ալ ինծի համար կամար մը կարեմ, մէջը ոսկի շարեմ, — բնուա նորէն Մարգրիտ, — դու՛ն ըսիր, թէ զիս հոս միմակ չես թողուր:

— Աղջի՛կու, — լրջացաւ ձայնը Տիկին Սաթիկին, — դուն հաստիկ տուած ֆիւտան մըն ես այլեւս. մենք քեզ սօ՛ւր կըրնանք տանիլ անվախ՝ այդ չէօլի դայլերուն մէջ... Թող ծօրաքո՛յրդ ալ դատէ

աճա... Հանդու՛րտ մտածէ՛. հո՞ւ Ամե-
րիկեան Գոլէ՛նը՝ զիչերօթիկ կը մնաս ա-
պահով, սեւ գոթիքէն կ'ազատիս, մին-
չեւ այնքան խաղաղի, եւ Աստուած տայ
մենք ալ ողջ վերադառնանք: Ի՞նչ ընենք,
պիտի համակերպինք մեր բախտին, դո՛ւն
ալ, մենք ալ:

- Իոյլորովին ալ առանձին չես այս-
տեղ, - հանդարտեցուց զայն Զարուկ
մօրաբոյբը, - ե՛ս ալ աճա կը մնամ հոս,
Միսիսիսարատան մէջ:

Վրոյ հասու Մազուտ աղան.
- Ես արգէն Գոլէ՛ն դօցի եկայ, տա-
րեկմարը լման յանձնեցի կանխիկ, 40
օսմ. ոսկի. ամէն ինչ կարգին է:

Լացի ու վէճի ժամանակ չկար այլ-
եւս:

և

Յաջորդ առաւօտուն, Մարգրիտ՝ իր
հօրը եւ փոքր եղբորը հետ՝ կը մագլցէր
Քէփէ-պաղի Ամերիկեան Աղջկանց Գոլէ-
ճին վառիվիւրը: Երեք տարիներէ ի վեր
քալեր էր այդ համբան՝ տունէն-դուրս,
ընկերուհիներուն հետ ուրախ-ստոտո-
տուն. բայց ո՛րքան տաժանք կար այս
անգամ այս վերելքին մէջ՝ հօրը, եղբօ-
րը, խանութի աշկերտին եւ իր ուսերուն
ճանրացող ծրարներով: Կը կարծէր Գոգ-
զոթայի անվերջ վերիւք մըն էր կ'ընէր,
անգամ մըն ալ ետ տուն չվերադառնալու
դատապարտուած:

Յանկարծ, Հայոց Ս. Աստուածածին
եկեղեցիի փողոցի դարձէն բարձրացաւ
խորունկ ձայն մը, որ մօտենալով կը
ծառայէր ամբողջ թաղին մէջ: Կանգ ա-
ռին շուրս համբողջները. կարծեցին դժ-
խեմ մունտարին էր նորէն, որուն շար
ստահակներու բանակին չհանդիպելու
համար՝ պահ մը մտածեցին փոխել ի-
րենց համբան: Բայց ո՛չ, այս ձայնը ու-
րիշ էր... Մելամաղձոտ, երկար ալիք-
ներով յորդահեղեղ երգ մըն էր, անզա-
նազանն թառերով, բայց կակուշ, լի-
ցուն առատութեամբ հոսող ձայն մը,
սի՛րտ դրառող բան մը:

Երբ երգիչը մօտեցաւ դարձուածքին,
համբողջները տեսան հսկայ զանգուա-
ծով մարդու հասակ մը:

- Ս', մուքացիկ Տէրվիչն է, - գի-
տել տուաւ հայրիկը հանդարտած շուն-
չով մը, - այս վերջին շաբաթներուն՝
կ'ըսէին, թէ յաճախ ան կ'երեւի Առա-
նայի մէջ, շաբաթ մը երկու կ'անհետի,
յետոյ նորէն կու դայ կ'անցնի, Մէքէի
հանիներէն է:

Աքաբական լայն ու երկայն պարե-
զօտի մը մէջ փաթթուած՝ անապատի
իշխան մըն էր Տէրվիչը, գլխուն Էկիլ մը
սեղմած, որուն տակէն դանդուբ-դան-
դուբ մազերու սեւ խոպոպիկներ կ'օրօր-
ւէին: Աջ ձեռքին ունէր ծուռ ու երկայն
զաւազան մը, նոյն թելէն կախ՝ զոյգ մը
սեւ ու դեղին համբիշներ, որոնք օդին
մէջ կը հօծէին քալած պահուն: Զախ ու-
սէն վար թոյլ ձգուած ունէր արարական
մեղմալ մը, որուն տակը կ'երեւէին կա-
շեղէն սոպրակ մը եւ ջուրի դիմուրա-
կան մաքարիւս մը, մրան անշարժ հանգ-
լած՝ իր բաց ափը: Ուղեբուն հազած
ունէր գերման դիմուրական հաստ մու-
ճակ մը:

Վայրկիան մը անոնք դէմ առ դէմ
եկան համբու խաչածեւումին վրայ:
Ոսնձած երեսներով, բայց փայլուն աւ-
ջերով թուխ, լեցուն գէմք մըն էր տէր-
վիչիւր, կուրծքը կիսաբաց, մազզոտ ու
նոյնպէս խոր պղնձագոյն: Հայրիկը ըն-
տանի շարժումով մը անոր բաց ափին
ձգեց ութնոց արծաթ մը: Այդ պահուն
էր Մարգրիտ նկատեց որ Տէրվիչի ձախ
բազուկը փաթաթուած էր կաշիէ սեղմ
կապերով, ու խղճայոյզ մտածեց, թէ
վե՛րք մը ունէր ան արդեօք իր թեւին:

- Ձեր բախտին համբան բա՛ց ըլլայ,
աղա՛ս, - մաղթեց Տէրվիչը՝ երբ իր աջ
ձեռքովը կը վերցնէր անշարժ ձախ ափին
ձգուած արծաթը: Կը խօսէր արարեբէնով
խան, կիսանշիւն թրքերէնով մը:

Անոնք ժպտեցան իրարու եւ անցան,
չարունակեցին իրենց վերիւքը: Տէրվիչը
կանգ առաւ, դիտեց շուրջը, եւ ինքն ալ
հետեւեցաւ վերելքի համբուն, նոր եր-
գով մը: Կարծես մեծ օփերայէ մը ելած՝

աշխարհը լեցնելու շափ շունչ ունեցող երգիչ մը ըլլար ան: Իր հոտուն ձայնը կը հեղձողուէր փողոցներուն, կ'արձադանգէր թաղերուն:

Երեք ճամբորդները, իրենց դանդաղ վերելքին վրայ, երբ շունչի մը համար կանգ առին ու ետին դարձան, տեսան որ Տէրվիլը կեցեր էր Ամերիկեան Միֆոնտարտան մեծ դրան առջեւ, միշտ երգելով ու երգելով, մինչեւ որ դուռը բացուեցաւ ու ան ներս մտաւ, դադարեցաւ երգելէ:

Շարունակելով իրենց ճամբան, երբ Մարգրիտ եւ իր հայրն ու եղբայրը Գոլէճի բակը մտան, վերի պատշգամէն կանչեց օրիորդ Թուրքիան, ուսուցչուհին:

- Մարգրիտ, Մարգրիտ, վէ՛ր եկէ՛ք...

Վերը, դրասենեակին մէջ, դիբենք ընդունեցին Գոլէճին տնօրէնուհի երկու ամերիկացի Գոյրները:

- Գուն մեր զաւակն էս, - ըսաւ քայքայածայն Միս Վիպ՝ ձեռքը հանդիպեցնելով Մարգրիտի ուսին, - Քու մայրիկը ու մօրաքոյրդ մեր Գոլէճի առաջին չրջանուարտներու խումբէն են, ու զուն ալ մեր հարազատն էս: Մենք քեզի պէս ընդունած ենք ուրիշ տասնեակ մը Հայ աղջիկներ էս, մէկ հասար քու դասարանէ՞ք՝ Սերունը: Ոչինչ պիտի պակսի ձեզի աշտակ: Ձեր փոքրիկ տունը ձգած՝ Քու մեծ տունիդ մէջն էս այլեւս:

Իր ընտանի դպրոցական շրջանակին մէջ ինքզինք ապահով գըսցած՝ պահ մը Մարգրիտի դէմքէն փարատեցաւ մտայն ամպը: Սակայն երբ հասաւ բաժանման վարկեանը, թիւերու անքակտելի պըրկումով մը ինկաւ վերտօնին հայրիկի միտին ու լացաւ, ապա երկար-երկար փաթթուեցաւ, համբուրեց իր եղբայրը:

- Ինձի նամակ պիտի գրէ՞ք՝ ո՛ւր ալ երթաք. չմոռնա՛ք...

- Աղջիկիս, - մխիթարել փորձեց զայն հայրը, - մեզ բաժնողն է միայն վայրն ու ժամանակը եւ ո՛չ երբեք սէրը: Թայց դուն միմիայն ինքզինքդ պէտք

է մտածես այսուհետեւ. պիտի դբադիս Քու դպրոցական դործերովդ՝ միայն, լըբը չապատուած՝ այսքան ազնիւ ընտանեկան շերտութեամբը Քու տնօրէնուհիներուդ եւ ուսուցչուհիներուդ: Այստեղն է այլեւս Քու տունդ:

Մարգրիտ նորէն հօրն ու եղբորը ընկերացաւ, մինչեւ դպրոցի բակին դարպասը: Ու երբ դուռը բացուեցաւ որ դուրս ելլեն, տեսաւ՝ հոն էր հասեր արգէն Տէրվիլը, ու կրթնած իր զաւազանին՝ վերելքի շունչը կ'առնէր:

- Կեցի՛ր, ազատ, որդւոյդ բախտին նայի՛մ, - ըսաւ Տէրվիլը զուարթ:

- Մեր բախտը, - պատասխանեց Մագսուտ աղան, - ծածուկ բան չունի. անբախտ մարդոց ի՞նչ սխոփանք կրնաս բերել դուն, դնա՛:

Մարգրիտի թաց աչքերը Տէրվիլին աստղափայլ աչքերուն հանդիպեցան, եւ անոնք ճանչցան զիրար՝ ժպտի փոփոխել չուզող տխրութեան մէջէն: Օրիորդ Թուրքիան աղջիկը ներս քաշեց ու կտրեց տեսարանի ժապաւէնը:

Դպրոցին երկաթափեղէ ծանր դուռը փակուեցաւ մայրապետանոցի մը բարձր պարիսպի նման:

Հայր ու որդի վերադարձան տուն գլխիկոր, կարծես տեղ մը թանկազին դանձ մը մոռցած, կորսնցուցած: Տիկին Սաթիկ, որ գործերը լքած՝ կարծես բախտի դարձով մը իր աղջկանը վերադարձին կը սպասէր, երբ տեսաւ անոնց միայնակ վերադարձը, փոքիկեցաւ անզրպելի արցունքներով: Անխօս էին բոլորն ալ: Տունը պարզուած էր իրենց միակ աղջկան՝ Մարգրիտին շէն ձայնէն ու երգերէն: Ունայնութեան մը անդունդին դէմ էր կտրուած իրենց կեանքը. զաղթի ճամբուն խաւարը իրենց առջեւ, իսկ իրենց ետին՝ սիրտէ փրթած նաճ-նիկէրի բնկոր մը, օտար դպրոցի մը մէջ:

Երեք օր ետք, զաղթականութեան երեկոյեան շոգեկառքին համար պատրաստուած տիկին Սաթեանիկ ուզեց վերջին անգամ տեսնել իր հողահատորէկը:

Բայց երբ ամուսնայն հետ անոնք զպրոց մտան, ամալի էր բակը:

Վեր եկան:

- Երէկ, - ըսաւ տնօրէնուհին, - բոլոր աղջիկները հաւաքեցինք ու Միս Թափըրին եւ երկու ուսուցչուհիներուն հետ լեռը, նամբունե-հայան զրկեցինք: Թող հոն մնան ամառուան այս օրերուն, կառավարատան քննիչներու աչքերէն հեռու, մինչեւ անցնի քաղաքին սա իրաբանցումը...

- Ա՛խ, ճանս-ճիկէրս, աղջի՛կս, վերջին տնդամ զոնէ հետդ լայի՛, - անմիտիթար կ'ողորմար Տիկին Սաթիկ:

Կարելի չէր սփոփել հէք մայրը: Աքտրանքի խաւարէն աւելի՝ զինք կը սարսափեցնէր իր աղջկան բաժանումը:

- Առէ՛ք, - ըսաւ Մազսուտ աղան տնօրէնուհիին, - սա մեր տան բանալին է, եւ այս տրցակն ալ՝ մեր մաղազաներունը: Տուէք Մարգրիտին: Եթէ դեռ դրամի պէտք ունենայ, կ'երթաք Զարուկ ծօրաքայլին հետ, յարմար ապրանքներ կը զատէք, կը ծախէք, իր ծախսերը կը զուսցնէք:

Եւ իջաւ սեւ վարազոյրը բաժանման:



Հօկտեմբերի վերջին օրերուն, երբ Լամբրոն հովոցէն վերադարձան Գոլէճի աղջիկները, Ատանա հսկայ քաղաքը ամայացած էր արդէն: Ամառուան մը ընթացքին, հայեր էր Հայութիւնը: Գիւղերէն մանուսանդ, երբ Թէփէ-պազի դպրոցի բարձունքէն անոնք դիտէին դաշտատարած քաղաքը, կեդրոնական մասի հայ թաղերը մթութեան ահաւոր սուպի մը տակ ընկղմած կը վայելին: Տուներուն փակ փեղկերը անդնդային խորութիւն մը կը ձեւացնէին: Գերեզմանային դատաստան մը տիրեր էր երբեմնի շէն թաղերուն:

Ներքը, դպրոցին բակը, լեցուած էին նոր դէմքեր, նոր ուսուցիչներ, նոր աղջիկներ՝ Թուրք պէյերու, սպաներու տուներէն: Ամէն տեղ միայն թրքերէն

լեզուն կը հնչէր: Ծրանսերէնը ջնջուած էր, Հայերէնի տեղ չէր մնացած ուսման ծրագրին մէջ, գերմաներէն տարածուած էր ամէն զասարաններուն վրայ, իսկ անգլերէնը՝ արտօնուած միայն «Ամերիկերէն» անունի տակ:

Դպրոցի թուրք նոր ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու երթեւեկէն զատ, դուրսէն որեւէ յարաբերութիւն չկար:

Այդ ամայութեան մէջ միակ շէն ձայնը, որ կը լսուէր փողոցներէն՝ երկու-երեք շաբթը անգամ մը՝ Տէրվիչի հրդեհ էր: Հեռաւոր թաղերու բեմէն կը բացուէր այդ ձայնը ու հեռզհետէ մօտեանայով կը վերածուէր հսկայ օփերայի մը, ամայացած տուններու պատերէն արձագանգելով՝ կու գար կը հեղեղուէր դպրոցի մեծ դրան առջեւ:

Աղջիկները կը վազէին, կը հաւաքէին դարպասի գահիթին, երբ հասնէր Տէրվիչը, օփերայական փոխաւարտութեան մը պէս ձայն կը ներգաշնակէին անոր ձայնին, մինչեւ որ վերէն՝ զուէցերիացի գերմանախօս ուսուցչուհին՝ Մատմուադէլ Պերոլ՝ իջնէր, հրաման ընէր դունայտնին, բանալ ծանր փեղկերը ու ներս ընդունելու երկու Տէրվիչը: Աղջիկները շուրջը կ'առնէին զուարթ ճուռղիւնով, եւ տն տէն մէկուն երջանիկ մաղթանք մը կ'ընէր: Մէկ ոտքին վրայ կ'իսակազ հակած, նորէն ու նորէն կ'երգէր ան, մինչեւ որ տնօրէնուհին սենսակէն գար ու յանձնէր խնամքով փաթաթուած իր ծրագրը, զոր կաշիէ իր խուրձինը կը նետէր, ու կը շարունակէր իր երգի ճամբան:

- Ի՞նչ է Տէրվիչին երգածը, էֆէնտի՛, - հարցուց Մարգրիտ իրենց թրքերէն լեզուի ուսուցչին, որ արարազէս մըն էր:

- Արարեքէն կ'երգէ, - պատասխանեց էֆէնտին, - բայց բոլորովին տարբեր խօսք ու եղանակ ունին իր երգածները, քան արարներու անապատական երկարաձիգ երգերը: Թաշորդ գայուն, ես տող առ տող երգել կու տամ, զբի կ'առնեմ, կը թարգմանեմ ձեզի համար:

- Գրի՛ առ, էֆէնտի՛, մենք ալ սոր-
վինք, - ըսին Մարգրիտ ու Սերոն:
Ու յաջորդ գալուեն, Տէրվիլը տը-
ւաւ իր երգին բառերը:

Այս տէրտը իմ տէրտս չէր,
Ո՞ւրկէ եկաւ իմ գլխուս,
Սիրտիս բացաւ հագար վէրք:
- Զէօլէն եկաւ իմ գլխուս,
Սուրտ՛վ եկաւ իմ գլխուս:

Ես Քէյֆի տէր մարգ էի,
Մարդու կարօտ մնացի,
Կալի, մալի՛ տէր էի,
- Հացի կարօտ մնացի,
Լացի կարօտ մնացի:

Թափառակամ աշխարհիս,
Իմ վէրամ տունս կը փնտռեմ,
Շէն ու պայծառ օրերուս
- Իմ երագներս կը փնտռեմ,
Իմ սիրտի լա՛րս կը փնտռեմ:

Ու գերմանախօս Մատուազէլ Պերու
նստաւ, եղանակը դաշնակի վրայ նօթայի
ուռաւ, Մարգրիտ ու Սերոն սորվեցան
երգը: Տէրվիլէ յաջորդ գալուեն, անա-
կընկալուրէն ասոնք ալ ձայն ներդաշնա-
կեցին անոր երգի յանկերգին:

- Զէօլէն եկաւ իմ գլխուս,
Սուրտ՛վ եկաւ իմ գլխուս:

- Հացի կարօտ մնացի,
Լացի կարօտ մնացի:

Իսկ վերջին տունը ամբողջ երգեցին
միասին:

Թափառակամ աշխարհիս,
Իմ վէրամ տունս կը փնտռեմ,
Շէն ու պայծառ օրերուս
- Իմ երագներս կը փնտռեմ,
Իմ սիրտի լա՛րս կը փնտռեմ:

Այդ օրը, դպրոցին բակը վերածուե-
ցաւ բացօթեայ օփերայի մը: Ուսուցչու-
հիներ ու տնօրէնուհիներ ելան պատըչ-

ւամ, ու Տէրվիլը նոր-նոր երգեր հնչե-
ցուց:

Ես Սուլբանի ազուն եմ ազատ,
Լեռներ, դաշտեր, անապատ,
Նրկրէ-երկիր կը տարամ,
Զրկայ ինձի փակ սանման:

.....

Հորիզունը երդեհ ատեր,
Կ'ըսես՝ կ'այրիմ մեծ ամառաներ,
Բայց շառայլներն այդ կարմրագոյն
Թո՛ցն են ծագող արշալոյսին:

- Սիրոյ երգը երգէ, Տէրվիլ-պա-
պա, սիրո՛յ երգը, - ըսաւ ուսուցիչ է-
ֆէնտին, որ անմիջապէս կը թարգմանէր
ամէն երգ:

Տէրվիլը հակեցաւ մէկ ոտքին, ինչ-
պէս էր սովորութիւնը, ապա իր դաւա-
դանին կռթնեցաւ ու երգէց դարձեալ:

Ես աստուածները առաջին՝
Սէրը այսպէս սանմանցիմ -
- Սէրը՝ սիրտին մէջ մարդուն՝
Զըլլա՛յ ասանց արցունքի,
Բայց մարդ չըլլա՛յ իմաստուն՝
Միմչել սիրել չըտրվի...

- Այս երգը իմ երկս պիտի ըլլայ, -
ըսաւ ուսուցիչ էֆէնտին, - այս երգը
ինձի՛ համար պիտի սորվիք, աղջիկ-
նե՛ր...

Ու Մարգրիտ ու Սերոն սորվեցան
ի՛նչ նոր երգ որ բերաւ Տէրվիլը:

Այնուհետեւ, ամէն անգամ որ ըն-
տանի այդ ձայնը հասնէր հեռուներէն,
կը վազվզէին դպրոցի թուրք ողջիկները
դէպի դուռը, գոչելով:

- Մարկօ, Մարկօ, Տէրվիլը եկաւ:

Ու Տէրվիլը կու գար, Մարկոյին հետ
իբ երգահանդէսը օտարէլու դպրոցի բա-
կին մէջ: Եւ այնքա՛ն կը զուարթանար
Տէրվիլը, որ իր շփոթանքէն՝ իր խօսած
տեսակ-տեսակ լեզուները իրար կը խառ-
նէր: Ու փոխանակ ի՛նք նուէրներ ստա-

նալու, կը բանար իր կաշիէ խուշոր խոր-
նիւն ու կը պարպէր աղջիկներուն, մէ-
կուն՝ շաբար-շաբուա, միւսին՝ մանեակ,
հայրիկ...

- Այսքան շատ բաներ դուն ուրկէ՞
կ'առնես, Տէրվիշ-պապա:

- Գերման գինուտրներու բանակա-
տեղիներէն կը հաւաքեմ, - կ'ըսէր ան,-
փակ հորիզոն չկայ իմ առջեւ, ես ամէն
տեղ կը շրջիմ:

Ու նորէն կը սկսէր իր երգը.

«Սո Աւելքամի ուղտն եմ ազատս...»

Այդպիսի խոնամի մէկ պահուսն էր,
երբ Սերոն անզուշտութեամբ ձեռքը
զարկաւ Տէրվիշ անշարժ, փաթաթուած
ձախ բազուկին, մէջէն ցաւի պէս խլըր-
տուք մը լսուեցաւ: Մնացուեցաւ Տէրվիշը:

- Ի՞նչ է, Տէրվիշ-պապա, բազու-
կիդ վէ՞րք ունիս, - հարցուց Սերոն, -
ներսուցի՞նք, ցաւացուցի զեզի...

- Փշուրած բազուկ է, աղջիկս, -
յարեց Տէրվիշը, - ձեր բժէշկին կ'եր-
թամ ամէն անգամ, ան կը փոխէ վէր-
քերս:

«Ձեր բժիշկը» կուսած Տոքթոր Հա-
վուսն էր, Ամերիկեան Հիւանդանոցի
պատասխանատու միտինարը: Եւ, աբ-
ղարեւ, երբ Մարգրիտ եւ Սերոն հետա-
քըքըրուեցան, իրենց հայ ընկերուհիներ-
րէն մին, որ հիւանդանոցի մէջ աշխա-
տանքի արուած էր դպրոցի կողմէ, պատ-
մեց՝ թէ Տէրվիշը ամէն երկու-երեք շա-
բաթներ անպատճառ կու գար, Տոքթ. Հա-
վուսն զայն կ'առնէր առանձինը իր ներ-
քին դարձնաւորունը, անոր թեւին փա-
թոյթները կը փոխէր, ու կը նստէր, կը
խօսակցէր հետը...

Աղջիկը ըսաւ, թէ, - շատ իմաս-
տուն Տէրվիշ մըն է այս, - կ'ըսէր Տոք-
թորը, - աշխարհ ճանցած մարդ է, Պո-
զանթընն մինչեւ Պաղատա ու Գահիրէն
մինչեւ գերմանական Ափրիկէի Քէյփը՝
ոտքի տակ առած, տեղեակ՝ ամբողջ աշ-
խարհի բաներուն... Սարսափելի տեսա-
րաններ պատմեր է իր տեսածներէն՝ Հա-
յոց քաղաքների ճամբուն վրայ, Սփրատ
գետի ափերուն: Թուրքիոյ մեծագոյն
հարցը ցեղային բախումի հարց մըն է,

ըսած է ան, բազմազան ցեղային տարբե-
րէ կազմուած՝ Թուրքիան չի կրնար վե-
րապրիլ ու տեսիլ, եթէ չգտնէ իր ցեղա-
յին զտութիւնը: Այս է, ըսեր է ան, Հա-
յոց տեղահանութեան ու բնաջնջումի մա-
սին գերման եւ թուրք վարիչներուն բա-
ցտարութիւնը:

- Ի՞նչ լեզուով կը խօսակցին ա-
նոնք, - հարցուց Մարգրիտ:

- Ձեմ կրնար որոշ ըսել. բազուկին
փաթոյթները փոխած ատեն, բացարձակ
լուռ կը մնան երկուքն ալ: Յետոյ առան-
ձին նստած պահերուն, սենեակէն կը
լսուին գերմաներէն բառեր, երբեմն անգ-
լերէնով խառն:

Դպրոցի աղջիկներուն հետաքրքրու-
թիւնը հետզհետէ կ'աճէր Տէրվիշին
չուրջ, եւ անսակ մը ակնածանք ալ կը
սկսէին զգալ անոնք այս տարօրինակ
այցելուին հանդէպ, որ Տոքթ. Հավուսի
պէս բազմադարձ զիտնական մարդ մը
զայն գէ՛մը կը նստեցնէր ու հեռը մամե-
րով կը խօսէր:

- Տէրվիշ-պապա, դուն քանի՞ յե-
ղու գիտես, - համարձակեցաւ հարցնել
անգամ մը Սերոն:

- Աղջիկս, ես աշխարհ շրջած մարդ
եմ, եւ իմ բախտս ինձի սորվեցուցեր է
բազում լեզուներ: Գիտեմ արաբերէն իմ
լեզուս, գիտեմ պարսկերէն, կը խօսիմ
ձեզի հետ ահա թրքերէն, գիտեմ նաեւ
գերմաներէն, ու շիշ մըն ալ արգելուած
լեզուները՝ անգլերէն ու Ֆրանսերէն...

- Հայերէն ալ գիտե՞ս, Տէրվիշ-պա-
պա, - հարցուց Սերոն զրեթէ յանկար-
ծակիի անզուշտութեամբ մը:

Տէրվիշը շունչ առաւ, զիտեց իր
չուրջը ու պատասխանեց.

- Ես կը սորվիմ միայն ա՛յն լեզու-
ները, որոնք հայրենիքի ու պետութեան
սէր ժողովուրդներուն են... Եթէ Հա-
յերն ալ ունենան հայրենիք՝ անոնց լե-
զուն ալ կը սորվիմ...

Քանզա՛ն ձեռագեցան շուրջը ա-
ռած թուրք աղջիկները:

Բայց Տէրվիշին համար՝ յամենալու
ժամը չէր, Ելաւ ու քուլից:

Խուճրին մէջ չկար իր Մարկոն այդ օրը: Ան՝ իր սենեակին մէջ փակուած՝ կը կարդար և արտասուազօծ աչքերով, կըրկին ու կըրկին կը կարդար առաջին նամակը, զոր ստացած էր իր աքտորեալ ընտանիքէն:

Անուշիկ տոյրիկս,

Մեր շուրջը աշխարհ կը երգեհուի, բայց քու կարօտդ մեր սիրտը աւելի կ'այրէ: Շոգեկառէր մեզ առաջին գիշերը տարաւ նետեց Օսմանիէ: Հոն մնացիմք շարաք մը ցեխերու մէջ: Անկէ եզան կառք մը վարձեցիմք և ծամբայ ինկամք, սնցանք՝ գրաստով ու ետտուտն քաղաք հագարաւոր Հայերու կարաւաններէն: Կանգ առնելով Հասանդէյի ու Թախթաֆէօսիի, ըրինք տաճանակիր ծամբարդարիւնը Ամանու լեռներու վրայէն: Սահելով-հլիւով՝ հասանք Ինթիլիի մեծ Թուճէյին: Այնտեղ կարօտով մեզ դիմաւորեց Պարոն Մեհր՝ մեր նախկին ուսուցիչը: Ինք քարտուղար եղեր է մեծ Թուճէյը շինող գերմանացի երկրաշափներուն: Ամփրապէս էր հարցաւ: Լաւ որ չէք բերած հետերնիդ, ըսաւ: Հագարաներով մարդիկ կը կարտուղն այս նամբաներուն վրայ: Նրբ արձակարդ առնեմ, ես կ'երթամ գինի հոն կը գտնեմ, ըսաւ:

Եւ տաքօրինակ գազադիպութիւն մըն ալ պատմեմ քեզի- նայն այն Տէրվիշը, որ մեզի հանդիպեցաւ, հոս ալ տեսանք, որ գերման սպաներուն խուճրը կը գաւառացնէր:

Մեծն հիմա Հալայի կայարանն ենք: Ամէն օր գաղթականներ կը հասնն Եփրատի ակերով ու գացողն լուր չ'իլիւր: Հօրեղբայրենք ու մօրաբայրենք ալ գացին: Բայց հայրիկը միջոցը գտաւ և ոչ ըրաւ ցանկելով մեզի համար ապահովեց շոգեկառքով Դամասկոս երթալու տուսակները: Տարօրինակ բախտ մը եղաւ ահիկա, բայց թէ ինչպէս՝ վերջը երբ զիրար գտնենք՝ կը պատմեմ:

Մեծն հասցէ յունիմք, որ դուն մեզի գրես: Բայց մեծն կը գրենք ուրիշ որ կարենանք: Միայն թէ՛՝ ողջ ըլլանք:

Նարայրդ՝ Բենիկ

Ու նամակին անկիւնը կար ժօրը ձեռագիր երկտողը:

— Ես վրի՛կս, մեծն Աստուծոյ յանձնարած ենք, դուն միայն քեզ մտածէ:

Մայրդ

Տ

Անցան տասներեք դանդաղ ամիսներ: Մարդրիտ ընտանի գուարթ ոչ մէք էր դարձած դարձցի, Հիւանդանոցի ու միսիոնարատան: Ո՛ւր ալ երթար՝ Հիւանդանոցի ու սեղանատան մէջ ընտանիքի մէկ անդամն էր այլեւս: Մանաւանդ դարձցի փոխ-անօրէնուհին՝ Միս Թափը՝ իր ողջկան պէս անբաժան կը պահէր զայն: Անոր որդեգրին էր դարձեր: Բայց Մարդրիտ ունէր զինք որդեգրած ուրիշ մէկը ևս, Տէրվիշը, որ դըպրոց Հանդիպելուն, առաջին փնտաածը կ'ըլլար:— Ո՛ւր է Մարկոն:

Անպաճ մը, դուրդուրտո՛ւ ըսած էր անոր:

— Քեզի Ինթիլիի բարեկամէդ Երէւնէ՛ր բերած եմ:

Այս վերջին գալուն, սակայն, աշխարհը փլած գտաւ Տէրվիշը: Ո՛չ միայն չկար իր Մարկոն, այլ չկային դարձցի բոլոր ողջիկները: Ո՛ւր էին տարուեր: Շէնքերը դրուուած էին գերման, արևտըրիացի և Թուրք սպաներով:

Բացատրութեան հարկ չկար: Գերման-Թուրք ճակատին դէմ՝ անկլո-Ֆրանկ ճակատին կողմնակից պատերազմի մտած էր նաև Ամերիկան: Աշխարհի հզօրները երկու հակամարտ կրկններու էին բաժնուած: Թէեւ Ամերիկան ուղղակի Թուրքիոյ դէմ պատերազմ չէր հռչակած, բայց Թուրքիան նախազգուշական միջոցներ ձեռք առած էր ամերիկեան հաստատութեանց հանդէպ: Թոյլ տրուած էր որ Ամերիկեան Հիւանդանոցը բաց պահուի Թուրք հակողութեան տակ: Նոյնպէս Հակողութեան տակ առնուած էր Միսիոնարատունը: Իսկ Աղլիանց Գոլէնը վերածուած էր սպաներու բնակավայրի: Ամերիկացի և եւրոպացի ուսուցչուհիները Թուրքատուած էին երթալ Լամբրոն

Հովոյը, բայց Հայ աղջիկները տարուած էին անյայտ վայրեր:

Տէրվիլը ձայնը, որ հեռուէն լսեցին՝ դիման, աւարտեցի ու թուրք սպաններ զարոցի բակը հաւաքուեցան, երգով ու կանչով: Տէրվիլը շուարած կը դիտէր այս օտար դէմքերը:

- Ինչո՞ւ երգելէ զաղբեցար՝ մեզ տեսնելու, աղջիկներդ չկա՞ն տէյի տխրեցար մէկէն, - ըսաւ թուրք սպայ մը, որ առջեւի շարքին կանգնեալ էր, - է՛հ, մի՛ տխրիր. կ'երթաս զանոնք կը դռնես թուրք աղջկանց վարժարանին մէջ, Աի՛նուս գետի վերի ափին: Բայց հիմա մեզի ալ քանի մը երգ երգէ...

Տէրվիլը բռնադատեալ զուարթութեամբ մը երգեց սպաններուն: Գինովցան տոնք, երբ ան երգեց «Աէրը՝ սիրտին մէջ մարդուն, ու տեղ տուին որ նստի իրենց մօտ, ուտէ ու խմէ, զրոյց ընէ:

Իրենց մտքին իշխող մտածումը՝ կարծուածէն աւելի երկարող սա աւերիչ պատերազմն էր: Ու հիմա որ հսկայ Ա-մերիկան ալ իր թարմ ուժը նետեր էր նժարին, ի՞նչ պիտի ըլլար արգետոյ հետեանքը:

Յանկարծ, երկու աստղանիւղ թուրք սպայ մը հարցուց դերմաներէնով.

- Տէրվիլ-պապա, Փայլ մը բաց տեսնե՞ք ի՞նչ պիտի ըլլայ այս պատերազմին վախճանը:

- Փալ-բախտի տեղ չկայ, - ըսաւ Տէրվիլը, - պատերազմին ընթացքը յայտնի է արդէն: Մեր յաղթական բանակները ամէն ճակատի վրայ փոխուած կը մատնեն թշնամին: Իսկ ծովերու վրայ մեր սուզանակները վիրահարու պէս կը կլլեն տոնց խլիլիկ նաւերը:

- Հուրրո՞ւ, - զոչեցին սպաները: - Բայց վախճանը, վախճանը, - զոչեց գերման սպայ մը:

Տէրվիլը կտնդ ատաւ պահիկ մը, դիտեց երկինքի պատառած ամպերը.

- Վախճանը: Վախճանին պիտի շահին միայն հողի ժողովուրդները... Փաղաքակերթ ազգերը իրարու վրէժն պիտի գարնեն, հետապառ իշանս գետին, ու հողէն վեր պիտի բարձրանան զաղթա-

տիրեալ բնիկ ազգերը, գտնեն իրենց անկախութիւնը: «Հերոսներուն յաղթանակի դաշտը իրենց դերեղմանը պիտի ըլլայ», կ'ըսեն ամպերը, - վերջացուց Տէրվիլը:

- Կոռուղ Հերոսներուն մասին երգ մը յօրինէ, Տէրվիլ-պապա:

Տէրվիլը երկար լսեց, ու յետոյ գըլուխը վեր առաւ, երգեց.

Հերոսները մակառ գարկին մակառի,
Սուրբ-սուրին յաշաճու,
Ինկան գլուխ-գլխի երկուքն ալ անշունչ,
Արիւնն իրենց յառնուեցաւ նոյն հաղին.
Բայց Աստուծոյ ձեռքը բարի
Ծածկեց ամեն կարմիր արա՛տը արեան՝
Թարմածաղիկ կահանչութեա՛մբը
գարնան,
Ու ծա՛ն տնկեց իրբի դրո՛շ
յաղթութեան...

- Հիանալի՛ երգ, - զոչեցին սպաները:

- Բայց դուք չըսիր, թէ ո՛ր մէկ ճակատը պիտի ելլէ յաղթական:

- Ըսել կ'ուզէ՞՞ դերման-թուրք ճակատը մէկ կողմ, ու թշնամին՝ մի՛ւս:

- Այո՛, այո՛, Փայլ մը բաց՝ թէ որ ո՞ւնն է դրօշը յաղթութեան:

- Ձեր Փայլը կը բանամ, - ըսաւ Տէրվիլը, - մէկ պայմանով, որ այստեղ նստած ամէնքդ ալ զբաւի դրամ զնէք սա սեղանին:

- Կ'ընդունինք պայմանդ, - ըսին միտքերան:

Նախ թուրք սպան հանեց դրպանէն հինգնոց թղթոսկի մը եւ զետեղեց սեղանի կեդրոնին: Գերմանացի սպան հանեց դրաւ տասնոց մարքի պանջոթ մը: Աւստրիացի սպան հանեց դրաւ քօսն չիլիննոց թուղթ մը: Իսկ Տէրվիլը ձեռքը պտտուց իւր դօտիին մէջ.

- Ես տէրվիլ մարդ եմ, քիչ դրամ ունիմ, բայց ձեզի հաւասար կը դնեմ ահա, - ըսաւ ու հանեց մէկ կարմիր անդլիական ոսկի հնչուս դրամը, զետեղեց միւսներուն քով, աւելցնելով թէ.

— Եղիպտոսէն ի վեր հետս պատգուցած եմ այս ոսկին :

Աւ առանց ժամանակ տալու որ սպաները զարմանան փայլուն ոսկեդրամին, Տէրվիւր իր թեւերը բացաւ լայն-լայն, խորունկ շունչ մը հաւաքեց իր կուրծքին, ու յանկարծ ամպերէն իջնող փոթորիկի մը պէս փչեց սեղանի երեսին... Խորը թղթադրամները, մեծ ու պզտիկ, թռան վար եւ դետին փռուեցան, հինգնոց, տասնոց ու քսաննոց, մնաց անշարժ միայն ի՞ր դրած ոսկեդրամը սեղանին վրայ, կոռուադաշտին յաղթանակը երզող աքլորի նման...

— Ահա այս պիտի յաղթէ, դիմացկուն ոսկին պիտի յաղթէ, — ըսաւ Տէրվիւր ու ծոռեցաւ որ հաւաքէ պարտուած ցիրուցան դրամները :

— Խո՛ղ, շուն-լուսին, — ըսեւ Տէրվիւր, — քան որ քան պարկաւ անոր վիրաւոր ուսին : Բայց Տէրվիւր ինքզինք հաւաքելով ըսաւ :

— Դրամդ կորսնցնելու՞ կը բարկանաս : մի՛ նեղուիք, ետ աւ, ահա, — ըսաւ Տէրվիւր ու բոլոր դրամները անոր երկարեց :

— Կորսուէ՛, տէ՛ֆ եղիք, խընզճճ արար, — բարկացաւ թուրք սպան՝ Տէրվիւրի ձեռքէն խլելով թղթադրամները...

Բայց Տէրվիւր աւելեւով առած էր իր ուզածը : Հիմա դիտէր, թէ ո՞ր տարւած էին իր աղջիկները :

Լուս սպրդելով անցաւ փողոցներէն, դուրս եկաւ քաղաքէն : Զգոյշ զգոյշ, բաց ճամբաներէն խուսափելով, ու միայն դաշտերու ցանքերու եւ այրվիներու մէջէն յառաջանալով, եկաւ հասաւ թրքական նոր դպրոցի վերածուած նախին Հայկական որբանոցը, որ կառուցուած էր 1909-ի Կիլիկիոյ աղէտէն ետքը : Անցաւ անոր ետեւի բլուրին :

Պահը երեկոյեան այն կիսամութ պահին էր՝ երբ ընթրիքէն ետք դպրոցի աղջիկները հանդարտ-հանդարտ կը պարտեկէին ծառաստաններու մէջ :

Մարդբիտ ու Սերոն, այստեղ ալ միշտ միասին, դէպի այգեստանը խո-

բացեր, մեղմ եղանակներով կը սփռէին իրենց սրտերը, երբ, յանկարծ, կարծես ցին լսել իրենց մայրական սուլոց մը... Մտիկ ըրին ուշի-ուշով. սուլոցը երգի փոխուեցաւ : Տէրվիւրի մայն էր, բայց չէր մտնեար : Գիշ-գիշ յառաջանալով՝ վերջապէս հասան այն ժայռին, ուր կ'երգէր իրապէս իրենց Տէրվիւրը :

— Այն մի՛ հանէք, — թոթովեց ան՝ այս անգամ կոտորած անդիբրէնով, — ես մասնաւոր ձեզի՛ համար եկած եմ, սա նամակը ու ծրարը տալու...

Մարդբիտ դողով բացաւ թղթիկը ու մէջը կարդաց :

«Սիրելի Մարկո, անմիջապէս Տէրվիւրին հետ նամակայ ելիք, իր բերած այս ծրարին հազուադեպով ծախուած» :

Թաւրթ, Պերու
Թուրքամ, Ալաուկ

— Ահա՛ ձեր ծրարը, — ըսաւ Տէրվիւրը, — հաշտեցէ՛ք...

Խորհրդաւոր ծրարի մէջէն ելան դոյգ մը արաբական տտրեգօս ու գոց դոյն Կիլիկիոյ : Երկու ընկերուհիները ապշած-անշարժացած էին :

— Շո՛ւտ, — ըսաւ Տէրվիւրը, — հաշտեցէ՛ք, ծպտուեցէ՛ք...

— Երթանք նախ մեր դոյգերը հաւաքենք : մենք ո՛ր կրնանք փախչիլ...

— Ո՛չ, զպրոց վերադառնալը կրնայ վտանգել տո՛նն ծրարի, — յարեց Տէրվիւրը, — ժամանակ չկորսնցնե՛ք :

Երկու աղջիկները մազնիացուած կամպուրկներու պէս մեքենաբար ուսերնէն անցուցին երկար պարեպօտները, իրենց մազերը ամփոփեցին Էլիլի տակ :
— Ճիշդ գոյգ մը արար մանուկներ, — խնդաց Տէրվիւրը, — հետեւեցէ՛ք :
— Ո՞ւր պիտի երթանք... :
— Մինչեւ կամբոն... :
— Բայց ի՞նչպէս կրնանք քաշել մենք մինչեւ այդ լեռները... :

— Հետեւեցէ՛ք, — կրկնեց ան ինքնափոսահ, — ես ամէն ինչ կարգադրած եմ : Խու՛մբը հասաւ Սիհուն գետի եզրը, արար Փէլլահ պարտիպաններու մօտ : Այնտեղ իրենց համար պատրաստ սպասող դոյգ մը ջորիները առին, մէ-

կուն Հեծան երկու աղջիկները միասին, միևսին նստաւ Տէրվիչը: Ու թեւատարած զիշերը առաւ-տարաւ երեք փախըտասկանները ծածուկ համբաններով, Քիւրա-տաղէն, Չախըտէն վեր, վեր, վեր...

- Ես այս բոլոր լեռները քայլ առ քայլ չափած եմ, - վստահեցուց Տէրվիչը, - այս զիշեր կը մազցինք, ցերեկին կը հանգչինք անտառի մը ծածկոյթին տակ, ու վաղը զիշեր կը հասնինք Լամբրոնն:

- Լա որ այսօր ժամանակին հասար, - զիտել տուաւ Մարգրիտ՝ քիչ-քիչ ինքզինք զտնելով, - վաղը մեզ ալ պիտի զրկէին...

- Ո՞ր պիտի զրկէին...:

- Չենք գիտեր: Միւս բոլոր հայ աղջիկները ցրուեցին, տարին յանձնեցին պէյերու, սպաներու տուններուն: Չենք գիտեր մեզ ո՞ր պիտի զրկէին:

Արկածախնդրական այդ ճամբորդութեան մէջ միակ փոքրիկ դիպուածը, որ ունեցան անոնք, արշալոյսի պահուն, երկու թիւրքէն զիւղացիներու հանգիպումը եղաւ, որոնք իրենց գրաստներուն կարգաւ ու պանիր բնացած՝ լեռնէն դէպի Տարոնն կ'իջնէին: Բայց Տէրվիչը յանձնարարեց բացարձակ լուսթիւն աղջիկներուն, իսկ ինք սկսաւ բարձրաձայն արարերէն խօսիլ ու խօսիլ, իբրեւ թէ իրապէս արար Փէլլաններ ըլլային իրենք:

- Ասոնք Չանտրը-թուրքեր կը կոչուին, - զիտել տուաւ Տէրվիչը՝ անոնց հեռանային ետքը, - բարի, միամիտ զիւղացիներ են. այս լեռնայնարհի նախկին Հայ բնակիչներն են՝ բռնութեան տակ իրամացուած...:

Վերջապէս, արեւազալի տառլին շողերուն, երբ հեռուէն տեսնուեցաւ հսկայ ստուերը Լամբրոնի Հեթում-բերդին, Տէրվիչը ըստաւ.

- Ահա՛ Հայոց Կիլիկեան թագաւորութեան բերդաշխարհը: Այս լեռներուն մէջ էր որ հաստատուեցան առաջին Հայ Իշխաններ՝ Ապլլարիպ, Օշին ու եղբայրը Հաւիլամ, Լամբրոն ու Պապիւտոն

զորք բերդերով: Այստեղ դուք ձեռք իշխան Հայերու երկրին մէջ էք՝ ապահով:

Երկու աղջիկները զարմանքով իբրեւ կը զիտէին, թէ ինչպէս այս օտարականը իրենցմէ լաւ գիտէր իրենց աղջիկ պատմութիւնը...:

Երբ աղջիկները հասան Լամբրոնի թորոսնուզ թաղին մէջ ապաստանած իրենց ուսուցչուհիներուն ու մօրաքոյրին, անոնց փափուկ կուրծքին հանդիցողցին յոգնութենէ ու յուզումէ ուսած իրենց պլուխները:

Հոն էին ապաստան գտած նաեւ Տարսոն Գոլէնի ամերիկացիները:

- Դուք այստեղ ապահով էք այլեւս, - ըստաւ Տէրվիչը, - զիս այսուհետեւ անգամ մըն ալ չէք տեսներ... Ես առանց զաղար ու հանգիստ առնելու՝ իր գրաստներուն սանձը դարձուց ես զէպի Ատանա, - զուք անհազ մնացէք, որպէսդի հանդիպողներու կասկածը չարթնցնեմ. ես անտառէն փայտ կը բեռցընեմ ջրիներուս ու կ'երթամ քաղաք: Անկէ պիտի վերադառնամ Արարիտան՝ իմ երկիրս: Այնտեղ սկսած է ըմբոստութեան շարժումը, ու ես ալ պէտք է միանամ իմ ժողովուրդիս...:

Երազի մը պէս եկեր էր, տեսիլքէ պէս հեռացաւ:



Շատ ամիսներ չէին անցած, երբ զօրաւար Ալեմպիի յաղթական բանակը դերմանո-թուրք բանակները փշուր-փշուր քայքայելէ ետք՝ Պաղեստինեան Արարալի ճակատամարտին, միացած՝ հարաւէն էմիր Ֆէյսուլի անապատական բանակին, հասաւ զբաւեց Դամասկոսը, եւ անկէ յառաջանալով միացաւ՝ Հալէպի մէջ՝ Պաղատի ճակատէն Սփրատի հովիտն ի վեր բարձրացող բանակին: Ուրիշ միացեալ բանակ մը Փրանսական եւ անգլիական ուժերու, իրար հանդիպած Պէյրութի մէջ, Միջերկրական Մովէն ցամաքահանում ըրեր, գրաւեր էր Ալեքսանտրէթէն մինչեւ Մերսին, ամբողջ

պատմական Հայկական Կիլիկիան, ու չղթայ կապեր Տաւրոսեան լեռներու լուրջ՝ Հայ կամաւորական Լեզնոններով, մտած Տարսն, Ատանա, Միս եւ լեռնապատուի բոլոր քաղաքները, մինչեւ Այնթապ ու Մարաշ:

Ուրախութիւնը վերածաղկեր էր հայերէն երգով ու պարով՝ այնտեղ ուր անցեալի չար թախը բռնութեան սուղ էր սխառած քաղաքներուն, դիւղերուն: Հայ զաղթականներու մնացորդներ անպատենքէն թափօր-թափօր կը վերազանային իրենց հայրենի տունը, վերաչինելու իրենց աւերեալ օճակները:

Ատանան կեդրոնն էր դարձած վերածաղկող Կիլիկիան հայրենիքին: Հայ ժողովուրդը, թէև կոտորակուած ու վերաւոր, բայց կանգնած էր այժմ պատերազմի յաղթական ազգերու շարքին: Հայութիւնը շատ բան էր կորսնցուցած, բայց ինչ չէր կորսուած: Ու Տրանսան եւ Անգլիան եւ Ամերիկան պաշտօնական յայտարարութիւններով կը հաստատացնէին Հայկական Կիլիկիոյ վերջնական ազատութիւնը: Հոգատար Փրանսական կառավարութեան ներկայացուցիչ զինւորական-կառավարիչը իր պաշտօնական կնիքին վրայ ունէր «Բարձր Գամիսէր Հայկական Կիլիկիոյ տիրաւոր»: Աւ Հայ կամաւորներու Լեզնոնը պիտի ըլլար կորզը Կիլիկիոյ Հայկական Բանակին:

Մարզրիտ ալ վերադարձած էր Ատանա՝ իր ուսուցչուհիներուն ու Զարուկ ձորաքրոջ հետ, եւ անձկութեամբ ու օրհոր կը սպասէր իր ծնոգններուն ու եղբայրներուն վերադարձին: Ինքիլիկէն եկած զինք դառած էր արդէն իր սրտի քաղցրեամբ Մհեր՝ այժմ անգլիական բանակի մէջ թարգման գործած:

Այդ օրերէն մէկուն, յաղթական բանակներուն ի պատիւ իրախնամքի երեկոյթ մը սարքուած էր Միսիոնարատան մէջ: Հոն էին Գուլէճի սնօրէնուհիները, ուսուցչուհիներն ու Տօքթար Հափուզը: Հրաւիրեալներուն մէջ կային Փրանսացի, անգլիացի եւ Հայ սպաներ եւ Հայ: Եւ թուրք երեսելիներ: Միս Թափլըրի,

Պերուլի ու թուրքաճի հետ՝ հոն էին նաև Մարզրիտ ու Սերոն:

Կերտումի ու զուարթութեանց այդ պահուն, Մարզրիտին մօտեցաւ բարձրահասակ ու շատ մաքուր հարուած անգլիացի սպայ մը, ու մեղմ բարեկեց.

— Հէլլօ՛, Մարիօ՛, հէլլօ՛, Սերոն՛. Ինչպե՞ս էք հիմա...:

Մարզրիտ դարձաւ եւ ուշադրութեամբ դիտեց: Օտար այս սպան ուրիշ՝ զիտէր իր անունը: Ուրուականի մը պէտք պատկերներն եկան անցան իր աչքերէն, բայց չկրցաւ բռնել-տեղաւորել դանձեք ընտանի չըմանակի մը մէջ...:

— Ձիս չկրցա՞ք նանչնալ ուրեմն, — յարեց սպան, — ես յաճախ կը հանգիստէի մեզի, չէ՞, այս տան մէջ ու դպրոցին մէջ... Ձեր այս թաղին բոլոր տունները զիտեմ ես... Ես մեր Տէրվիլ-պատանի եմ, չէ՞...:

— Ի՞նչ, ո՞ր Տէրվիլ-պատանի...:

— Ձեր դպրոցի երգիչ, մեր զուգերգի ընկեր Տէրվիլը, մեզ Լամբրոն փախցնող Տէրվիլը...:

Երկու ընկերուհիները սպասած կը դիտէին, անկարող՝ ճիշտ իսկ ընկու, եւ յանկարծաւար յուզումէն՝ լեզուին շարժած:

— Ես, — շարունակեց անգլիացի ընկերուհին, — բանակի սպայ էի, բայց տէրվիլ արարի զգետտի տակ ծպտուած: Ամբողջ այս Կիլիկիան չըջանը իմ լրտեսութեանս էր յանձնուած, մեռքիս տակ ուրիշ երկու ընկերներով: Ես իմ ձախ թելիս փաթորթիլն տակ, ո՛չ թէ վէրք ունէի, այլ թըղ-թակցութեանց ու քարտէսներու ծրարներ կը կրէի: Որոշ օրերու, ամայի Ես-մուրթալը ծովեզերքէն նստակ մը կուզար եւ զիս մարտանաւ կը տանէր-կը բերէր: Ատեն մը, Բարձր Հրամանատարութիւնը կը ծրարէր Այսա-Փայտա-Գարթաշի ծովեզերիայ զիտէն զինուորական ցամաքահանում մը կատարել: Բայց մեր լրտեսական ցանցը հաստատեց որ շատ վտանգաւոր ու քաղում կեանքերու կորուստի պատճառ մեծաքի մը պիտի ըլլար ան, որովհետեւ Կիլիկիան երկրին մէջ մեզի համակիր ժողովուրդ մը չէր

մնացած, բոլոր քրիստոնեաները տեղա-
 անուած ըլլալով: Ու որոշուեցաւ վեր-
 շապէս, որ Բրքական ճակատը ճեղքելու
 յարձակումները սկսէին արարական ա-
 նապատէն, ուր անդլիական բանակներու
 համակիր բնիկ ժողովուրդ մը կար տր-
 գէն եւ օսմանեան բանակը օտար տարր
 մըն էր հոն: Մանաւանդ որ Ամերիկային
 եւս պատերազմի դաշտը նետուելովը՝
 զերմանական ուժերը զբաղուած պիտի
 մնային եւրոպական այլ ճակատներու
 վրայ, եւ արարական ճակատէն յատ-
 շացումը զիւրին եւ նուազագոյն կորուս-
 տով պիտի ըլլար մեր բանակներուն հա-
 մար: Եւ այն ատեն էր, որ ինծի հրա-
 մայուեցաւ Արարիա երթալ: Բայց մեկ-
 նումէն առաջ՝ վերջին զործն եղաւ ձեզ
 ազատելու: Գիտցա՞ք հիմա, թէ ո՞ր աչք-
 վիշն եմ ես:

- Բայց, - կը զարմանար տակաւին
 Մարգրիտ, - մեր Տէրվիշը սեւ-սեւ ու
 գանդուր-դանդուր խոպոպիկներ ունէր
 իր էկիլին առկէն կախուած, իսկ դուն
 ունիս զեղձան մազեր: Անոր գէմքը թուխ
 էր, իսկ դուն ունիս բամպակի պէս սպի-
 տակ մորթ...:

- Ես հիմա՛ ալ ունիմ այդ սեւ մա-
 զերն ու թուխ մորթը, - ըսաւ սպան:

Մինչ այդ, խումբին մօտեցած էին
 Տօթթոր Հովիտը ու Միս Թավրը, որոնք
 թեթեւ ծիծաղով մը կը հետեւէին խո-
 սակցութեան:

- Ի՞նչ, - վճռեց Մարգրիտ զուար-
 թածայն, - պիտի հաւատամ, թէ դուն
 նոյն այդ մեր տէրվիշն ես՝ միայն մէկ
 պայմանով, որ մեզի վերստին երգես հի-
 մա նո՛յն հին երգերդ...:

- Պայմանին միւս կէտն է, որ դուն
 ալ ընկերանս երգես...:

Այս խօսքով՝ սպան անիջապէս դը-
 նաց, որահի անկիւնէն բերաւ իր պայու-
 սակը, մէջէն հանեց, հազաւ իր արա-
 բական մետաքսախառն մէշլախը, գը-
 խուն անցուց սեւ խոպոպներով կեղծա-
 մը, վրան սեղմեց էկիլը, գէմքին ու բա-
 ցած կուրծքին լայն-լայն քսեց պղնձա-
 գոյն գոյնը, թեւէն կախեց Համբիշները,
 որահին վարագոյրի ձողը քաշեց, իրեն

զաւազան ըրաւ, եւ անոր կռթնած՝ եր-
 գեց:

Այս տէրտը իմ տէրտա չէր,
 Ուրիկ՝ եկաւ իմ գլխուս...:

Նո՛յն կակուղ, յորդուծ, հեզեղային
 ձայնն էր...:

Մբահը յանկարծ երգահանդէսի մը
 վերածուեցաւ՝ յաշորդող զուգերգներով:

Սէրը՝ սրտիմ մէջ մարդում...:

Ես Սուլթանի ուզում եմ ազատ...:

Հերսաները մական գարկիմ մականի...:

Հարգոնը հրոնն առեր,
 Կ'րոնս կ'այրիմ ամտամներն,
 Բայց շառայներն այդ կարմրագոյն
 Բո՛ցն եմ ծագող արշալայիմ...:

Վայրկեաններու մէջ՝ զուգերգունե-
 րու շուրջը առին սրահի հիւրերը: Հայ
 դիմուորակներ, ազգայիննե՛ր մանա-
 ւանդ, ազանքով լսեցին «Տէրվիշ-սպա-
 յի» պատմութիւնը, եւ մտերմացած՝
 սկսան զլիտուն տեղալ Հարցումներ:

- Ես մէկ իօսք միայն ունիմ ձեզի
 ըսելիք, - լըջացաւ սպան, - անցեալի
 մասին շատ մի՛ հաշուէք այնեւս: Գուց
 յաղթական բանակներու բամբակից էջ
 կանդնած, բայց դեռ շատ աշխատանք
 ունիք՝ իրազարծելու համար մեր անկա-
 խութիւնը այս երկրին մէջ: Ձեր փրկու-
 թիւնը մի՛ ապաստէք անդլիացիներէն կամ
 Փրանսացիներէն: Ասոնք եկած են ձեզի
 օգնելու միայն մեր առաջին քայլերուն
 մէջ: Կիլիկիան այս հողամասը զինուո-
 րական պատերազմով նուաճուած երկիր
 մը չէ, այլ Ձինարադարի Համաձայնա-
 զրով առժամապէս զբաւուած: Ձեր ա-
 պագան այս երկրի բնիկ ժողովուրդնե-
 րուն հետ է զարձեալ, ինչպէս եղած էր
 անցեալը՝ օսմանցիներու ժամանակ: Գուց
 պիտի ապրիք մեր թուրք հիւշիքներում
 հետ: Ճիշդ է, զգացումները միշտ առաջ
 կը զործեն քան մտածումները: Բայց աչ-
 խարհը կառավարողը զգացումը չէ, այլ

մտածումը: Ընդհանրապէս այսպիսի ըս-
կըզրմաւորութեանց է, որ ինքնակոչ հե-
րոսների հրապարակ կ'իջնեն եւ անպա-
տասխանատու գործեր կ'ընեն ու կը դըժ-
ւարացնեն հովանաւոր պետութեան գոր-
ծը: Բայց ասիկա չէ տիրելու եւ երկիր
կոտորակարելու կերպը: Գիտե՞մ, զժուա՛ր
բան է զսպել վրէժի բարձր զգացումը
ձեր մէջ, բայց զուր պէտք է սորվիք
սիրաշահիլ ձեր թուրք բնակակիցները,
եւ փոխադարձաբար սիրաշահուիլ անոնց
կողմէ, եւ ապրիլ միասին իբրեւ հաւա-
սար իրաւունքով ու պատիւով բնակա-
կիցները այս երկրին: Ու մանաւանդ
գործել լուռ, ասանց աղմուկի ու ցոյցի,
այլ՝ մտածուած ծրարով: Կացութիւնը
աւելի լուրջ է, քան զուր կը կարծէք:
Եթէ զուր յաջողիք այս նախապայմանին
մէջ եւ յստաջ բերէք խաղաղ գործակե-
ցութեան եւ քաղաքական ապահովու-
թեան մթնոլորտ մը, զիւրին է այնուհե-
տեւ՝ բոլոր ձեր ներքին գաւառներէն
այս ծովեզրեայ հողամասին վրայ հա-
ւաքումը Հայ միացորդներուն, այստե՛ղ
կեդրոնացումը եւ մեծամասնական գե-
րիշխանութիւնը Հայութեան, եւ անտե-
սական, կրթական, մշակութային ճիշե-
րով, որուն այնքան աւելի ընդունակ է,
ձեր ցեղը, իրագործումը բարգաւաճման
ու կատարեալ ապատութեան՝ գեղեցիկ
այս Կիլիկիոյ:

Լսեց սրահը: Հայեր ոկոսն՝ ամէն
զլուկէ ձայն մը.
- Բայց ճիշդ է մարդուն ըսածը:
- Ի՞նչ, զեռ եղբայրութենէ ու սէ-
րէ՞ կը ճտռեն մեզի:

- Արդէն նախկին լրտես մըն է ե-
ղեր... Ի՞ր արհեստն է, որ կը շարունա-
կէ, այս անգամ ալ՝ շարադարին ի նը-
պաստ...:

Իսկ թուրքերը սկսան մրմուլ.
- Ի՞նչ է ըսածը, ի՞նչ... Որո՞ւն
Կիլիկիան որո՞ւ կու տան կոր... Դեռ
սուրը մեր ձեռքէն չինկաւ եւ... Ատոնք
մեզի բարեկամ երեւնալու մորթին տակ՝
մեր կործանումը ծրարող աղուէաներ
են... Ուրեմն այս լրտեսն էր, որ պայ-
թեցուց մեր զինուորական մթերմոսը...
Ու մէջը քար ձգուած աւաղանի մը
ալիքներուն պէս՝ քաղաքին մէջ տարած-
ւեցաւ Տէրվիչ-սպոյին խոսքին զէ՛մ խոս-
քը:

Ճ

Երեք օր ետք, սարսափելի գոյժ մը
պայթեցաւ Ատոնայի մէջ... Նախկին
անգլիացի լրտես Տէրվիչ-սպան զաշու-
նահարուհի է Սերայի բակին մէջ...
Մահուան սնարին մօտ, ուր հասած
էին Տօքթ. Հավուզ, Միս Քավլըր եւ
Մարգրիտ, Տէրվիչ-սպան իր ձեռքը եր-
կարեց, «Մարկո» շնչաց, ու կարծես
նոր երջ մը շարելու հեքով՝ արտասո-
նեց.

Մարդիկ պիտ' ըսն՝ պարա՛դ տեղ
մե՛տու.
Բայց չըսե՛ն, չըսե՛ն պարապ տեղ
ապրեցաւ:
Բ. Ծ.



ՅԻՇԱՏԱԿ

Ո՛վ մահաբայր վերածնունդ յիշատակի.
Թերևս էիր մայր իմ քաղցրիկ, քերես էիր
Իմ տարփուտիս հրազարով. դեռ կը ծաղկի՞
Շուշանը սեւ իմ տխուր-խանդը վշտալիր...

Ջանկեր վա՛ռ են տեղերուս նայատուփին.
Որուն այնքան մութ եւ քունդ էր սիրոյ գիմին.
Մա՛յր քաղցրաբայր, անխնայեալ սուրբ վարդենի,
Որ սրտիս սէշ անվերջօրէն դեռ կ'արիւնի...

Ո՞վ քաղցից իր դժնէ ձեռքով զերկրամէտ
Շուշանը սեւ՝ որով հոգիդ էր գարգարուած,
Ո՞վ տարփուտիս, ո՞վ ազամեակ իմ քեւարաց...

Արդ չեմ կրնար համբոյրներուս սէշ բանտի Քեզ,
Սրբ լայնարաց վերք մըն է կեանքն, ըստինքներդ
Ջամբուած, մա՛յր իմ օրհնութեամբ հրամուճու...

✽

Լեքան ոգին պատսպարուած էր տունին սէշ
Իր լինելով անտուներով ծղիկներով
Տղու մը պէս կը վախճայի ես մեռնել
Ապակիին սէշ տեսնելով արեւածաղը շակեշող
Ձայներուն հետ որոնք հիւսուած էին իրենց գաղտնիքներուն,
Հիւանդ սէկու մը քունին սէշ շերտ կար նաեւ քաղցրութիւն կար
Ու սրտիս սէշ կը բարախէր աշխարհին սիրտը հմայուած
Սրբ օգնութեան կը հասնէր ինձ յետը անհուն կախարդանքով
Մինչդեռ ահա կեանքն իր աչքերը կը ծածկէր
Եւ ասիկա ձիւնին խոստումն էր մահաբեր:

ԱՐՄԷՆ ՆՐԿԱՌ

Յ. ԳԵՂԱՐԴ

ՏԷՐ, ԸՆԿԱԼ ՔԱՂՏՐՈՒԹԵԱՄԲ...

Յ - Գեղարդ վերջերս լայն ընծայեց իր գործերում չարքարդ հատարը, «Ուռկանը» անունով պատմումսմեմբու ժողովածոյ մը, որուն մասին ընթերցողը կը կարդայ ընդարձակ գրախօսական մը Ն. Պէշիկ-աշիւանի ստորագրութեամբ:

Հետագայ գրութիւնը վերջին մասն է «Յիշատակի Կնիկաման» խորագրուած ճարհատքի մը, որ պատրաստ է տպագրութեամբ:

Ամբան արեւի հրաշող ճաճանչները ներծծած առջ ու կարմիր հողը, հարազատ պրկի մը խորութեամբ ու շերմութեամբ, բացուած է՝ վերջալույսի վտիւս բոցերէն բունկած շոճիի մը տխրամտած ստուերին մօտիկը, գերեզմանատան մէկ անկիւնը, ուր՝ հրաժեշտի տրտում ու տամուկ նայուածքներու, խնկարցր աղօթքներու եւ բան առ բան, ափ առ ափ մաղրուող հողի հեկեկուն, կցկտուր կրկին տակ՝ մութ-արծաթազոյն դազաղ մը կ'ընկրգմի հանդարտօրէ՛ն, խաղաղօրէ՛ն, անդարձօրէ՛ն...

Երէն մաս առ մաս կ'լլող կոկորդիլոսի ահաւոր բերան այդ հողը կարմիր՝ տակաւ կուչ կու տայ դազաղը՝ անայլա՛յլ, խղճի ամենայն հանդարտութեամբ: Համբերատար պահանջատէր մը կարծես, որ կ'ըզանձէ իր իրաւունքը, վերջապէ՛ս:

Ծաղիկնե՛ր, հեռուոր դաշտերու եւ սարաէզներու զոյնզոյն ու տխրաբայր ծաղիկներ, պսակներ ու խաչեր ձեւացուցած, կ'անապարհն կանչենիլ քով-քովի, գիղուիլ վրայ-վրայի, ծածկելու գութիկտուրութեամբ վախճանի մը յուսալքիչ ունայնութիւնը, քողարկելու միտտութեամբ մահուան մտայ մերկութիւնը, արտմաշող քնքրութեամբ լեցնելով անդարձ բուժանման անխորաչափիլ անլրջեար:

Կեանք էր, ու դարձաւ հերիաթ, կ'րդ էր, ու դարձաւ երազ, խո՛ւնկ էր, ու դարձաւ աղօթք...

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս կրնան արձազանգ տալ լրթներս ու հողին ընդհանրական հաւատալիքին, խոնարհիլ հողին ու մրմնջել՝ յուսահատի համակերպութեամբ.— «Հո՞ղ էր, ու դարձաւ հող»:

Հողն ալ բարի է, անշուշտ: Տիեզերքի ամէնէն բարեզուք տարրերէն խոնարհագոյնը: Արեւի համրոյրէն, անձրեւի տարփանջէն ծոցուոր հողը կու տայ աստուածային զաւարիքը այլապէս լերկ ու անհրապոյր մեր մուրակին: Կու տայ ծաղիկները բազմերանդ ու բազմաբոյր, ծառերը բազկատարած ու քաղցրաստափ, հացն մեր հանապազորդ ու սոկելոյս:

Բայց մահուան մակոյկով հողին գիրկը սուզուող սա՛ մարդը ինչպէ՞ս դառնայ հող անկենդան ու անձայն, ու ոտքի կոխան, երբ Բարութի՛ւն էր համակ:

Մանկութենէս ասդին՝ օրէ օր զիւ մը աւելի ճանչցայ այս մարդը իր երիտասարդութենէն մինչեւ ալեւոյթը, եւ որքան աւելի լաւ ճանչցայ գինջ՝ այնքան աւելի խոր հաւատացի Բու բարութեանդ ու զոյրութեանդ, Տէ՛ր, Արարիչ ու Գործիք կեանքի, անպատ, լուսալոյզ Այբբեր՝ արեւներու եւ աստղերու:

Դրախտի կառով ու լոյսով թրծուած բարձրահասակ ու ամբակազմ այս ձեռակերտող՝ ապրեցաւ մաքրեմի շունչովդ: Քեզմով բարբառեց՝ զէն ու սիսի անհիւրընկալ սիրտը, լուսաթլթիւ զգացումներուդ ներդաշնակ կրօնթիովը միայն: Անձկութեանը մէջ եղաք Յոյսը գերադոյն, պերճ օրերուն՝ Փա՛ռքը վեհապոյս:

Լայն ու լուսողող ճակտին ետեւ մաս մը կար խոր ու անդորր երկընդիկ կապոյտէն: Ականջները, արեւածաղիկի պէս, կը դառնային միշտ կողմը խորիմաստ խօսքիդ, ու կը հեշտանային անյազուրդ՝ դաշնալուր ձայնիդ քաղցրազուր ալիքներէն: Եւ մեղքազոյն ալիքերուն սիրազեղ նախածքը կը յամենար լոկ կառուցած Տիեզերքիդ, ստեղծադրած զեղեցկութիւններուդ վրայ՝ հոգեզմա՛ւ:

Կիրակին, օրը սրբենի, անպայման պիտի այցելէր Բու Տունդ, ուր որ ալ ըլլար: Գիտի զար քալելով, սովորական մարդոց պէս, սովորական ու համեա գրեւատարումով: Ուշադրութիւն հրաւիրող շարժումներէ խուսափող՝ առանց ասդին-անդին նայելու պիտի մտնէր գլխահակ՝ եկեղեցի: Կարեւորը կամարներուն, պատերուն լուսազարդումը չէր, սակաւաթիւ կամ խուռներամ հաւատացեալները չէին, ոչ իսկ թերեւս ծաղկափթիթ խորանիդ առջեւ փառքիդ երկրպագող հանդերձաւոր եւ հանդիսաւոր պաշտօնիդ: Քեզի համար կու զար, Տէ՛ր, Բու պայծառակերպող ներկայութիւնդ ըմբոշինելու, մարդկային հողին զանձատունի վերածող մտրմութեանդ հաղորդուելու: Եւ այդ պահուն, հմայքովդ գերաբաժն ու խորհուրդիդ մէջ վերամբարձ իր խոնարհ հողին՝ Դուն միայն գիտէիր կարգալ եւ լսել շունջն իր շրթներուն, որոնք կ'աղերսէին անկասկած՝ խաղաղութիւն աշխարհի, Հեղութիւն եւ եղբայրասիրութիւն՝ մարդկութեան, ազատութիւն՝ ազգիս Հայոց, եւ հուսկ յետոյ՝ անխորտակ ու լուսածոյ հովանիդ է՛ր ընտանիքին, է՛ր երգիքին:

Լուր օրերուն՝ Հետդ էր միշտ: Աւտուն՝ դարթնումին, եւ գիշերը՝ պառկելէ առաջ, անկողնին մէջ ծնրագիր՝ անպայման պիտի բանար Գիրքըդ, լուս ու խորասույզ:

Օրուան զբազումն ու հանոյքը Դուն էիր դարձեալ, կեանքին ու աշխարհին բաշխած զեղեցկութիւններուդ որոնումն էր ու վերաբառաբերումը, սրմէ կը վատուէր նաեւ իր հացը արգար:

Նոթան ու նուագարանը՝ տիեզերացրիւ Չայնիչ արձագանգը փերթ առ փերթ քաղելու եւ Հողիիչ համանուազը կազմելու սրբազան միջոցներ էին լուհի Կուրծքէն սեղմած ուտին լարերը՝ ճերմակ ու ճարտար մասներուն ելեւէջներուն եւ արծուի փետուրէ կտրուած կնկնացիւն մոպական հպումներուն տակ կը թրթռային քաղցրազոյ, երփներանդ խաղերու հողեթով համադրոյթ մը յորինելով ալիքներու, տերեւներու, հովերու եւ բոցերու ծիծաղէն ու հեկեկումներէն, մարդոց շրթներէն ու սրտերէն փրթող դաղտնասաց խինդէն ու վշտէն, արցունքներու բերեղեայ սահանքներէն: Ու սենեակի առանձնութեան մէջ, Գու եւ իր հողիին կենակցութենէն ծնունդ առած նուազը, օրինակիչ հետեւելով, կու տար ձայնափուռի համաարած ալիքներուն, սարազնաց հովերուն՝ հուրիանդ լուսանձրեւը, շափելոյ շիթերով, բաշխելու՝ ծարաւահիւծ երդիքներուն ու սրտերուն:

Վաստկած դուստրէն անձնական բաժին չէր վերապահեր իրեն: Ամբողջութեամբ կը յատկացնէր տունին, ընտանիքի կարիքներուն: Մայրէպոյնէ աւելցածը մոմի զբամ էր, կամ՝ ուխտի մը առթիւ սղլոց մը, ոչխար մը մատաղցու: Մխախտը մոռցած էր շատոնց: Սուրճն անդամ կը նախընտրէր իր երդիքին տակ խմել: Եւ թուականէն օր մը առաջ տան վարձքը տանտիրոջ յանձնելը իր գոհունակութիւնն էր, եւ իր հպարտութիւնը: Առտուն, գործի երթալէ առաջ, կը սիրէր իջնել ուտեստեղէնի շուկան: Մասնաւոր տկարութիւն մը ունէր, խանդաղատանք մը՝ հողի բարեբներուն, դարարեքներուն հանդէպ: Կ'անցնէր խանութէ խանութ, կանդ կ'առնէր շարժուն վաճառորդներու կանանչեղէնով բռնաւոր կառքերուն առջև, ափսոսալով կարծես դրախտը կորուսեալ: Գուրգուրանքով, փաշփայլածով կ'ընտրէր պտուղներուն հրեթալիներն ու հոտեւանները՝ նախընտրելով, դեղձ, խնձոր, սալոր: Վաճառորդները կը սիրէին առանց սակարկելու, այլ տարիներու փորձառութեամբ նաեւ առանց խարտելու՝ սպրանքին արժէքը ճիշդ գնահատող եւ վճարող այս գնորդը: Պանիրին, մխին թարմն ու համեղը՝ հեշտանքն էին իր սրտին: Հա՛ցը. փուռէն նոր ելած պիտի ըլլար, առք ու խլիչուն: Ու երբ գոյգ պայտակները սննդանիւթերով ուռնէին ու յղփանային իր սրտին պէս՝ զանոնք ալ ու ձախ թեւերէն կախած՝ հանդարտ ու յաղթական քայլերը կ'ուղղէր տուն, ընտանիքը համազամբ եւ սննդատու սեղանի մը շուրջ բոլորուած տեսնելու հեռանկարէն դերերկանիկ:

Մխայն իր ընտանիքը, մխայն ծանօթ ու անծանօթ մարդիկը երջանկացնելու ծառայակաւութեան մէջ չէր սահմանափակեր Ետեղիչ հետեւելու կենսասիրութիւնը, Տէ՛ր: Սուրբ էր, իրեն համար, ստեղծագործութիւններու վեհագոյնը՝ Կեանքը, կեանքի ամէն երեւոյթ՝ իր խնարհազոյն հիւլիին, նշոյլին մէջն անգամ: Հաւ մը շմորթեց, բովանդակ կեանքի ընթացքին, մրջիւն մը իսկ չմահացաւ իր սուքին տակ: Ողորդներուն բարեկամը չնգաւ բնաւ: Լոյսէն շմորուն, ուղեկորոյթ թիթեանիկներ ազատ ու համարձակ թառեցան իր տան իրերուն վրայ: Միծեռնակը, ամէն դարտանի, բոյն շինեց անոր քիւրի տակ: Իսկ իր թուշներն, վանդակի գեղձանիկին լուրն ու կերը ինք հոգաց միշտ, վայրկեանը վայրկեանին, իր հացէն ու շուրէն առաջ:

... Երկինքը, կարծես, պատուած էր օր մը: Տեղատարափը, զայնազին շատալով՝ կը դարձնէր պատերուն, կը փչրուէր մայթերու, սալալատակներու երկայնքին: Ամէն մարդ քաշուած էր իր տունը, մտած էր խառնութիւն: Ամայացած էին փողոցները: Եւ արարչագործութեան առաջին օրը

յիշեցնող այդ օրը, ամայի փողոցէն ինքնաշարժով անցած պահուած՝ Հեռուէն տեսայ յաղթանասակ, սեւ վերարկուի մը մէջ փաթթուած եւ սեւ Համալսարանի պաշտպանութեան ապաւինած մարդ մը, որ հաստատաքայլ կը յառաջանար փողոցի հակադէմ կողմէն: Երբ մտեցանք իրարու՝ զարմացա՛յ, սահմակեցա՛յ: Ի՛նքն էր:

- Ո՛ւր կ'երթաս այսպէս, այս օդին: Մտիք ինքնաշարժ, հասցե՛ս, ուր որ կ'ուզես:

- Թուուէր կեր շունի վաղուան, անօթի կը մնայ. մօտիկ սա խանսաթէն կը գննժ ու կը տանիմ: Գուն զնա գործիդ, լուշանաս:

Պատուիրաններդ ու պատգամներդ զարդերն էին իր շրթներուն, վարձարաւը իր Հոգիին: Գիտէր որ սուր բարձրացնողը սուրով կ'իյնայ օր մը: Եւ ոչ թէ սուր՝ ձեռք իսկ լրարձրացուց ձեռակերտներէդ ոչ մէկուն, իրեն պէս մահկանացու ոչ մէկ ուրիշ էակի գլխուն:

Պատիժը մտաք շարժեց իր սրտին ոսկեծալ զարպասէն, վրէժխնդրութիւնը զուրս մնաց հոգին պտտնէշող լուսազանգ պարիսպէն: Հաւատաց միայն Գո՛ւ դատաստանիդ, Արդարադա՛տ:

... Երկու տարի տաւ, ամառը, գիւղի ճամբան, արագասոյր ինքնաշարժ մը շեղելով ուղիէն, շէրցա զսպել արգելակները տեղին ու ժամանակին: Զարկաւ ու տուպակեց այս խոնարհ ծառադ, երբ կը վերադառնար մօտակայ խանութէն, փոքր գնումներու տոպրակը թեւն տակ: Վազեցին մարդիկ, վերցուցին գինք: Վարորդ կ'իւր, շեղապատաւ, պատրաստակամութիւն յայտնեց մեղքը քանելու, հարկ եղած խնամքին գինք ենթարկել տալու: Անյիշարար արկածեալը աչքերը երկինք բարձրացուց, գոհութիւն յայտնեց որ փորձանքը անցած էր անհետեանք, ու դարձաւ յանցագործին: Վնասօր ալ Ատուած խնայեց ինձի, պահեց՝ տունիս համար: Աղօթէ՛ իրեն որ քեզ ալ պահպանէ, աղջի՛կս: Գնա՛ գործիդ: Թերեւս ես էի մեղաւորը...:

Անտասն հաւաք էիր, անխորտակ կամք, իր մէջ, Տէ՛ր: Ու հաւաքիդ մանանիով՝ դրախտավայր երկրէդ ասրահալած մէկ բնիկը իր բեռ՝ կտրեց լեռ ու ձոր, շաղկեց լեռնակուտակ ցաւ ու արհաւիրք, քաղկեց անպատի հրաշէկ աւազներուն վրայէն՝ կեանքին վերադառնալու յամառ կամքով, Անմահութիւնը վկայելու, Գեղեցկութիւնը ներթողելու աշխարհին ու մարդոց:

Միակ մորութիւնը ... Գուն էիր, Տէ՛ր: Ներկայութենէդ թափուր գործերէն ու վայրէջն բացակայ էր, ինքն ալ: Ժամանցի համար անգամ կը սիրէր նստիլ պատշգամ, երկիւղած լուսնիմար եւ մանկական հիացրկ աչքերով գիտել լեռնելու սուր ատմաներուն վրայ քակուող, զգուշ բուրբէ ամպերը, երկինքի մութ-կապոյտ խորութիւններուն մէջ պսպղացող սասաղերուն անուրջը, ծովուն մանրակազոյն վերմակը գլխուն քաշող վերջադասի ոսկեծած հարաւը:

Ուրիշ մարդոց հետ շատ գործ չունէր: Զաւակ, հարս, թոռնիկ՝ նոյն քաղցր երգիքին տակ, - երջանկութիւն իսկ էր իրեն համար: Կ'ապրէր նաեւ մտերմութեանը մէջ ընտրեալներուդ, Տէ՛ր, անոնց հետ՝ սրտեք Հոյսիդ, Զայնիդ եւ Բանիդ լաւագոյն ներկայացուցիչները կը հանդիսանան՝ պատաստի, սկաւառակի եւ գրգի մէջ սեւեռած իրենց հոգիով: Արուեստագէտները, արուեստի աշխարհը, ահա՛ կեանքի մէջ ու կեանքէն վեր, զինք Գեղի մերձեցնող բերեղեայ աշտարակը:

Վերջին տարիներուն ինքն էր պատկառապալու այն Ծնունդին, որ նոր

երջանկութեան մը անձնատուր՝ պայծառ օրերուն, թոռնիկներուն ձեռքէն բռնած՝ կը տանէր զանոնք պտոյտի, թոյլ շտալով որ հով մը աւրէ անոնց մազերուն օսկի թելերը, պանանի կեղեւ մը էյնայ անոնց կահուղ տոտիկներուն տակ :

Ինչ վերցուց միշտ, բայց բնա ըլլալ շուրջ ուրիշին, նոյնիսկ էր զաւկին : Ան էր փափաքը ընդունական դտար, Տէ՛ր : Գիշեր թէ ցիւրիկ էր առօրժն էր՝ առանց ոտքէ-ձեռքէ էյնալու մեկնիլ այս աշխարհէն, վերջին օրերուն ցաւ չքաշել եւ էր ցաւը քաշել շատ շուրջիներուն : Ան գիշեր մը, ամէնօրեայ սովորութեան համաժայն, Համբուրքիէ ետք թոռնիկներն ու Ս. Գրիգը, երբ քննալու համար մտաւ անկողին՝ ժամանակը հասած համարիցի, Տէր Ամենագէտ, փոխ տուած մաքրնի շունչը ետ առնելու էր կրտսրաց շրթներէն, առանց զգացնելու իրեն որ կը բաժնուէր իր հարազատներէն, կը մեկնէր այս անցաւոր աշխարհէն

Դողդոջ մասներով փակեցի նոր ու լուսաւոր աշխարհի մը տեսիլքէն զմայլահար աչքերը, օրոնք ալ լէին ճանչնար դիտ : Ափերուս մէջ առի ցըրտահար մատնելը, որոնք մո՛րի պէս վառած, ճանանչ ու Վերմութինն բաշխած էին ամէնուն, եւ նուազարանին հեկեկուն անձրեւի նման թրթոսացող լարերուն վրայ հիւսած՝ հելտալուր համանուազը Ջայնիզ, երգնազեղ Ծիածանը Հոգիիդ : Համբուրքեցի դաշկահար, նշխար դարձող ճակատը մարմար, ուր առաջին միւտոնիդ եղեմարոյր կաթիլը կը ցոլար :

Շատեր արցունքի հովիտի կը վերածնն կեանքը՝ իրենց ողջութեան : Կը զամեն ան ու արեւը օւրիշներու սրտին՝ անեցնելու համար մայրախնդը իրենց հացին ու հանձրին : Դառնութեան, կակիծի պղպեղը կը ցանկն հողիներու կոտորացող վէրքերուն վրայ՝ դրամարկղներուն խորը կոտորակառող արծաթին հետ բազմապատկելով՝ դրամազուտիւր մարդոց անէ՛ծքին : Կամ՝ իրենց նմաններուն ջրտնաթոր ուտերուն, հեծեծող գլուխներուն վըրայ կոխելով կը բարձրանան օնեայն փառքի մը խաւար բարձունքը : Գթա՛, Տէ՛ր, այս խեղճերուն, անհուն ողորմութենէդ բաժին հանէ այս չքաւորներուն . . .

Գիշեր կ'անցնին այս անցաւոր աշխարհէն՝ իրենց կեանքը երկնային բարիքներովդ զարդարուն բաց սեղան մը պահելով միշտ իրենց նմաններուն առջեւ : Կ'անցնին միեւնոյն ճակատագրին սահմանուած մարդոց շարքերէն ոսկեփայլ ճառագայթի, ազամանդաշող ջուրի պէս կենսաբայն՝ օրհներգի քաղցր արձագանգներ գտնելով անոնց հողիզէն շրթներուն : Կ'ապրին պայծառացնելով դէ՛մքերը, լուսազարդելով ուրիշներու հողիները, եւ իրենց մահէն ետք միայն՝ արցունքը կ'ողողէ մնացողներուն աչքերն ու սրտերը՝ դարնան լուսացնելու եւ Ծիածան կապող անձրեւի, հերկուած հողերը սոսկառ առուակներու պէս մարդարտածուփ : Փռուաւորէ՛, Տէ՛ր, յիշատակը այս մեծահարուստներուն :

Կարելի՞ բան է սակայն, որ ժեռնի՛ն, լո՛կ ինկարոյր յիշատակի վերածուին Քու ընտրեալներդ, լուսաշաւիղներդ, Տէ՛ր :

Համեստագոյն ծառադ՝ բազկատարած ու բարեզուք հողը, որ խորխորհուրդ խաղաղութեանը մէջ կ'ըսեն, թէ կը մոխրացնէ երկնազորդ կայծակին հրափառ ցատումը, ընդմիշտ կը լռեցնէ մարդկային աղաղակիւց ցաւն ու տառապանքը, երջանկացնող տենչերն ու յոյզերը՝ զերեզմանատան մէկ անկիւնը, տաքուկ ծոցին մէջ կը պահէ հիմա հայրս, հօրս լուսամտը անձրեւները : Ծերմակ խաչքար մը, իբր թէ միա՛կ վկան էր դոյութեան,

լուս Հսկումին մէջ կը պատմէ այցելուներուն զկար ու չկարձի ցուրտ խորհուրդը:

Գիտե՞մ որ Հայրս Քու քովդ է, Տէ՛ր, եւ իր բացակայութիւնը չ'ամաչեմք, չի յուսալքեր սրտերը մեր: Դուռը զարնուելուն՝ իր այցելութիւնը կը սպասենք ակնդէտ, ստնամայրը կը հնչէ տակաւին սենեակներուն, նըրբանցքներուն մէջ, կարօտալատ իր ստուերը կը յածի մեր երդիքին տակ, ու ինքնաշարժին մէջ կը զգամ զինք քովս, կ'առնեմ իր շշուկն, երբ մինակ եմ ճամբան:

Տեսայ զինք նորէ՛ն, այս գիշեր: Լուսահանդերձ, ճանաչաւուխտ: Եկած էր քովէդ, կը պատմէր Քու փառքէդ, բայց ակնախտիդ ու յորդապատ լոյսերէդ այնքան շագան էին ալքերը, որ չէր կրցած տեսնել զէ՛մքդ տակաւին: Է՛վերն եմ, Հանգիստ եմ, — ըսաւ, — բայց պիտի չբացակայիմ տունէն, մեր մէջ պիտի ըլլամ յաճախ:

Երազիս լուսահիւս պատրանքը թող որ կեանքիս վրայ տարածուի, Տէ՛ր: Հայրս, անոր բարի հողին, Հրեշտակաթիւ ներկայութիւն մը ըլլայ յարկիս տակ, ցերեկին պատցնէ հոն իր շունչը մշկենի, գիշերը դառնայ լամբին լոյսը ոսկեփայլ:

Երկնքին մէջ, ինչպէս երկրի վրայ թող ախրէ իշխանութիւնդ, կատարուի կամքդ: Բարի մարդոց փխրուն կան ալ թող փշի արարչագործ ափերուդ մէջ: Բայց չփշրի, լանհետի ինքը՝ Բարութիւնը, որ էութիւնդ իսկ է, Տէ՛ր: Առանց Բարութեան, առանց էութեանդ ի՞նչ կ'ըլլայ մեր աշխարհը:

Եւ Հայրս, Հոգւով ու մարմնով, բանիւ ու գործով մէկ մասնիկը Բարութեանդ, ան՝ որուն անձին մէջ ճանչցայ Քեզ, որուն կեանքով Հաւատացի զոյութեանդ՝ Հողիէս Հողիդ երկարող լուսակերտ, անբեկանելի կամուրջը թող մնայ՝ այսուհետեւ մինչեւ յաւիտեան:

6. 9.

?

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Եկած եմ կրկին ճաղաճէն հեռու,
Փայտած ազմուկէն,
Լռութեան կարօտ, յոգնած այցելու,
Հիմ գիւզն եմ նարէն:

Ծանօթ եմ ինձի վայրերն այս ամէն,
Վըտակը վտիտ,
Որուն կարկաշին գորտեր կը խառնեն
Ողբասացի վիշտ:

Կազմամային սէգ, որուն գով շուքին
Ժամերս են սահեր,
Այսօր ալ սեռ, կարօտներով եիմ,
Կանցնին լուս պահեր:

Ձմեռն է բերքը բուծը մեծ ծառին
Որուն կողին մերկ,
Գրած էի ես տառերն առաջին
Անունին իմ հէ՛ք:

Բամին է լգած լեզուով այնքան սուր,
Արդ, ոչ մէկ նշան-
Այ՛քերս քաղած կ'արաննիմ ի գուր
Տառերն աննշան:

Բայց կազմամային առաւել երգարտ
Կանգնած է դարձեալ,
Արեւուն դիմաց կը թօնի հանդարտ,
Իսկ իմ անունն ալ

Դեռ մահէն առաջ, բուքերն են փըշած
Ու էջած հեռու,
Եը մնամ արտում, մեծ ծառին դիմաց,
Ես խեղճ այցելու...:

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ

Պատգինէն

ՄՈՒՐԵՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Մ Ի Դ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

ՄԻ ՀՐԱՀԱՆԻ,
ԲԻԳ ԶՈՅԻ
ԵՒ ԱՅԼՈՑ ՄԱՍԻՆ

Նախ ասեմ, որ խօսքն այն հրահա-
նի մասին է, որով Սիւզին պատիւ արեց,
ևւ հենց իր ձեռքով վառեց իմ գլանիկը:
Սիւզին պատմեց նաեւ, թէ այդ հը-
րահանը, անցեալ լաւ օրերին, ինքը նը-
ւէր էր արել Բիգ Զոյին, որպէս նրա
հանդէպ ունեցած ջերմ սիրոյ մի գրա-
ւական: Սակայն, տարաբախտ Բիգ Զօն
իբ տաշնապալից ընդհանրին այն մոռա-
ցել էր վերջնել իբ հետ, մի բան, որ բո-
լորի հետ է պատահում:

— Միւս կողմից էլ, նստաբանակիցս,
երբ Սիւզին բացակայ էր, այդ հրահա-
նի մասին այլ բան պատմեց:

Նա ասաց, թէ Սիւզին որպէս իբ
հանդէպ ունեցած ջերմ սիրոյ մի առհա-
ւատչեայ, իրեն նուէր է արել այդ հրա-
հանը իբ ծննդեան օրը, ուր եւ ներկայ
է դռնուէլ Բիգ Զօն եւ շատ նախանձել...

Սակայն ես կարծում եմ, քանի որ
հակասութիւններ էլ կան, լաւ է, որ —
մէն ինչ հերթով պատմեմ:

Ճ

Քաղաքային այգին ամայի էր:
Այդ թերեւս դրանից էր, որ խոր ա-
շուն էր արդէն, եւ տերեւներից մերկա-
ցած թաց ու գորշ ճիւղերով ծառերը

չէին կարողանում հրապուրել մարդկանց
այլեւս: Եւ թերեւս դրանից էր, որ ե-
ղանակը մշտտ էր եւ օգուտ հազիւ նըշ-
մարելի անձրեւ կար: Ոոնաւ ցուրա էր:

Ես նստել էի այդու հեռաւոր նըս-
տաբաններից մէկի վրայ եւ վայելում էի
այդ մշտտ եղանակը: Իմ հոգը չէր:
Պէտք է ասեմ, որ ցուրտը եւ խոնաւու-
թիւնն ինձ վրայ չին ազդում: Տաքը՝
այս՝, բայց ցուրտն ու խոնաւութիւնը
որ: Յետոյ էլ ես զնայու տեղ չունէի: Ես
միշտ այդպէս եմ: Երբ զնայու մի տեղ
չեմ ունենում, քաղաքային այգի եմ զը-
նում: Պօսք կայ, որ քաղաքապետարան-
ներն այդ պարտէզները ինձ նման մենակ-
եացիների համար են հաստատել:

Եւ այդպէս, ես նստել էի խոնաւ
ցրտում եւ իմ հոգը չէր այն, երբ մէկը
հարցրեց.

— May I?

Ճիշդն ասած, չէր կարելի: Ես ուզում
էի մենակ մնալ: Այդուք նստաբաններ
շատ կային, այդ հարցնողը կարող էր
նրանցից որեւէ մէկի վրայ նստել, բայց
եկել իմ նստարանն էր սիրելի:

Գլուխս բարձրացրի:

Հարցնողը յիստուն անց մէկը պիտի
լինէր: Նա ջարդուած գլխարկ ունէր եւ

ծոռած անգոյն մի փողկապ: Նրա սպիտակ շապիկի օձիքն այնքան էլ մաքուր չէր: Սակայն նրա դէմքի վրայ մի այնպիսի արտայայտութիւն կար, որ թւում էր, թէ ինքն այնպիսի տէրն էր, նոյնիսկ անհուն ու անեզր ուղիւստների տէրը: Այդպիսի արտայայտութիւն այն սիրահարուածներն են ունենում, որանք կարծում են, թէ իրենք շատ արտօնուած մարդիկ են, որ սիրահարուել են:

«Մե՛ծ բան: Հա՛...», — նման դէպքերում բացառանում է իմ մի բարեկամը, որը ցիմիկ փելիտոփայտութեանն հետեւորէ է:

— Անշուշտ, անշուշտ: Համեցէք նրանցէք: Բայց զո՞րչ, նստարանը թաց է, — ասացի Հարցնողին:

— Նստարանը թա՞ց է: Oh, boy! — գոռարճացաւ նա, թէև նստարանի թացութիւնից ուրախանալու ոչ մի պատճառ չունէր:

Իրապէս, նա նստարանի թացութիւնը չզգաց: Նստեց թէ չէ, սոգերն իրար կպցրեց, վեր Հանեց եւ Հիացմունքով նայեց դեղնաուուն կօշիկների ծաղկակար ծայրերին ու յետոյ ինձ նայեց Հարցապան:

— Լաւ կօշիկներ են, — ասացի, ենթադրելով, որ նա ուզեց, որ իր կօշիկների մասին կարծիք յայտնեմ:

— You don't say! — ասաց անտարբեր եւ ազա աւելացրեց, — խօսքը կօշիկների մասին չէ: Ուզում եմ Հարցը նեւ, թէ դո՞ւք էլ ձեր կնոջն էք սպասում:

— Ոչ, — ասացի:

— Իսկ ես սպասում եմ... Ասեմ ձեզ, որ ես սպասում եմ: Կարծում եմ, որ դուք նրան կը տեսնէք: Yes, sir! Դուք նրան կը տեսնէք, — այնպէս խօսեց նա, որ կարծես ես նրան խնդրեւ-աղաչել էի, որ նա իր կնոջն ինձ ցոյց տար:

Ծա ուզեցի ելնել եւ դնալ, բայց ներքին քաղաքավարութիւնս չթոյլարեց: Քերտաւ այդ խենթութիւն է, բայց ես միշտ այդպէս եմ: Ասինք Հանրակառուութեան նստել եմ մէկի կողքին, որը դրաւեցրել է երկու տեղանոց նստարանի

երեք քառորդը, միայն մէկ քոտորդն ինձ թողնելով: Անյարմար է այդպէս կիսատ նստելը: Բայց ահա լայն տեղ բացուեց, նոյնիսկ, մի ամբողջ նստարան: Սակայն ես կառչում եմ իմ մի քառորդանոց տեղին, եւ չեմ փոխում ազատ տեղը, մըռտածելով, որ նստարանակիցս կարող է վշտանալ, որ ես չտրեցի իր ներկայութիւնը: Անշուշտ պարտադիր չէ, որ ես սիրեմ նրա ներկայութիւնը, բայց ներքին քաղաքավարութիւնս ստիպում է, որ ես մնամ իմ տեղում, եւ ես մնում եմ:

— Ո՞ւր է Հիմա նա, ձեր կինը, — Հարցրի մի բան ասած լինելու Համար:

— Կաղարանում:

— Մ'... — բացառանչեցի:

Նա ուշադրութիւն չգարճեց: Նորից երկու սոգերը իրարու կպցրեց, վեր Հանեց, նայեց նրանց ծայրերին: Ազա ուղերը վար բերելով, ասաց —

— Կինս ծաղարանում լաւ ժամանակ է ունենում:

— Մենա՛կ է դնում, — Հարցրի: Նա ծիծաղեց.

— Ոչ, միասին ենք դնում: Ես մի քիչ շուտ եմ դուրս գալիս, իսկ նա մըռնում է մի քիչ աւելի ուրախանալու: Կինս կենսասէր մէկն է:

Ազատ նստարաններ շատ կային: Ծա կարող էի փոխել տեղս մենակ մնալու Համար, բայց ինչպէս նախապէս ասացի, այդ բանը ես անել չէի կարող:

— Այս անձերը ձեզ թրջում է, — ասացի, որպէսզի նա կշի եւ դնայ: Նա վերեւ նայեց եւ ճանկեց օդը:

— Այդ ոչինչ բան է, — ասաց:

Երկուսս էլ մի պահ լռեցինք:

Բայց նա, յանկարծ, մի Հանելի բան յիշող մարդու նման ուրախացաւ: Ձեռքը ասրաւ դրպանը, դլանիկներ հանեց, մէկ Հատ ինձ տալարկեց, մէկ Հատ էլ ինքը վերցրեց: Երեւում էր, որ նա անփորձ ծխող էր: Բայց եւ այնպէս նա ետ դլանիկի թորուցքային ծայրը մի քոնի անդամ իսկեց իր ձախ բթամատի եղունգին, ինչպէս սպառնում էր Համար այդ անում են փորձառու ծխողները եւ դրեց դնչին: Նա անսահման երա-

նեյիութեան մէջ էր, երբ իր բանկոնի տակից, ինչ որ անյայտ տեղից, հանեց արծաթափայլ մի հրահան: Հանեց հրահանը, պահեց աչքերի տալիս եւ անուն հրճուանքով նայեց հրահանի մի երեսին, յետոյ շրջեց եւ նայեց երկրորդ երեսին: Յանկարծ ճակատը կնճռոտեց: Գրպանից հանեց թաշկինակը եւ զգուշութեամբ սրբեց հրահանի վրայի, իրեն երեսացող փոշին եւ շարունակելով հիանալ, ինձ հարցրեց.

- Հրաշալի է, չէ՞...

ձիւղն առած, այդ հրահանը մի բան չէր: Դրանցից ամէն տեղ կարելի է գնել հոտը իննսունինն սենթով (չհաշուած, անշուշտ, նահանգային եւ ճոխութեան հարկերը): Ուզում եմ ասել, որ այն երգիչն էր, ոչ իր ճարտարարուեստական կատարչով եւ ոչ էլ իր բարձր արժէքով: Ուզում եմ ասել, որ այդ հրահանը, օրինակ, Ձեռնիկ թագաւորի ունեցած հրահանի նման աղբամաղապու էր, որով նա (այդ թագաւորը) շնայած իր այլանդակ դէմքին եւ հպատակներին փոքր քանակին, կարողացաւ ամբողջեան մի գեղեցկուհու սիրտը գրաւել, եւ իր հարեմը տանել, պարզ է թէ ինչու համար:

- Լաւ հրահան է, - ասացի լուկ քաղաքավարութեան համար:

- Այս հրահանը, ոչ միայն լաւ է, այլ լաւագոյնն է ամբողջ աշխարհում, - իմ զովաստնքից անբարար ասաց նա:

- Ներեցե՛ք, - ասացի:

- That is O. K.!, - ասաց նա եւ բացելով փոքրիկ դորձիքի կափարիչը, բթամատով դարձրեց կայծանիւր:

- Ք՛է՛, ք՛է՛...

Ես կարծում էի, որ այդ հրահանը չպիտի վառուէր, բայց վառուեց: Նա վառեց իմ եւ իր զլանիկները:

Գլանիկը զօրաւոր տեսակներից էր: Բայց նա շտապելուց, թէ անվորձութիւնից, շատ ծուխ ներս տարաւ եւ հաղաց.

- Հի՛ւ, Հի՛ւ, Հի՛ւ...

- Այդ ծխախոտը խիստ տեսակի է, պէտք է զգոյշ ծխել, - ասացի:

- Ո՛ւ: Այդ հրահանից է: Երբ այս

հրահանով զլանիկ եմ վառում, գուրգուրանքից կոկորդա սեղմւում է եւ ես հազում եմ, - բացատրեց:

- Պէտք է, որ նուէր լինի այդ հրահանը, - դիտեցի ես:

Նա շնորհակարտութեամբ նախ ինձ նայեց եւ յետոյ հրահանին եւ նրա ղէմքը երանելիութեան մէջ զտնուող մէկի զէմքի փայլ տառաւ:

- Այո՛, նուէր է, - ուրախութեամբ հաստատեց նա, - Հիմա զուշակեցէք, թէ ումի՞ց:

- Ձեր կեռից, - ասացի:

- Bravo! Bravo!, - ուսիս հարուածեց նա այնպիսի ցնձութեամբ, որ կարծես ես զուշակել էի, որ մի օր նա այս երկրի միլիոնատէրերից մէկը պիտի դառնայ: Յետոյ, նորից հիացմունքով նայեց հրահանին եւ մեծ խորհրդաւորութեամբ ասաց, - կնոջս նուէրն է, այն էլ Big Joe-ի ներկայութեամբ:

- Բիգ Ջոյի՞, - հարցրի:

- Օ՛, - բացատրեց նա, - Բիգ Ջոն կնոջս նախկին ամուսինն էր: Մեր մէջ սիրային մրցում կար: Միւզին նրան թողեց եւ ինձ հետ ամուսնացաւ: Դրանից յետոյ էլ, Բիգ Ջոն միշտ մեզ մօտ էր գալիս (նա խնթի պէս սիրում էր Միւզին): Մի օր էլ իմ ծննդեան օրուայ առթիւ, Միւզին նուէր տրաւ այդ հրահանը: Բիգ Ջոն ներկայ էր: Նախանձից լաց եղաւ եւ զարձաւ ինձ ասաց.

- You son-of-a-bitch! Դու խորտակեցիք իմ երջանկութիւնը, որ ես ունէի Միւզիի հետ... Եթէ դու չլինէիր, Միւզին այդ նուէրն ինձ արած կը լինէր...

Միւզին էլ բարկացաւ, թէ.

« Իսկ դու, Բիգ Ջո, ջո անվերջաւոր կնճճեմանքներով, ջո զանգատներով եւ կշտամբանքներով դառնացնում ես Ջանիի եւ իմ երջանկութիւնը: Դու շնորհակալ եղիք, որ ես քեզ թոյլ եմ տալիս (իսկ Ջանն էլ չի արգելում այդ) որ երբեմն մեզ մօտ ես գալիս եւ վայելում իմ ներկայութիւնը»:

Այսպէս խօսեց Միւզին եւ զրկեց ու համբուրեց ինձ: Բիգ Ջոն նորից զպաց-

ւեց, նորից փղձկաց եւ թողցոյ զուրս փախաւ :

- Ինե՛ղճ, Բիւլ Զօ, - սասցի, - անշուշտ, նրան զժուար է եղել հաշտուել ալղճան մեծ կորուստի հետ...

Նա հառաչեց ասպետօրէն.

- Բիւլ Զօն ինքն էր մեղաւոր, եւ ուրիշ ոչ ոք : Նա շատ էր ուզում, որ ես ծանօթանայի իր կնոջ հետ : Իսկ ես ընդդիմանում էի... Ես ղիտէի իմ հմայքի մասին կանանց վրայ...

- Միթէ՞ չէիք կարող խնայել խեղճ Բիւլ Զոյին, - հարցրի :

- Ներեցէք ինձ, զուրս երբեւէ սիրահարուած եղե՛լ էք, - ներողամտօրէն ժպտալով հարցրեց նա :

- Ոչ, - պատասխանեցի :

- Տեսնում եմ այդ : Ձեր հարցումից պարզ երևում է այդ, - սիրային մասնազէտի պէս խօսեց նա, - ասեմ, որ Բանաբը : Երբ սէրը մեր սիրտն է մտնում, այլևս Բիւլ Զօ-Միւլ Զօ չէք հարցնում : Նա մեզ խենթ է դարձնում եւ, նոյնիսկ, իրապէս խենթացնում է... Ասեմ նաեւ...

Սակայն ես նրան ընդհատեցի.

- Հիմա ես ղիտեմ, թէ ինչու ես սիրահարուած չեմ եղել...

- Ինչո՞ւ, - ասելի շատ կշտամբեց, ճան հարցրեց նա :

- Որովհետեւ, երեւի, ընազգով ղիտցել եմ, որ սիրահարուածները խենթանում են, իսկ ես խենթութիւնից վախնում եմ, - իմ խելքով ուղեցի կատակելի ես :

Նա ինձ ղիտեց ուշադիր եւ նրա ղէմքից հասկացայ, որ նա իմ արած կատակն, իր հասցէին վերադարձնել ընդունեց : Բայց եւ այնպէս անմիջապէս մտառացաւ իր վերաբերեալ իր ընդունած վերադարձը, երբ լրջօրէն ասաց.

- Սէրը ընազգներ չի ընդունում... Սէրը սրտից է դալելս, եւ ասանց օղ ու ձախ նայելու, զրում-զնում է... Ասացի արդէն, նոյնիսկ խենթացնում է...

- Բա՛հ... - զարմացայ ես :

- Այդպէս է, - հաստատեց նա :

- Տեսնում եմ, սէրը մի շար քան է, - ասացի :

- Սէրը քան չէ : Սէրը հողեկանութիւն է : Յետոյ էլ, սէրը շար չէ, այլ մի վսեմ զդացում, - բացատրեց նա :

- Ես այդ չըիտէի, - ասացի :

- Ամէն ինչ կարդի է, - ասաց նա եւ շարունակեց իր սիրային պատմութիւնը, - երբ Միւլիի հետ առաջին անգամ իրար տեսանք, երկուսս էլ զգացինք, որ մենք իրար համար ենք ծնուել, Բիւլ Զօն աւելորդ է եւ մէջտեղից պիտի վերացուի...

- Ինե՛ղճ Բիւլ Զօ, - ասացի, - հանդիս՝ դուստրութեան զո՛հ պնայած օսկորներիդ...

- Սպասեցէք, - ասաց նա :

- Ուրե՛մ... Ա՛հ, իսկ ես կարծեցի... - ասացի :

- Սպանութիւնը Միւլիի գաղափարն էր :

«- Ես նրան կը թունաւորեմ, - ասաց նա, - թոյն կը լեցնեմ Բիւլ Զոյի պիտու բաժակի մէջ, Բիւլ Զօն կը խմի, կը քնի եւ էլ չի արթնանայ... Բիւլ Զօն շատ ու շատ է սիրում ղիտի խմելը :»

«- Պէտք չկայ դրան», - ասացի :

«- Ինչո՞ւ : Միթէ՞ դու չո՞ր մեքով ես ուզում նրան սպաննելը, - հարցրեց Միւլին ինձ համարելով :

«- Ոչ, - ասացի, - Բիւլ Զօն ինձ ճանաչում է... Նա իր կամքով քեզ կը ղիջի...» :

- Սակայն, Միւլին շատ էր ուզում թունաւորել Բիւլ Զոյին :

«- Թող իմ մեքով թունաւորեմ նըրան», - յամուռեց նա :

«- Միւլի՛, իմ ղթառաս սիրուհի, - ասացի, - ես չեմ կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ ես այդքան ցանկանում թունաւորել Բիւլ Զոյին :

- Այդտեղ իմ անմահ Միւլին լաց եղաւ, որ ես չեմ կարողանում հասկանալ իր սէրն իմ նկատմամբ, եւ խօսեց արցունքների միջից :

«- Ձան, - ասաց նա, - ես ուզում եմ Բիւլ Զոյին թունաւորել, որովհետեւ այն աստիկութեամբ, որ հիմա քեզ եմ սիրում, նոյն աստիկութեամբ էլ, ես սուս եմ նրան» :

« Բայց այդ նորից պատճառ չէ, որ դու քուսակներս Բիզ Ջոյին», - ասացի:

« Պատճառը վրէժխնդրութիւնն է, Ջան, - շարունակեց լաց լինել Սիւզին, - վրէժխնդրութիւնն այն պատճառով, որ նա քեզ ինձ հետ վաղ շնորհակցեցեց եւ այդքան տարիներ իմ սէրը կորուստի մասնեց»:

- Մեծ սէր է, չէ՞, - իմ կարծիքը ուզեց դիտնալ նստարանակիցս:

- Այդտե՛ս, - ասացի:

- Ս', ես միշտ մոռանում եմ, որ դուք երբեք չէք սիրելի:

- Ճշմարիտ է, - ասացի:

- Անշուշտ ես Սիւզին հանգստացրել եւ ճանապարհ դրեցի: Յետոյ էլ հեռախօսը վերցրել եւ Բիզ Ջոյին ինձ մօտ կանչեցի: Այստեղ պէտք է ասեմ, որ Բիզ Ջոն սարսփազգու մարդ էր, բայց նա ինձանից զուլում էր: Սրբ նա ներս մտաւ եւ նրան ասացի:

« Բիզ Ջո, դու դիտես, որ սէրը զորաւոր զգացում է»:

« Կիտեմ, Ջան», - պտտասխանեց նա:

« Երեւի դիտես նաեւ, որ իրական սէրը վերջին սէրն է», - ասացի ես:

« Ի՞նչ է այդ նշանակում», - հարցրեց նա:

« Այդ այն է, որ Սիւզին այլեւս քեզ չի սիրում», - ասացի:

- Նա թէեւ դունատուեց, բայց սկզբնեց ծիծաղել:

« Եթէ Սիւզին ինձ չի սիրում, ապա ո՞ւմն է սիրում», - հարցրեց նա:

« Սիւզին հիմա ինձ է սիրում, Բիզ Ջո», - ասացի:

« Անշուշտ կատակ ես անում, Ջան», - էլ աւելի դունատուեց նա:

« Ոչ, Բիզ Ջո, լուրջ եմ ասում», - ասացի:

« But I love Susie», - ասաց նա:

« Այդ թէ՛ն է, Բիզ Ջո, - ասացի, - դու սիրում ես Սիւզին, բայց Սիւզին քեզ չի սիրում: Սիւզին ինձ է սիրում, ես էլ Սիւզինն եմ սիրում: Մէկի գէմ երկուս:

« Ի՞նչ ես ուզում ասել, Ջան», - հարցրեց նա:

« Այն, որ դու չպիտի խանդարես, Սիւզիի եւ իմ երջանկութիւնը», - ասացի:

« Եթէ դուք այդպիսի մի բան ասե՛ք, ես ձեր երկուսին էլ կը սպաննեմ... Անպայման կը սպաննեմ», - ասաց Բիզ Ջոն:

« Բիզ Ջո, դու ինձ չես կարող ըստաննել», - ասացի:

« Կարող եմ», - ասաց նա:

« Ձեռ կարող», - ասացի:

- Անշուշտ, Բիզ Ջոն կարող էր ձեռ սպաննել, - կարծիք յայտնեցի ես:

- Ինչպէ՞ս կարող էր, - թուաց, թէ վախեցաւ նա:

- Ինչպէ՞ս: Շատ պարզ: Նա կարող էր դանակը ձեր ձախ կողքը խրել եւ ձեր աջ կողքից դուրս բերել, - ասացի:

- Նա չէր կարող դանակը իմ ձախ կողքը խրել եւ աջ կողքից դուրս բերել, - բացատրեց նա:

- Այն ժամանակ նա կարող էր ինքնաշարժը ձեր վրայ գլել, - ասացի:

- No, sir, he could not!, - ասաց նա:

- Yes, sir, կարող էր, - շարունակեցի պնդել ես:

- Wait a minute!, - ուզեց վէճը շարունակել նա:

- Կարող էր, - ընդհատեցի նրան, - չեմ կարծում, որ Բիզ Ջոյի ձեռքերը կայտած էին:

Նա ուզեց պատասխանել, բայց ձեռքի հրահանը արագօրէն պահելով, ասաց շփոթուած:

- Ահա՛, պայիս է կիսս:

- Ես չբոլեցի դէպի աջ:

Անձրեւախառն մշուշով պարտաբաժնեմ ծառուղու ծայրին մի կնո՛ղ կերպարանք էր երևում, բայց դժուար էր տեսնել նրա դէմքը:

- Դուք ինչպէ՞ս դիտէք, որ նա ձեր կիսն է, - հարցրի:

- Սէ՛րը, պարտն, սէ՛րը... Սէրն է, որ թերազրում է... Անշուշտ, դուք, որ երբեք չէք սիրել, ձեռ համար այդ ան-

հասկանալի է... - պատահականեց նա կշտամբանցով եւ ոտքի կանգնելով գըլխարկը շարժեց օդում, - Honey! Baby! Ես այստեղ եմ, այստե՞ղ...

Սո սամաչեցի: Իբրպէս, ես որ երբեք չէի սիրել եւ չգիտէի սիրոյ ուժը, ինչո՞ւ արեցի այդ անհեթեթ հարցումը: - Երեցեք, - ասացի:

Սակայն, նա իմ ասածի վրայ ուշադրութիւն չդարձրեց: Կանգնել էր կնոջ կողմէն էր նայում եւ ինչ որ մտածում:

Բիչ յետոյ, յոգնած քայլերով մեղ մօտեցաւ, արտաոտոց մարմնով եւ արտաուոց տեսքով, միջին տարիքի մի կին: Նա տարիակ կուրծք ունէր եւ նոյնքան աստիակ կրնէ, բայց աչքի զարնոց մեծ սրտվայն: Նման անտառարնակ այն կանանց, որոնք սովից խոտ են ճարակում: Ուտում են խոտը, ուտում եւ ինչքան շնն կշտանում, այնքան մեծացնում են իրենց աստմոքաները: Սակայն տիկինը նորածնութիւնների խիստ հետեւող մէկն էր երեւում: Երկազնր դռնալու համար, նա այնքան վտա դեղին էր ներկել իր մաշկըրը եւ յոնքերը, որ դրանք թւում էր չէին ներկուած, այլ ներկով լողողում: Թւում էր, որ այդ կինը ճանկել էր իւրոտ ներկը եւ քսել մազերին ու յոնքերին: Երկտասարդ կրեւալու համար, նա հազել էր ծնկերից վեր կարճ շրջազեւտ եւ պարմանուհու ծաղկաւոր ու թափանցիկ կարմիր գուլպաներ:

Սո ոտքի կանգնեցի եւ գլխարկն հանեցի:

- Բարեւ ձեզ, տիկին: - Նստի՛ր, Honey, նստի՛ր, - ասալարկեց նստարանակիցս:

Ես իմ շոր տեղը տիկնոջը ասալարկեցի: Նա նստեց ասանց շնորհակալութիւն յայտնելու:

- Ինչո՞ւ փոխար, You, Old Dog, - ասաց նա նստարանակիցիս, երբ երեքս էլ նստեցինք:

- Honey! - Don't «honey» me! - խիստ կերպով նրան ընդհատեց տիկինը եւ դարձաւ ինձ, - դուք երեւի Բիզ Ջոյի բարեկամներէք էք...

- Ո՛չ, - ասացի, - Բիզ Ջոյի մասին ձեր ամուսինն ինձ պատմեց:

- Սա՞, - գլխով արհամարհօրէն նքատարանակիցիս ցոյց տուեց նա, - Ի՞նչ պատմեց այդ դտամեալը Բիզ Ջոյի մասին:

- Միայն մի քանի բառ: - Նա իբաւունք լուսնի Բիզ Ջոյի անունը տալու: Բիզ Ջոն մարդ էր, իսկ սա...

- Honey!... - տիկնոջը շտապեց ընդհատել նստարանակիցս:

- Shut up!, - ասաց տիկինը, - եւ նորից դարձաւ ինձ, - Բիզ Ջոն առիւծ է, իսկ սա նապաստակ... Բիզ Ջոն ամէն ամիս մի դանձարկղ էր կտրում, իսկ սա երեկոյան մամը վեցից յետոյ վախենում է փողոց դուրս գալ... Բիզ Ջոն...

Նստարանակիցս, քանի կինը խոտում էր, անհանդիստ շարժումներ էր անում տեղում, փնջում էր ու տնջում: Վերջում չդիմացաւ եւ ոտքի կանգնելով ընդհատեց Սիւզիին:

- Honey, թերեւս պարոնին այնքան էլ հաճելէ չէ այդ խօսակցութիւնը...

- Նստի՛ր, - հրամայեց պճնազարդ կինը, - վարժեցուած շան պէս նստի՛ր, եւ առջեւիդ թաթերդ օդում շարժի՛ր, երբ քո տիրուհին խօսում է...

Նստարանակիցս նստեց: Բայց փոխանակ ձեռքերը շարժելու, դէմքը շրջեց: Այդտեղ էր, որ տիկինը խման կնոջ իր խոպոտ ձայնով ծիծաղեց: Միծաղեց այնպէս, որ ամբողջ մարմնովս սարսուռցի եւ այդ կինը աստի զարձաւ: Այդ ծիծաղը թուաց, թէ դեհեհեց եկաւ:

- Բիզ Ջոն... - նորից ինձ դարձաւ տիկինը:

- Միւշի՛ր... - նորից փորձեց ընդհատել նստարանակիցս:

- Drop dead!, - հենց այնպէս ասաց տիկինը եւ շարունակեց, - սակայն իմ եւ Բիզ Ջոյի երջանկութիւնը միայն մի քանի տարի տեւեց: Մի գիշեր, երբ Բիզ Ջոյի հետ գրկուած մեր սիրոյ մասին էինք խօսում յափշտակուած, ուստիկանները պատուհանից ներս ընկան եւ նրանցից մէկը դուռը բացեց: Բիզ Ջոն առիւ-

ծի պէս մոնչաց եւ ձեռքը տարաւ բարձի տակ պահուած ատրճանակին։ Սակայն ես հրեցի ատրճանակը եւ նետեցի մահ-ճակատի տակը։ Եթէ Բիդ Ջոն այդ օրերից մէկին օպանէր, ինձ էլ պիտի բռնէին եւ նրա պէս դաղ-քամեբայում շնչահեղձ անէին։ Բիդ Ջոնի ձեռքերը երկաթէ օղակներէ մէջ առան, իսկ Բիդ Ջոն, poor guy-ը, դռում էր։

« Եթէ իմ Սիւզիին մատ կպցնէք, ես ձեր բոլորին կտոր-կտոր կ'անեմ, ես Բիդ Ջոն եմ, դիտցէ՛ք... » :

– Ինձ նկարեցին անկողնու մէջ նըստած եւ անկողնուց դուրս։ Յետոյ էլ ինձ նկարեցին Բիդ Ջոնի հետ համբուրուելիս եւ յետոյ էլ առանձին։

Միւս օրը քաղաքի եւ համարեա՛ւ ամբողջ երկրի թերթերը իմ նկարները դրեցին իրենց առաջին էջերէ վրայ, նախանձ առաջացնելով բարձր դասի կուսանց դասարկ արտերում։ Թերթերը տըպեցին թղթակիցներէ ինձ հետ ունեցած հարց եւ զրոյցը։ Երեք օր յետոյ, Հոլիվուտից եկան եւ ինձ առաջարկեցին խաղալ իրենց շարժապատկերներում... Ես մերժեցի... Բիդ Ջոնի ձեռքակալման վիշտը այնքան մեծ էր, որ ես չէի կարող... :

« Մե՛ղք, – առաց եկած բեմադրիչներէց մէկը, – ձեր մերժումով, մեր Էրկրի շարժապատկերային արուեստը կորցնում է մեծ ապագայ խոստացող իր աստղերից մէկին » :

– Սիւզի... Ձեռ կարծում, որ մեր գնալու ժամանակն է, – համարձակուեց ասել նստարանակիցս։

– Get lost! – բարկացաւ Սիւզին, – Get lost and leave me alone!

– O. K.!, Սիւզի, O. K.!, – համաձայնեց նստարանակիցս, բայց տեղից չշարժուեց։

– Բիդ Ջոնին բանտ տանելուց յետոյ,

այս մտղուկը, – գլխով նստարանակիցին կողմը անելով, շարունակեց հաստերան Սիւզին, – ընկաւ ետեւիցս ու էլ վաղ չանցաւ։ Ասեմ, որ Բիդ Ջոնի ժամանակ, նա Բիդ Ջոնի ստուերից անգամ սարսափում էր, իսկ հիմա աչք էր դրել նրա դեղեցիկ կնոջը։ Թո՛ւհ, անբարոյական... զնաց-եկաւ, եկաւ-գնաց (ինչու չէ դեղեցիկ ու երիտասարդ կին էր գտել) մինչեւ որ այս Old Dog-ը կարողացաւ ինձ իր դրամով գնել։ Գնեւ եւ հետո պահեւ։ Եւ այն էլ դիտէք ո՛ւր, Բիդ Ջոնի անկողնում, ինչպէս անապատային փորտոլը առիւծի կնոջ հետ, առիւծի որջում։ Եւ ահա երկու տարի է ինչ վայելում է դեղեցկութիւնս եւ երիտասարդութիւնս։ Թո՛ւհ... Անամօթ... :

– Թո՛ւհ... Անամօթ, – կրկնեց Սիւզին, գլուխը վար բերաւ վշտակաւ, մըտածեց-մտածեց եւ մէկ էլ իր մեծ ու անասնելի բերանի ամբողջ ուժով թքեց հէք նստարանակիցիս երջանիկ երեսին, – Թո՛ւհ... :

Նստարանակիցս, իր բաճկոնի վերեւի փոքրիկ գրպանից հանեց մի մեծ ու աղտոտ թաշկինակ, եւ խոր լրջութեամբ սրբելով երեսին իջած թուղը, որտեղած մեկմ ու զգոյշ կշտամբանքով.

– Սիւզի, Baby, այդ մի քիչ շատ է... :

– Շա՛տ է, – հարցրեց Սիւզին եւ նորից ինձ սարսուռ պատճառելով, ծիծաղեց իր գգուելի ծիծաղով, – լա՛ւ, միւս անգամ մի քիչ պակաս կը թքեմ քո այդ աղտոտ երեսին... :

– Տեսնո՞ւմ էք, – ինձ բացատրեց նստարանակիցս, – մենք ազատ յարաբերութիւններէ ամուսնութիւն ենք կազմել... :

– Դժոխքը զիս՛ թո անպակառ ամուսնութեան ազատ յարաբերութիւններով, – նորից բարկացաւ Սիւզին։

Ս. Ս.

(Վերջը յայտնի չիւլով)

ԻՄ ՅՈՅԱ...

Խնդացել եմ ես քեզ հետ,
 Ինչպէս ազրիւր հանդերում, -
 Ու մնացել է հիմա՝
 Ազօտ ու քնքաշ լույ մի արանետ,
 Թափուր, փշուր իմ սրտում...
 Բայց մի օր,
 Երբ չար հոգները դադարեց,
 Մենք կը ծնուենք էլ մարից...
 Կը ծխածանուեն ծէգերը
 Մեր հագինքի,
 Կամուրջներ կը կապուեն երկրում,
 Կը ծաղկեն դաշտերը բնորի,
 Սրտերում կը ծագի արեւ,
 Արեւ չերմ, ու սա՛հ անէմքից,
 Վշտերը կը դառնան զանգակ՝
 Խնդուքին կ'անձրեւի երկնից...
 Եւ կը նայեմ ինձ,
 Դու՛ կը նայես քեզ,
 Եւ երկուսըս էլ կը զգանք՝
 Որ աշխարհ եկանք մենք մարից...

Մեր երակների յարդ ազինելում
 Դարումը կ'անցնի,
 Դարնան արեւով
 Կը ծպտայ մարից
 Խրոխտ ակացին,
 Հենց այդ ծառի տակ
 Կը ննջենք խաղաղ,
 Յօզ կ'իջնի գուարք՝
 Դաշտերը կ'ըլլան ծաղիկ, բուրաստան,
 Համերգի մէջ քնուքնան՝
 Մենք կը բազմանան,
 Ու դա աշխարհին կը քուայ երազ,
 Ջարմանք ու խորհուրդ,
 Դէ՛հ, ա՛յ տարածիք,
 Տարածի՛ր քեւերդ,
 Ի՛մ կենտրոն յոյս
 Տա՛ր սիրտդ ինձ,
 Եւ օրօրենք ակացին
 Երազայի՛ն ակացին...

ԱՐՇԻ

Քեհրան

ԱՐԱՔՍԻ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Ո Ղ Ջ Ա Կ Է Ջ Ր

Ուղեմուր կը քալէր նեղ փողոցէն. այն փողոցէն, որուն մէջ տարիներու ընթացքին զինք կը մտանանջէին. իրենց հին փողոցն էր այս, որուն մէջ տարիներ երթնելիկած էր եւ որուն ստուալքը կը կրէր թերեւ էր կօշիկներուն կնիքը... ֓էլը կը փաթթուէր զիստերուն եւ արգելք կը դառնար ուղիղ քայլուածքին. նայուածքը գետնին հետ ձուլած, դատապարտալի մը պէս գլուխը կախ, կ'երթա՛ր, կ'երթա՛ր...

- Քոյրս զիս չ'ուզեր շատ տեսնել եւ ես դեռ կ'երթամ իր մօտ, - կը մըտածէր Ակնէս շփոթաւար, - սակայն ո՛ր կրնամ երթալ... ո՛վ կը սպասէ ինձի:

Նայեցաւ ըսր կողմը. Մայիս մէկն էր, խանութները փակ էին եւ փողոցը զրեթէ ամայի. քանի մը շուներ կը սըլըջտային խոշոր ոսկորի մը մօտ: Այնքա՛ն յոգնած էր, աշխատած էր կարգ մը գծադրութիւններու վրայ, որոնք պիտի դրուէին ցուցադրութեան մը մէջ. հիմա որ լրացած էր գործը, կը զգար անարին մտաներուն մոլիւզին պրկումը, եւ ծանր խոնջնջէն հաք միայն կը զգար որ ողնայարը կը շարժարուէր տակաւ...

Արգէն երակին մէջէն արիւնը թրթրուուն պատմուածաններ հագած կը բորբոքէր: Ինչո՞ւ այդպէս էութիւնը կը խոտ-

վէր ամէն անգամ որ քրոջը ուզէր երթալ. ո՛ւ, միայն ինք կը տանէր ծանրութիւնը այն տազնապին, որ կ'ունենար ամէն անգամ որ ոտքերը ուղղէր դէպի քրոջը տունը. միայն ինք դիտէր, կը հասկնար, եւ սիրաբ լեցուն էր բազմաթիւ ճեղքերով...

Խուզարկու ակնարկ մը նետեց քրոջը տան վրայ, եւ ստուերի մը պէս արագ ելաւ աստիճաններէն. հիմա սիրտը կը կնկուէր գողութեան մէջ բռնուած աղու մը սրտին պէս. քիչ մնաց միտքը փոխէր, էտ դառնար տուն, շլտէր քրոջը անտարբեր ըլլա՛նք... դո՛ւն ես, Ակնէսը: Սակայն պարտասուն կունակը այնքան կը ցաւէր, որ պահուն աչերսը չլսեց եւ շարունակեց ելլել քաղձաթիւ աստիճաններէն... մտքէն կը համբէր զանոնք, մանուկի մը պէս հետաքրքիք, որ առաջին անգամ կը մազլցի տան մը մը աստիճաններէն: Հասաւ: Ծռնչ մը առաւ:

- Երանի թէ տունը չըլլայ, - մտածեց եւ ճակատը մթազնեցաւ պլպլացող ճրագի մը վտիտ լոյսին պէս...

Քրոջը փոքրիկ տղան բացաւ դուռը:

- Մայրդ ո՛ւր է, - մըմնջեց գողաւար:

Մինչ պզտիկը ցնձուլեան ճիւղեր

արձակելով՝ բռնեց խոհանոցին ճամբան:

Ակնէս նայեցաւ շորս կողմ: Տարիներէ ի վեր նոյնն էին իրերը, բացի կարգ մը մանր փոփոխութիւններէ, նոյն կահաւարստները, պրուինին ցից, պոռոզ եւ հպարտ մարդոց նման՝ կը տիրապետէին պատկանելի միջոցին մէջ. այդ իրերը, որոնց հետ տարիներու ընթացքին ընտելացած էր, հիմա չքեղ վեհաթիւսմար կը սպասէին կարծես իր յառերուս, զգուսնքին... Վերերու հետ մը տեքմութիւնը մարդկային հաղորդակցութիւններէ աւելի անկեղծ է, խորհեցաւ, եւ ժպտ մը զծուեցաւ կծկուած շրթունքին վրայ:

Դիմացի զբաղարանին ապակիին կից դրուած էր զբոլը ամուսնոյն իւղաներկ մէկ նկարը: Նայեցաւ երկար: Կարծես բան մը կ'ուզէր պրպտել այդ իւղաներկին դոյներուն մէջ: Վաղուոր տղայ է, մտածեց եւ ձեռքը տարաւ ճակատին...:

- Ծն ալ ամուսին մը ունէի ատենին, ան ալ արուոր տղայ էր, - ըսաւ սրեքին մեղմ ձայնին հետ, Մատենբը կ'երեւային դառնաթախիծ երերումով:

- Ծն ալ շատ զեղեցիկ տուն մը ունէի, կը խօսէի ամէն զոյգի հետ, կը շոյիի զանոնք, զբերքը բարեկամներն էին, պատերն իսկ կը զգային հետս, կը ստանային հարուածներս եւ կամ... զբզանքս, մէկ բոպէի մէջ կորսնցուցի բուրբը, բուրբը...:

Աչքին առջեւ եկաւ Մորիսը:

- Մորիս...:

Վայրկեանին մտայութիւնը կնճռոտեց բերքը... անուն մը կը յիշէր հիւստ... Անժէլինա... Անժէլինա...:

Եւ այդ անունը կը զեպերէր երակներուն մէջ, ուզեղին խորքը...:

- Ե՞ս եղայ անոր մահուան անուղչակի պատճառը:



Մորիսին հանդիպած էր սրճարանի մը անկիւնը... խօսած էին Ծանօթներու

պէս... եւ ձեռք ձեռքի քարած էին Ժամեր շարունակ, իրարու պատմելով իրենց իրերը...:

- Կինս երեք տարիէ յաւէտ կորսուցուցած եմ. աշխարհի վրայ անձ մը ունիմ միայն, Անժէլինա է, զաւակս:

«Անժէլինա», Լօթը տարեկուն անմայր աղջիկ է: Որքա՞ն ուղեց նոյն բուսիկին բռնել Մորիսին ձեռքերէն, զգուսնոր տղանու սրտին սեպիկն բարստիւնը...:

Արաստուազօ՞ւ աչքերով երկար նայած էին իրարու եւ հասկցած էին որ զաւակ մը կար մէջտեղ, եւ որ մինակ էր, մըրիկէն փրցուած կանանչ տերեւի մը պէս...:

Ակնէս երկար եւ երազային ամիսներ տեսաւ Մորիսն ու Անժէլինան. զբզանեց փոքրիկին երկար թարթիչները, անուշեղէններ տարաւ անոր, ինչպէս իր հետ... սակայն, աղջիկը միշտ նայածքը յառած կէտի մը, կանակը Ծընած, բռնադրօսիկ կը ժպտէր, կը ժպտէր ցնորային էակի մը, որ Ակնէսը չէր հարկաւ...:

Սակայն ինչ կը սիրէր Մորիսը. եւ որ մըն ալ առանձնացան փոքրիկ տան մը մէջ, տարիներու եւ օրերու. շատաւը սպասելու համար...: Այլեւս պիտի ունենար երիտասարդ խանդը ուրիշը երջանկացնելու, ուրիշով ապրելու, եւ սիրտը կը արփէր ուժգին, եկեղեցիի մը դռանը նման... եւ Ժամերը կը սահէին աղօթքներու մրմունջին պէս:

Երջանիկ էր այն ատեն... Անժէլինա «մայր» կը կանչէր իրեն եւ աչքերուն կը նայէր անճառագայթ բերքով: Ինչ կ'անցնէր - կը դառնար այդ մանուկին բզբոտուած ուղեղէն ներս. միթէ չէ՞ր ստանար պէտք եղած զորովը. միթէ չէ՞ր գրաւեր ամէնուն ուշադրութիւնը եւ փաղաքշտնքը: Ժամեր կ'անցընէր անոր կողքին, կը փաթթուէր իրեն եւ յաճախ կը համբուէր զայն...: Սակայն...:

Դիւերները կը լսէր փոքրիկին մըրմունջը եւ անհուն մղձաւանջով կը փաթթուէր Մորիսին կուրծքին՝ պարտաւած

եւ վարձանական ցնորքի նման ոչնչացած էութեամբ: Մութին մէջէն կը կարծէր տեսնել Անտէլինային մայրը, կիսամերկ, մազերը մինչեւ ծիծերը ձր-զած, որ թեւերը երկարած կը մտնար Մորիսին, եւ կ'ուզէր զայն յափտակել: Իրմէ: Ա՛հ այդ անուիի դիւերները, որքա՛ն երկար էին եւ սրքա՛ն կարճ...:

Մորիս բան մը չէր հասկնար... Ինչպէ՛ս պատմէր այս բոլորը: Ինչպէ՛ս բացատրէր այս: Երբեմն, երբ Անտէլինա փախէր իրմէ, այնքան հոգին կը պատանդուէր սեւութեամբ, որ ժամերով գլուխը կախ, աշխատանքը մկած, լսնատարկեալի մը նման կը սպասէր ազնկան վճիռին:

Ի՛նչ օրեր էին այդ օրերը...: Որքա՛ն դժուար էր մանուկ մը խաբել:



Օր մը, Անտէլինա հիւանդացաւ...: Այս անգամ ծանրօրէն: Ակնէս խելագորի մը պէս կը դառնար իր շուրջը, բոյց կարծես կը սպասէր վախճանին եւ չէր ուզեր ընել ամէնէն կարելին: Սիրտը կարծես անդամալուծուած էր եւ հոգիին լարերը կեցած: Արցունք չէր որ կար աչքերուն մէջ, այլ բորբոքած համբերութիւն... Ի՛նչ... այդ ատեն զգա՛ց արդեօք, թէ Անտէլինա պատնէշ մըն էր եւ պէտք էր քանդուէր... չէ՛... չէ՛... երբե՛ք չէր ուզած անոր մահը... եւ սակայն բան մը շըբաւ անոր կեանքին համար: Կը հարցնէր ինքն իրեն: Ինչո՞ւ... Ինչո՞ւ այդքան պարագայական եղաւ նահատագրին զտուանցանքը, ինչո՞ւ սփռաց կեանքին բեւեռին, եւ ձգեց ամէն բան դիպուածին եւ թոյլ բարբարոտութեան...: Թաքուն իդ մը ունէր մէջը: Մորիս իրեն պիտի ըլլար ամբողջովին: Եթէ քիչ մը կանուխ բժիշկ կանչած ըլլար, Անտէլինա պիտի տպրէր եւ չգալակը մը ըլլար...:

Ակնէս մատները կը կրծէր մոլեգնօրէն: Հեծկտանք մը ճեղքեց ուղեղին երակները: Գլուխը առաւ ափերուն

մէջ...: Մորիս մեկնած էր... սակայն ինչպէ՛ս... Ինչո՞ւ...:

Օր մը, Անտէլինային մահէն երկու ամէս ետք, երբ Մորիսին հետ իր զրոյշը եկած էին, տապանաքարի նման ծանրացած գոյութիւններով, հասկցած էին ոչ ամէն բան վերջացած էր: Մարդիկ կը խօսէին... կը վճռէին... ջոյրը կը խօսէր...:

– Մորիս, եթէ աւելի կանուխ բժիշկ կանչէիք, Անտէլինա պիտի ապրէր: Եւ ես վստահ եմ ասոր... այդ աղջիկը անհուն սիրոյ պէտք ունէր... Եւ Թիֆույիսն ալ վրայ հասնելով՝ զգեսանեց զայն Ֆիզիքական ճմուռէ մը ետք... Գատասխանատու էք անոր մահուն:

Ինչպէ՛ս կրցած էր իր ջոյրը խօսիլ այս բաները: Ինչպէ՛ս... Ինչո՞ւ նոյն ընպէն չէր պատասխանած այդ խօսքերուն, չէր վանած միջոցին մտախոռոչը, որ կը լեցուէր կոկորդին մէջ եւ կը խեղդէր զինք...: Լուս վերադարձած էին տուն... Սակայն ամէն ինչ դեբիթ վերջացած էր, վերջացած վարդագոյն օրերը, տազնապարից դիւերները, հնչիւն ընտրը սիրոյ մտերմութեան... Օրերով չէին խօսեր իրարու հետ: Միայն Մորիս, երբեմն, բան մը կը պահանջէր եւ այսքան: Այսքա՛ն լուս կրցաւ մտնալ, այսքա՛ն ապերախտ էր անոր հոգին, այսքա՛ն մարդոց խօսքերը վիճ կը բանային սրտին մէջ... ուրեմն ի՛նչ էր մեծութիւնը, ի՛նչ էր զգացումը...:

Գիշեր մը լուս մեկնեցաւ Մորիս, իրարու ձեռք իսկ չսեղմեցին... շրջաւ անոր առջեւ...:

Հիմա որ ամէն ինչ կորսնցուցած էր, ջոյրը դադանօրէն չէ՛ր հրճուէր այս բոլորէն, ջոյրը՝ որ կ'ապրէր հանգիստ ամուսնին կողքին, մինչ ինք միմաղի էր, միմաղի, մոռալ զբքի մը պէս...:

– Որքան ատենէ որ հոս ես, – ըսաւ Մորիս եւ վարանքով նստաւ բազկաթոռին վրայ:

Այս անբաղձալի վիզիթ-ները տեսակ մը խառնաշփոթութիւն կը ստեղծէին ջրովը էութեան մէջ. ինք ընտանի-

քի եւ պատուի տէր կին, իսկ քո՛յրը, Ակնէ՛սը...

- Անցեալ օր կրկին Վանիկեանները այցելութեան եկան, խօսքը բացին, ձանձրացայ այլեւս ժողովուրդին ըսիւ ըսաներէն... Իրապէս կը զրգուեն շիրիւնքս: Գեղի բան մը ըսեմ, Ակնէ՛ս, Փարիզ դեմա՛, Հոն թերեւս գտնես քեզի պէս արուեստագէտները եւ ապրիս Հետերնին, անուշաքարաւորութեամբ Հոսկարգ մը տուներու մէջ նոյնիսկ քեզ ճոճադործ» կ'անուանեն, եւ դիտես, այդ կը վնասէ մեր բոլորին...:

Ակնէս արհամարհանքով նայեցաւ քրոջը ձեռքերուն, ո՛չ մէկ արցունք տեսաւ անոնց վրայ, կը տառապէ՞ր այս կինը արդեօք: Իայց ինչո՞ւ, ինչո՞ւ ձեռքերը չէր կարկանդակ իրեն եւ բան մը չէր հայցեր: Ակնէս գիտէր որ անոր ողորձելի սրտին մէջ իսկ դոնէ պէտք էր դըտնուէր մշտադէշեր հառաչանքի մը կայծը: այո՛, հակառակ որ քրոջը ամուսնութիւնը բախտաւոր եղած էր, այդ աղջիկը պէտք էր որ տառապանք մը տեսնար. անոր անգուրջ աչքերուն նայեցա՛ւ, նայեցա՛ւ երկար եւ վերջապէս դառա՛ւ, գտաւ այն առանձնութիւնը, զոր կ'ապրին խարուած կիները... «Ամուսինը զինք կը խարէ»: Գոյրը իրեն չէր խօսեր, միայն տղմուտ մորմօք մը կը ձըզէր այսպէս հուսիւններ մէջ եւ ինք կը սքա՛ր, այո, կը սքար անոր կողովուրդի մտնուած հոգիին ձայնը: Ինչո՞ւ ժողովուրդին խօսքերը կու գար իրեն ըսելու. այսքան սղտիկ էր ան, այդ ուսեալ աղջիկը... Ինչո՞ւ այսքան կը փոքրոնար դէմը. կը նախանձէ՞ր իր թշուառութենէն եւ վէրքերէն. կարելի՞ էր այս միթէ. կարելի՞... Նայեցաւ բրբերուն, անոնց մէջ տեսաւ մը վատ Հեզնանք կար. դեռ կ'ազէր տակի եւս թուսաւորեւ զինք...:

- Գիտե՛մ, դիտեմ ամէնուն խօսքերը, բան մը ըսէ միայն փոքրիկներուն մասին, ամուսնի՞դ մասին:

- Առաջինի ես, Ակնէս...
Արիւնարբի աչքերով Ակնէս նայե-

ցաւ շուրջի իրերուն, կարծես ալ երբէք պիտի չտեսնէին անոնք...

- Ընկի՛ք մը ունի՞ս, - Հարցուց քոյրը յանկարծ, կարծես դրացնելու իր սնանդի այցելութեան նպատակը, եւ այդպէսով վրէժ լուծելու իրմէ...

Ոտքի ելաւ, կը վռնտուէր: Ուրուականի մը նման թիփեւ անցաւ նրբանցքէն. զոցեց դուռը. շուշ մը առաւ... Բանտարկեալի մը նման, որ կը շնչէ դաշտի մը մաքուր եւ անարատ օդը...
Դեռ ամէն բան լրացած չէր:

Ճ

Ակնէս ոտքի ելաւ ասրսփահար. նայեցաւ դուրսի դրան. սակայն սխալած էր. Հեռաձայնն էր, որ կը ճշարերկու ամսուայ մանուկի մը նման: Ժամը տոտուայ վեցն էր: Ո՞վ կրնար այս ժամուն իրեն Հեռաձայնել. Ալպէ՞տն էր արդեօք. իր միակ բարեկամը. սակայն ան երբեք այս ժամերուն չէր Հեռաձայնած իրեն. կարճաւ տեղերը չէր եւ նայեցաւ հայելին... «Որքա՞ն փոխուած եմ», - ըսաւ միտքէն եւ բունց ընկալուէր. ձեռքերը խիտ կը զոզային:

- Այո՞... Ակնէ՛ս, քոյրէ՛ք է, Մարին. կրնա՞ս անիջապէս դալ, շատ կարեւոր է. կը սպասեմ քեզի:

Իողահար մտաներով վար ձգեց ընկալուէր:

Ամիսներէ ի վեր չէր դացած քրոջ տունը. ի՞նչ ունէր արդեօք, փոքրի՞կը հիւանդ էր, ամուսի՞նը մեկնած. շուրջ շարունակել մտածուէր... Ո՛չ: Ո՛չ, ինք երբեք չէր սիրեր քրոջը տուայտանք տեսնել. չէր բաղձար անոր դժբախտութիւնը:

Ակնէս տղմուտ հոգիով հազուա մը անցուց կունակը. պայուսակը առաւ եւ վար իջաւ... Ի՞նչ պիտի մտածէին զըրացիները... մանաւանդ դձեպսան կիները, որ միշտ իրեն կը նայէր տեսակ մը նայւածքով... ոչինչ... ամէնը կ'անհետանային փուշի մը պէս, քրոջը մէկ կանչով, մէկ բառով. ան կը յաղթէր իր բարձրութեան, որովհետեւ բարձրու-

թիւներ կան, որոնք տափակ են լինի շուրջերու նման...

Միա՛յն, միայն բոպէ մը սեղմէր ձեռքերը, դուրսը անէր ուսերուն վրայ եւ ան շոյէր պահ մը իր յոգնած գլուխը... պիտի մոռնոր ամէնը... այն գեղնոտ մորմոքը, որ պղծած էր Ակնէսի օրերը, մըտերի նման... Ի՞նչ ուրախութիւնով կը սեղմէր հիմա պայուսակը, որուն մէջ ինքնութեան թուղթը կը ճզմուէր պատուաւորած երակի մը պէս... Ինչպէ՞ս պիտի համբուրէր փոքրիկն Վահագնին այտերէն... Ինչպէ՞ս պիտի շոյէր անոր դանդուր մազերը...:

Այնքան արագ կը քալէր, որ գրաւեց ոտքիկանի մը ուշադրութիւնը: «Ի՞նչ կրնայ խորհիլ», - ըսաւ մտքէն եւ ժլպտեցաւ... Ի՞նչ կրնայ մտածել: Հեւացող վահոնի մը պէս, որ կը հասնի իր վէրքոտ ակերը դրած որունքին՝ շփեց զանոնք կենդանացնելու համար... Յոգնած էր... ա՛հ, եթէ զէչ բան մը պատահած էր...

Երբ տեսաւ զրոջը նոյն անգութ ջրբերանով լեցուն աչքերը, հասկցաւ ամէն բան կը տառապէր... Ակնէսի սիրտը յանկարծ մթապնեցաւ մտանի մը նման, եւ մասնեքը սկսան զոզալ թիթեռնիկներու հանգոյն... զգաց, այո՛, զգաց անոր թունաւոր բուռերուն մոլեղնութիւնը, որ պահ մը խածաւ կարծես սրտին պատերը:

Ջնջուած երազի մը պէս էր հիմա Ակնէս, զատի մը մէջ կախուած, եւ աշխարհը յոգնած իր վշտի ծանրութեանէն: Գլուխը կարեց եւ սպասեց խորադաններուն:

- Գիտե՞մ որ պահ պիտի մնաս խօսելիքերէս: Ըսելիքս հետեւեալն է. ամուսինս գիւններն իսկ կը բացակայի հիմա. միեակ եմ. այս էր քու բաղձանքդ ամուսինդ մեկնելէն ի վեր: Մակայն դուն ուրիշները ունիս. զեզի երբեք ցաւ չպատճառեց Մորիսին մեկնումը: Ձե՞՞... Կ'ուզէիր այդ բոլորը... ազատ կեանք մը ապրիլ, ի պին մեր խայտառակութեան... յիմա՛ր առջիկ, զիտցած եղիք, որ ամուսինիս այսպէս փոխուելուն պատճառ

որ դուն ես. դադրեցաւ զիս յարզելէ, որոշ ատենէ մը ի վեր: Անժէլինային մահէն ետք... եւ հիմա ուրախացիր, - զոռաց զայրոյթով, - աչքերուն մէջ կը ցոլային անգութ արցունքներ, իսկ բերանը պրկուած էր շուանի մը նման:

Այս էր ուրեմն... Ակնէս զօսացած աչքերով գիտեց զրոջը դիականման ոչմօք. արդարութիւն. Ի՞նչ էր այդ բառը, որուն ունայնացումն իսկ անկարելի բան մըն էր: Այս բախտաւոր ջոյքը, այս շըփացած էակը, որ Մորիսին առջեւ ամբաստանած էր զինք, նուաստացուցած եւ զորչացուցած էր անունը, հիմա կմտխացած հոգիով, կը դատապարտէր կըրկին զինք, միշտ նոյն բորենին, նոյն խըլլերզը, նոյն թշնամին: Միթէ չէ՞ր բաւեր իր հոգիին ժխորը. չէ՞ր բաւեր դանդին տուայտանքը, իր խեղճութիւնը. այո՛, խեղճութիւնը, որով ապրած էր օրեր, առանց զանգատի, առանց հայհոյանքի:

Ճնշիկակ արցունքները փոքրիկ են ու խնէշը, - ըսաւ մտքէն եւ թարթեց աչքերը...:

Մակայն յանկարծ, զգաց որ զգոտալիք մը չէր ինք, երբե՛ք, եւ սիրտը մտնէր: Մարդոց սրտերէն աւելի՛. Եւ ինքն ալ բառ մը ունէր խօսելիք, կը բաւէր օրերու ապականած ծուէնները, ալ պէտք է շնչէր, կը բաւէ՞ր այս հոգեբանական բանտարկութիւնը, որուն ենթարկած էր զինք ջոյքը, տարիներէ ի վեր, եւ որ աշտարակի մը ճրագին նման կը լուսաւորէր անոր դաւադրութիւնները: Ի՞նչ, եթէ Մորիսը չկար, լքած էր զինք... Ի՞նչ, եթէ Անժէլինա ճակատագրուած էր մեռնելու: Արդէն այնքան վատուած էր, երբ տուն եկաւ: Ինչո՞ւ, ինչո՞ւ ամէն յանցանք կ'իյնար իր վրաս... միթէ Մարին չէ՞ր զաշտարած Մորիսը, իր անմեղ թովչանքերը բանեցնելով անոր վրայ: Ի՞նչ կ'ուզէին իրմէ դեռ. որքա՞ն տրորուած եւ ճճուած օրերով ապրած էր, որքա՞ն անօթի մնացած էր... Ո՞վ մօտեցած էր իրեն... Եւ ահա՛ նոյն անձերը տառա-

սպանքէն սարսփահար կը դատաւար-
տեն, կը խարզախեն, եւ ցաւակոծ Հո-
դիները կ'ուզեն ստորնութեան իջեցնել...
կ'ուզեն զոհելն իսկ վրէժ լուծել...

- Տէ՛ս, - ըսաւ Ակնէս զրոջ դաս-
տակէն բռնելով, - տե՛ս, այլեւս եր-
բե՛ք պիտի չկանչես դիս, կը հասկնա՛ս,
երբե՛ք. երանութիւն պիտի զգամ հե-
տազային, եթէ լսեմ, թէ որքա՛ն երջա-
նիկ ես, կը ցաւիմ, կը ցաւիմ անոր հա-
մար որ երբե՛ք չուղեցիր հասկնալ դիս.
Խուսափեցար ինձմէ, յանցաւոր զգացի-
ր իմ ճակատագրին առջեւ. տազնապը թու-
ցուց շիզոքի, շղայնացուց քեզ... կը նե-
րեմ քեզի...

Կանակը դարձուց մեկնելու համար.
- Ոճրագո՛րծ, անպատկա՛ս, եկուր
սպաննէ՛ զիս, օրերէ ի վեր կ'ուզեմ ճան-
կես զէմքս, քաւես մազերէս. ըսես՝ թէ

ես եղա՛յ պատճառը քու այս վիճակիդ.
Թքնես երեսիս. այլեւս չտատապիմ...:

Այս էր ուրեմն, թոյրը մեռնի՛լ կ'ու-
զէր. հողիին կրօնը սկսաւ բոցավառի
աղիտալի ճնշումով: Ետեւը, զառանցան-
քին մէջէն, կը զգար որ ազատուած է
այլեւս. փրկուած է ուղտի բռնէն, որ
կը կրէր կոնակին վրայ: Մեռնիլ կ'ու-
զէր, ա՛ն՝ որ ծաղրած էր զինք, խնդա-
ցած էր վրան, փճացուցած ինքնութիւնը,
ամենի ճանկերով ողբակէզ մը դարձու-
ցած էր զինք... Կը զըջար...

- Չե՛ս տատապիր, - ըսաւ զրոջը, -
մի վախնար, չե՛ս տատապիր... չե՛ս գի-
տեր տատապիլ...

Թոյրը ապրեցաւ Ակնէսէն աւելի, ու-
րովհետեւ քիչ զգաց ինք հեռացաւ քա-
ղաքէն եւ ոչ մէկը չտեսաւ այլեւս զէմ-
քը...

Ա. Զ.

Հատուած՝ «Ողբակէզը» ամսիպ վէպէն



ԳՐԻՉ ԻՄ

Դու եղի ես ինձ հետ, ամէն վայրկեաններում
 Երբ լցուած է եղի սիրտս ուրախութեամբ,
 Երբ երգել եմ ուրախ, երբ երգել եմ սեռոց
 Գայիքներն իմ լուսէ, դու ինձ հետ ես եղի:

Ինձ հետ ես եղի դու, երբ սիրտս սրտագին
 Ու վշտերից մկում, մրմունջներ է հիւսել,
 Դու ինձ հետ ես եղի, երբ ես անհուն, արթուն
 Ապաւինած եմ քեզ: լուսառոզն եմ տեսել:

Խանդավառուած սրտով երբ երգել եմ ես սէր,
 Դու ինձ հետ ես եղի, իմ երգելն ես լսել,
 Շունչս քեզ է դիպել ու սահել ես արագ
 Երբ ես հայրենիքիս շքեղ գովքն եմ հիւսել:

Գրի՛չ, դու աշխարհում իմ ընկեր սրտակից,
 Բարեկամ իմ հոգու, եւ անկեղծ կարեկից:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԵՏՐՈՍ ՓԱՆՈՒՍԵԱՆ

«ԵՐԱՆԻ՝ ԱԶՔՈՎՍ ՆԱՅԷԻՔ»...

Սուրէն սիրտէն զարնուած է՝ ըսին :
Չհաւատացի : Սուրէնը : Կատակի, խըն-
դուք առթող կատակի պէս եկաւ ինձի :
Ձի կրնար ըլլալ, ըսի : Անկարելի բան,
ըսի : Այդ մազակալած գէճքով եւ թափ-
թըփուն որտաքինով երիտասարդը սի-
րահարուած...

Շարաթներ անցան : Ամիսներ՝ եւս :
Սակայն, շուկը, ժամանակին հետ,
զրերուն հետ, իրականութեան պէս բա-
նի մը կը վերածուէր : Ինքզինք հետզհե-
տէ պարտադրող բան : Լաւ մը եփուող,
թրծուող :

Ճ

Տարիներէ ի վեր, մեզի դրացի էր
Սուրէն : Շատ մտախի հարեւան մը : Այն-
բան, որ մեր բակերուն դռները, իրարու
գէճ յանդիման, ինը-տասը միթրնոց ան-
ջրրպետ մը ունին : Լաւ կը ճանչնամ
զինք : Մանկութեան ընկեր մը : Հիմա,
սակայն, սովորական, շատ սովորական
աշխատատեղ մըն է : Բա՛հ ու բրի՛ջ զար-
նող բազուկ մը : Շարաթը քանի մը օր
միայն գործ ճարող : Անձրեւտ եղանա-
կին՝ գրեթէ անգործ : Երեսուննոց մը եւ
աւելի :

Ձմեռ օրերուն, իր շարաթական աշ-
ջելութիւնը մեզի տալու չէր մոռնար :
Երբեմն ալ՝ շարաթը երկու անգամ : Բա-
ւական կը մնար : Գէս հաճելի խօսակցու-
թեան մը ծայրը թող կու տար : Սորված
էր պատշաճութիւնները յարգել : Օրի-
նակ՝ դուռը կը զարնէր, ծանր ձեւով մը
կը զարնէր եւ ներսէն լսուող ապրջն
ետք միայն ներս կը մտնէր : Վարի իրի-
կուն, կ'ըսէր եւ արամազրութիւնս կը
հարցնէր՝ նախ : Երբ տեսնէր, որ պատ-
րաստ եմ զինք ընդունելու, հետք խօսե-

լու, ա՛յն ատեն միայն՝ գորգին վրայ,
մառարանին ջովիկը, ծալլապատիկ կը
նստէր : Կը կ'ըսնէր իրեն հրամցուած
բարձին : Ապա՝ դրպանէն հանած սիկա-
րէթ մը կը վառէր : Բի՛ջ ետք, արդուկ
բնաւ յոեած եւ արատաւոր ժաքթիին
զրպանէն սեխի խարկուած կուտ կը հա-
նէր : Իր անվերջ սլէքէշին ծայրը կը
փրթէր : Բերին երկու անկիւնները ճե-
մըկած դոյն մը կ'առնէին :

Շատ հասարակ, սակայն ոչ դեկորի
խօսքեր ունէր : Ահագին չափերով միա-
միտ մը : Ինքնիրեն հովեր տաւոյ : Ինք-
զինք շատ-շատ հաւնող :

— Պարո՛ն, — կ'ըսէր յաճախ Սուրէն, —
մարդիկ կը կարծեն, որ ես խափո եմ,
բան չեմ գիտեր : Մէկ մատու որ շար-
ժեմ... Անգամ մը որ նայիմ... : Ժլմա-
րիտ որ խորամանկ չեմ : Բայց ոչ ոք կըր-
նայ զիս խարել : Բայց ոչ ոք կընայ զիս
ճամբէս մուրեցնել :

Ճ

Տակաւին, թերահաւատութեան մէջ
էի, երբ, արդէն, քանի մը թաղերու բը-
նակչութեան բերին ատան ծածոց դար-
ձեր էր Սուրէնը, իր աշպանելէ տար-
քին համար :

Պատասխան քաղաքի բնակիչներ :
Բամբասանք եւ զրպարտութիւն :

Գիշեր մը, դարձեալ՝ բարձին կըռթ-
նած, դարձեալ իր շատ ատան սիկաքթը
կը ծխէր՝ աչքերը գորգի դոյնզոյն զա-
րերուն սեւեռած, երբ հոգիէն փրթող
լայնալունջ հառաչանք մը ինձի լեզու
կու տար, զիս համարձակութեան կը
մղէր :

— Սուրէ՛ն, չու մասիդ բանեք մը

լսեք եմ, ճի՛շդ է արդեօք, — կը հար-
ցնեն, շատ փափկանկրաս կերպով մը եւ
ժպիտը երեսին :

Անմիջապէս, սակայն, լրջութիւն կը
ձեւացնեն, սպասելով իր պատասխանին :
Պատասխանը կ'ուշանար : Աչքերը
զորդին տուած կը մնար : Սիկարէթին
մոխիրը ծանր-ծանր կը թօթուէ տո-
շեւի շորս-հինգ կճատներով լեցուն մոխ-
րամանին մէջ : Գլուխը թեթեւօրէն կը
տարուբերէ, քանի մը անգամ : Մայրս
ինծի կը նայի, նախ՝ կը ժպտի, սպա՛
կը խնդայ : Ես լսու եմ : Չեմ միջամտեր :
կը վախենամ՝ Սուրէնը վրդովի եւ բերա-
նը փակ պահէ : Ձիտօք : Բնաւ չիտօքի :
Վնասողը ես կ'ըլլամ, հետեւաբար՝ կը
մտածեմ : Համբերութիւնը լաւ բան է :
կը սպասեմ :

— Ինչո՞ւ չես պատասխաներ, — մայ-
րըս Սուրէնին կ'ուղչէ խօսքը, — իրա-
կանութիւնը չես յայտնէր : Խոստովա-
նութիւնը մարդ անհատը կը թեթեւցնէ :
կը հանգստացնէ : Ճի՛շդ է ըստածը : Ար-
դէն ամբողջ քաղաքը լսեք է : Ինչո՞ւ կը
ծածկես : Ամօթ ալ չէ : Բայց լաւ կ'ըլլար,
որ քեզի յարմար մէկը գտնես : Այդ աղ-
ջիկը ո՞ւր, դուն ո՞ւր... :

Վերջին նախադասութիւնէն յայտնա-
պէս տոնուած, վերաւորուած, Սուրէ-
նին դէմքը կը մթննայ, ինծի կը նայի :
Կրկին գորգին կը յառէ աչքերը : Կարծես
բան մը կ'ակնկալէր : Անբարբառ խնդրանք
մը կար դէմքին վրայ : Ինքզինք զգացը-
նող խնդրանք մը՝ թուի դէմքին վրայ,
որուն ամբողջ մորթը կը կծկուի ու կը
բացուի, կը կծկուի ու կը բացուի : Ձը-
պոսթիկացող վիճակ, շարժուող տուած լը-
ղայնութիւն՝ Սուրէնը, որ յանկարծ խո-
շոր գլուխը վեր կ'առնէ : կը դառնայ
մօրս եւ կը յարէ՝ կէս մը յանդիմանա-
կան շեշտով :

— Ինչո՞ւ, աղաչ միջնու հիմա չէ՞
լսած : Դուն իրեն չե՞ս յայտնած : Ինչո՞ւ
եես ուր, աղջիկը ուրք : Չեմ ուզեր, որ
անգամ մըն ալ զիս վիրաւորէք : Ատա-
ւածդ սիրես, հանդիսա թող զիս... Խո-
սելու սիրտ չունիմ... Օձիք թօթուելի՛ք
քաղաք... Հիմը զնույրն... :

Եւ, դարձեալ, կը հակէ գլուխը :
Բուռն ուժակերով կուլ կու տայ սիկարէ-
թին ծուխը : Հանգստացաւ : Այլ գլուխը
վեր պիտի չվերցնէ՝ կարծես : Սակայն,
անմիջական եւ իրեն ի նպաստ եղած մի-
ջամտութիւնս զօրաւոր եւ ճիշդ ու ճիշդ
իբ նպատակին հասած ներարկուէի մը
պէս կ'ըլլայ :

— Մայրի՛կ, — կ'ըսեմ, լրջօրէն, —
չէ՞ որ սէքը կոյր է, կ'ըսեն : Սուրէնին
ալ այդպիսի բան մը եղած է : Ի՞նչ կըր-
նանք ընել : Ի՞նչ կրնայ ընել ինք : Ամէն
մարդ իր անձնական զործին թող խա-
նրի : Պուստ՝ Սուրէն : Մարդիկ թող խո-
սին, որքան կ'ուզեն : Ականջ մի՛ կախեր :
Գործիդ նայէ : Կրնաս յաջողիլ, եթէ
զգոյշ եւ շրջահայեաց ըլլաս : Որքան քիչ
խօսին՝ այնքան լաւ է քեզի համար : Ան-
տեղի բաներ մի՛ ընէր : Յաջողութիւն :

Անոր դէմքը, վայրկեանին, զուարթ
քօղ մը կը ստանայ : Աւարխութիւն ցայ-
տող, լայնոց աչքերը ինծի կը սեւեռին :
կը նայի՝ պահ մը, այդպէս : Ենթահակա-
լութեան, անպատում շնորհակալութեան
անբառ խօսք մը կը կարգած անոնց մէջ,
որ շուտով բառերու կը վերածուի :

— Հէ՛, այդպէս : Բերանդ համբու-
րեմ... Այս գիշեր սիրտս զովացոցիր՝
գիտեմ : Այսքան ժամանակէ ի վեր, ոչ
ոք պաշտպան կեցաւ ինծի... Նոյնիսկ
ամենամօտիկ ազգականներս զիս կը յան-
գիմանեն : կը դատապարտեն : Կրակ ու
բոց կը տեղացնեն դիտու : Այսքա՛ն
անմտութիւն : Այսքա՛ն յիմարութիւն :
Հողիս բերանս բերին : Քաշիլիքս քաշե-
լիք չէր, ամիսներ շարունակ... :

Եւ, յանկարծուտ տիրող հանգար-
տութենէ մը ետք, Սուրէն երանութեան
եօթն ուղղատեսերուն մէջ կը ճարտէր կար-
ծես :

Տ

Բարեկեցիկ ընտանեքի մը երկրորդ
եւ կրտսեր աղջիկն էր Մարթան : Տասնը-
ինը-քան տարեկան : Սեւ աչքեր, Բարձ-
րահասակ : Սակայն, նիհարակազմ : Սու-
րէնէն լուր ունէր թէ ոչ, կարեւոր չէր :
Սուրէն սիրահարուած էր անոր :

Ինչ՞ որ պարսպ գրպան մարդ: Մինչ՝
ունենոր ընտանիքի աղջիկ էր Մարթան:

Տ

- Մուրէն, - կ'ըսեմ, - Հիմա, ինծի
այն բնէ՛ Մարթան կը սիրե՛ս: Այդ պատ-
ճառա՛ւ է, որ կ'անցնիս անոնց փողոցէն:

- Այո՛, պարո՛ն, կը սիրեմ Մարթան:
Ա՛յ ձեռքս չէ: Մտիպեցին որ սիրեմ: Ա-
ռա՛յ, մտքէս իսկ չէի անցընէր նման բան
մը: Մարդիկ այնքան հողմեցին մեր եր-
կուքին անունները, որ քայլերս զիս Մար-
թայինց փողոցը առաջնորդեցին, ինքնա-
բերաբար Ք'ն, ես միայն գիտեմ, թէ
այդ բանը որուն զօյննն էր: Այդ Ով-
սա՛նը, Հասը չկայ աշխարհիս շորս կող-
մը: Ինչո՞ւ Մարթան վարկաբեկելու նպա-
տակ կը հետապնդէր այդ բանը, անա-
սունի կտորը: Որովհետեւ՝ էր զատակին
համար ուղեցին եւ Մարթան կարուկ
կէրպով մերժեց: Ես կը սիրեմ Մարթան:
Ուրիշները ի՛նչ կ'ուզեն՝ թող ըսեն: Պար-
սպ թիթեղի պէս թող ձայն հանեն...:

Պոր եւ դառնաշունչ հառաչ մը՝
դարձեալ, կը բարձրանայ Մուրէնին
կուրծքէն, Մուրէնին ճնշուած կուրծքէն:
Բան մը կայ անոր մէջ՝ փշրել-քանդելու
պատրաստ արամադրութիւն մը: Լուռ
եմ, Գիրքին էջերը անազմուկ կը զարժը-
նեմ, անոնց բառ մը կարդալու, սակայն:
Երբեմն, շէշտ հայեացքով մը, կը նայիմ
իրեն՝ գողունի: Կը սպասեմ որ բերանը
բանայ, բանայ եւ գուրս տայ ներսի լու-
ւա փինակով ամբարուած թոյնը, մազ-
մը: Պոթիկումը չ'ուշանար:

- Ա՛ի, երանի ինծի իրաւունք արը-
ւէր, պահ մը, այդ լիբրին, լիբր Ովսա-
նին գլուխը ոտքիս տակը առնէի: Զախ-
լարէի: Հանգստանայի, այդպէ՛ս...:

Արձանային լուսթիւն մը սիրապե-
տող կը դառնայ: Մտովի կը կրկնեմ՝ մե-
ծահաշունչ անզլիտապիք հայ գրագէտին սա
խօսքը, որ ա՛յնքան սուր, կճող հեղձանք
մը կ'արտայայտէ:

- Ի՛նչ դէրին է ուրիշներուն գործին
խառնուիլ:

Մայրս է, որ խաղաղութիւնը կ'առ-
ընէ, բռնով:

- Մուրէ՛ն, ինչո՞ւ այդքան տակնու-
վրայ կ'ըլլուս: Մե՛ղք քեզի: Մարթան
նի՛հար է: Ծատ ճղճիմ: Զոփ-չորս Երեսը
գոյն չկայ: Անոր ո՛ր տեղը հաւնեցար,
ի՛նչը սիրեցիր: Ժողովուրդը ամէն բան
կը խօսի: Մենք չենք կրնար մարդոց բե-
րանը խցանի զարնել: Իրաւունք ալ չու-
նինք:

Մուրէն, յանկարծ, հակած գլուխը
վեր կը վերցնէ եւ ձօրս կը դառնայ՝ յա-
բելով:

- Քիչ առաջ, ըսի որ զիս մի՛ վերա-
ւորէք: Արդէն երկրադաւանդի պէս կը
դառնայ գլուխս: Ինչո՞ւ գեղեցիկ չէ
Մարթան: Բայց, եկուք սրտիս հաջողութիւն:
Երանի՛ աչքովս նայէիք...:

Երկուստեք եղած խօսակցութիւնը
մտիկ կ'ընեմ, մունջ, երբ մէկէն՝ վեր-
ջին նախադասութիւնը զիս ուշքի կը բե-
րէ՝ կ'անդրադառնամ: - Իրաւ, կ'ըսեմ
իւրովի, մարդիկ ո՛րքան անազող կը ներ-
կայանան, անազող կը դառնան, երբ բը-
նադաբար կը խօսին, չկեղծուած, ան-
չպար կերպով, երբ լոկ իրենց սիրուն է,
որ կը բարբառի: Ազատ-համարձակ կը
նայիմ Մուրէնին արդէն: Մանաւանդ՝ ա-
նոր ղեմքին եւ միտցող սիկարէթին:

- Երանի՛ աչքովս նայէիք...:

Գեղեցիկ եւ անխառն խոստովանու-
թիւն մը: Անտաջ եւ աղուար հողի ունե-
ցող մարդու խոստովանութիւն: Միբող
սրտի խօսք: Որովհետեւ՝ Մարթան, ըս-
ած եւ չըսուած իր բոլոր թերութիւննե-
րով հանդերձ, Մուրէնին մէկ հատիկ
աչքին (միւսը ճերմակով վարագորուած
է) համար եւ իր սիրովառ սրտին՝ ան-
նման, անզուգական աղջիկը կը մնայ:
Գեղեցիկու՛մ մը: Եւ հազարաւոր ժխտա-
կան կարծիքներ՝ Մարթայի մասին զմե-
թելէք մը իսկ չեն տրժեք Մուրէնին
համար: Պատշաճութիւններ՝ ի՛նչ կա-
րեւորութիւն ունին անոնք ջուրթակի լա-
րին նման թրթուացող սիրտի մը համար,
որ Մուրէնինն է, ահա՛...:

Պ. Պ.

Գամբըլի

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր Ս

Աշխարհի վրայ, երջանիկ ապրելու համար, պէտք է բարեկամներ ունենաս: Մանուկն աչք բարեկամներդ ըլլալու են որակաւոր, որպէսզի քու որակըդ ալ բարձրանայ:

Ես բարեկամներ ունիմ, բազմաթիւ, սակայն չեմ կրնար վստահեցնել որ բոլորն ալ հատընտիբ, որակաւոր մարդիկ են: Քանակն ու որակը իրարու հետ խոտոր կ'ընթանան, հակառակորդներ են: Միայն Բէրքի-Քալամ է որ բացառութիւն կը կազմէ, քանի որ ամէն օրէնք պէտք է բացառութիւն մը ունենայ:

Սակայն ես երբեք զժպոհ չեմ բարեկամներու այս բազմութենէն: Ընդհակառակն, անոնցմէ ամէն մէկը, ժամանցի, հաճոյքի եւ երջանկութեան անհամար առիթներ կը ստեղծեն, կեանքս վերածելով խնդուքի եւ ծիծաղի շարունակական հեքիաթի մը:

Անոնք բազմապէս են, բարեկամներս: Անոնց մէջ կան հանճարներ, թեթեւամիտ մարդիկ, հականեր ու վաճաճներ, պլըրաւիստներ եւ շոյապաշտներ: Մանթաքանի մէկի մի քանի հատը, մասնակցեցէք խնճոյքիս:

ՅՈՒԵՏԵԱԸ

(Աստուած Խամբիրաւթիւն տայ)

Գիւղը, ամառուայ զով մայրամուտին, ծառի մը տակ նստած, լրագիրը կը կարդայի: Ձեռն դիտեր ուրկէ՛, յանկարծ, դէմս ցցուեցաւ Քերոբ, հին բարեկամ մը, որ ժամանակին կառքով քարիւղ կը ծախէր թաղերուն մէջ, իսկ հիմա բաւական շահաբեր վաճառատուն մը կը բանեցնէր:

Դէմքը տխուր էր, մտահոգ, կասկածոտ:

- Ի՞նչ կ'ընես, - հարցուց մօտենալով:

- Ձե՞ս տեսներ, կը կարդամ:

- Կը տեսնեմ որ կը կարդաս: Ի՞նչ է կարդացածդ:

- Թէրթ:

- Կը հարցնեմ թէ ի՞նչ բանի մասին կը կարդաս:

- Մայրէ-Յայր պարապ:

- Ըսէ՛, երկրաշարժի մասին բան չկա՞յ:

- Ի՞նչ երկրաշարժ:

- Թուրքիա երկրաշարժ եղեր է: Հոս ալ երկրաշարժի վախ կայ:

- Կը դարմանում, որ այդքան կը վախնաս երկրաշարժէն:

Բարեկամս լրջօրէն երեսիս նայեցաւ:

- Երկրաշարժէն չէ որ կը վախնամ: Կը վախնամ որ տուրքերը բարձրանան:

- Այդ ի՞նչ խօսք է, - զարմացալով ի՞նչ դործ ունին տուրքերը երկրաշարժին հետ:

- Առանց մտածելու մի՛ խօսիր, - ըսաւ, - չե՞ս յիշեր անցեալ երկրաշարժին տուրքերը որքան յաւելում կրեցին:

Սինեմաները ողիցին:

- ձիւղ կ'ըսես, - հաստատեցի, -

սակայն առանց երկրաչարժի սիկարէթ-
ները սղեցին, պէնզինն ալ աւելի սուղ
կարժէ հիմա:

Բարեկամս յարձակողականի անցաւ:
- Այլ հալիւ ըրէ, թէ ի՞նչ պիտի պա-
տահի, եթէ երկրաչարժ մը տեղի ունե-
նայ:

- Այդքան յոռետես մի՛ ըլլար, - ը-
սի, - բա՛ն մը լսեցիր:

- Ջուրը պիտի սղի:
- Մոյժու շուրը կը թորենք ու կը
խմենք:

- Ելեկտրականութիւնը պիտի սղի:
- Մո՛մ կը վստահեմ:

Բարեկամս ձայնը քիչ մը աւելի
բարձրացուց.

- Լրագրիները պիտի սղին:
- Գիրք կը կարգանք:

- Հեռաձայնը պիտի սղի:
- Ժամադրութիւններէն կ'ազա-

տինք:
- Մի՛նը պիտի սփի:

- Բանջարեղէն կ'ուտենք:
- Մինեմաները պիտի սղին:

- Թեյնիփիլոն կը դիտենք:
Քերորի համբրութիւնը հասած

էր: Սակայն ամէն գնով կ'ուզէր իր յո-
ռետետութեամբը վարակել զիս:

- Վարձեքը պիտի սղին:
- Գիւշ կ'ելենք:

- Ինքնաշարժները պիտի սղին:
- Հեծանիւով կը պտտինք:

Բարեկամս վերջապէս ըզայնացաւ.
- Դուն ալ չափազանց լաւատես ես,

մեղք որ թերթ կը կարդաս, Վիեթնամ,
Գերմանիա, Դոնկո, Մուէզ, Եմէն...

Անցեալ օր մէկը կ'ըսէր, թէ այս քա-
ղաքին մէջ ամէն ինչ անկանոն է: Մի-

այն հանրակառօն էր, որ կանոնաւոր
կերպով գծին վրայէն կը քայլէր ու չէր

կրնար շեղիլ, անոր համար վերցուցին
մէջտեղէն:

- Մենք ալ օթոպիւս կը նստինք:
- Օթոպիւսը 15 դահեկան է, - դի-

տել տուաւ բարեկամս, - եւ մարդ ըս-
տիպուած է, վանդակի մէջ բանտար-

կըլածի պէս սպասել որ կայարան հաս-
նի՝ իջնելու համար: Մինչդեռ հանրա-

կառքը 5 դահեկան էր, երբմէն ձրի, եւ
մարդ ուզած ասան կ'ելլէր եւ ուզած

ատեն ալ կրնար իջնել ազատօրէն:
- Պէտք է մարդ քաղաքակրթուի եւ

յառաջդիմէ, - հղրակացուցի:
- Սակայն յառաջդիմութիւնը այս-

քան սուղ պէտք չէ արժէ:
Այդ պահուն կ'ս հակայարձակումի

անցայ.
- Խնձորը այնքան ատանցաւ որ դը-

րեթէ ձրի է:
- Խնձորենիներու հազար ծառ ունի՞մ

Այնճարի մէջ:
- Պէտք չէ այդքան յոռետես ըլլալ,

- թելադրեցի:
- Լաւատետութեան նշո՛ւյլ մը, -

թախանձեց:
- Օրավարձքերը չբարձրացա՛ն:

- Ան ալ ի վնաս ինձի, - հատուցեց,
դործաւոր ունիմ:

- Պիւթակազը լաժանցա՞ւ:
- Ատուտ'ե իմ, - մեռեքը դիտուե

զարկաւ, - բա՛ւր դժբախտութիւնս այդ
տեղէն կը սկսի:

- Ինչո՞ւ, - զարմացայ:
- Ձե՞ս դիտեր ինչու: Պիւթակազ

ծախող եմ:
Ըսաւ ու շիտակ ցալեց, առանց ա-

ւելի բառ մը արտասանելու:
Երկար դիտեցի ետեւէն: Իր երթը

կը նմանէր մահուան դացող առաքեալի
մը: Յանկարծ սարսուռ մը անցաւ վրա-

յէս: Ո՛չ, երկրաչարժ չէր, պարզապէս
զով գեփիւտն էր, որ կը փչէր յուշիկ,

խաղալով սաղարթախիտ ծառերուն հետ:

ԵԱՏԱՊՈՍԸ
(Ակամբը խօսի)

Շատախօս բարեկամս չափազանց լօ կշիռքով: Անդործութեան պատճա-
մանբարկագմ էր, հազիւ քառասունն քի-

լու, սակայն մերժուեցաւ յիսուն քիւր-
 յէն պակաս կըռելուն պատճառաւ: Հեղ
 մը փորձած էր ճօքի ըլլալ, բայց փոր-
 ծի պահուն, ձիերը իրենց զամակէն վար
 նետած էին զինք միշտ, միշտ էր
 մարմնի թեթեւութենէն օգտուելով:
 Զարմանալիօրէն, սակայն, չեւ զիտեք
 ուր ամբարած էր խօսելու ախջան
 նիւթ ու պաշար: Մատախօս էր ու ծայր
 սատրեան հետաքրքիր: Հարցումներ
 կ'ուղղէր սարէն-ձորէն եւ անպայման
 լուսարանուի կ'ուղէր: Սակայն, շա-
 փազանց զիւրաւանջ ըլլալուն, հակա-
 սակաւն ու ծիծաղելի պատասխաններ կը
 ստանար էր արտակէզրոն հարցումնե-
 րուն: Իր զիւրահաւանութիւնը շարաշար
 կը զործածէին, մանաւանդ զիտական,
 քաղաքական եւ աշխարհագրական նիւ-
 թերու մասին խօսուած պահուն: Այն ա-
 տեն կը սմէր, աւելի կը պզտիկնար,
 կը պայպանձէր: Իր ներկայութենէն
 փրկուելու միակ միջոցը, զիտական եւ
 աշխարհագրական նիւթեր յարուցանելն
 էր: Բայց եթէ խօսելին թեւը իրեն
 մզէր, ուղղակի անտանելի կ'ըլլար, ու-
 սէր վար չէր իջներ:

Քանի մը օր առաջ, ծալուած թերթ
 մը բռնած էր ձեռքս: Նոյնիսկ չէի գի-
 տեր թերթին անունը: Մէյ մըն ալ տե-
 սայ, ժպտելով մօտեցաւ ինծի.

- Ի՞նչ է, թե՛րթ կը կարդաս:
- Ո՛չ, ժամանակ կը սպաննեմ:
- Ինչո՞ւ, սենտիքաները զործա-
 ղո՞ւլ հռչակեր են:
- Ո՛չ, կնիկս վարսայարդարի բերի
 ու կը սպասեմ:
- Իսկապէս կը խզամ գեղի, քոնի՞
 ժամ է հոս ես:
- Երկու ժամ մը կ'ըլլայ:
- Ե՛րբ պիտի ազատիս:
- Մի քանի ժամ կ'ուզեմ:
- Ինչո՞ւ այդքան:
- Այսօր մազերը պիտի ներկէ:

Շունչս կը հասնէր: Ուղեցի նիւթը
 փոխել, սակայն ուշ էր, ինք կանխեց
 զիս ու շարունակեց: Ես կրաւորական
 զերթ քունցի կարճ կտպելու համար ու

որոշեցի իր հարցումներուն զայրո՞ կամ
 «ոչ» պատասխանել:

- Կնոջդ մազերը դեղին էին կար-
 ծեմ:
- Ո՛չ:
- Հապա շաղանակադո՞ յն:
- Ո՛չ:
- Ե՛է՞կ:
- Ո՛չ:
- Կարծեմ սպիտակ չէին:
- Սեւ են:
- Է՛հ, հիմա դեղինի՞ պիտի ներկէ:
- Ո՛չ:
- Ե՛է՞կ:
- Ո՛չ:
- Մազանսկի՞:
- Ո՛չ, ո՛չ:
- Ձըլլայ թէ ճերմակի պիտի ներ-
 կէ:
- Սեւի պիտի ներկէ:
- Բայց չէ՞ որ ըսիր, թէ սեւ էին
 կնոջ մազերը:
- Դուն զործ չունի՞ս, մարդ, - չը-
 զայնացայ վերջապէս, - քալէ՛ զործիդ:
- Ի՞նչ կղաւ քեզի, - զարմացաւ:
- Ի՞նչ քիթդ ամէն մարդու զործին
 կը խոթես, - նոխտանցի, - կնոջս մա-
 ղերուն մէջ մի քանի թել ճերմակ կայ,
 ամիսը անգամ մը պէտք է ներկէ:
- Ես ալ կարծեցի, թէ մազերուն
 զոյնը պիտի փոխէ:
- Ալ շափը անցուցած էր, սպունացի.
- Ըսինք, թէ մազերուն զոյնը պի-
 տի փոխէ, այդ քու խոսնուելու բա՛նդ
 է, անպատեհութիւն մը կա՞յ:
- Մարդ իր ունեցածովը զոհանալու
 է: Աստուած սեւ մազ տուած է, պէտք
 է մազերը սեւ պահէ:
- Արդիական տիկին մը ամէն զոյ-
 նի կը ներկէ մազերը:
- Է՛հ, ինչ օրերու հասանք, - ծի-
 ծաղեցաւ, - առաջ կեսարացիներն էին
 որ միայն կը ներկէին...
- Կորսուէ՞ աչքիս առջեւէն, - պո-
 ռացի ինքնիքմէս ելած:
- Մի՛ սրբողիք, - ուղեց հանդար-
 տեցնել զիս, - հիմա մեծ տէրութիւններն
 ալ իրենց զոյնն ու քաղաքականութիւնը

ամէն ամիս կը փոխեն: Ճրանասյի պէս, որ մը Հրեաներուն հետ, որ մը՝ արաբներուն, Ձինաստանի պէս, որ մը Ռուսիոյ դէմ, որ մը՝ Ռուսիոյ հետ, Ամերիկայի պէս, որ մը Հրեաներուն դէմ, որ մը՝ արաբներուն:

- Ի՞նչ կ'ըսես... Ըսել է քաղաքականութենէ՞ ալ լուր ունիս:

- Ես բանէ մը լուր չունիմ, այս րո՛ւրը ըսածներս ուրիշներէ լսած եմ:

Ասիթը եկած էր եւ պէտք է օգտագործէի:

- Քեզի խրատ մը տամ, - ըսի, - շուտ տուն վազէ, դուռը փակէ, լոյսերը մարէ ու մտան մտիբ:

- Ինչո՞ւ, փոթորի՞կ կայ:

- Կացութիւնը շատ ծանր է: Ռուսերը արդէն պաշարած են Մոսկուան ու կը սպաննան արժանական ուսմբ դործածել:

- Ի՞նչ կ'ըսես, սարսափեցաւ:

- Իտալիան ալ Հոսմը պաշարեր է:

- Հիմա Ի՞նչ պիտի ընենք:

- Միւս կողմէ, Անգլիան ալ Հոնտոնի մրայ յարձակեր է:

- Չա՛ր բախտ, չըսե՛ս, աշխարհի ախորանութեան Փութպոլի խաղերը վտանգուեցան:

- Խաղերը շատոնց վերջացան, ա-

պո՛ւչ, Հիմա դուն գլխուդ ճարին նայէ:

- Հիմա Ի՞նչ պիտի ընենք:

- Ըսածիս պէս, կացութիւնը վայրկեանէ-վայրկեան կը վատթարանայ:

- Ահա, կարծեմ կինդ վերջացած է ու կու գայ:

- Այդ եկողը կինս չէ, ըսի, - Անգլիոյ էլիզապէթ թագուհին է:

- Ի՞նչ անհող մարդ ես, - ջղայնացաւ, - Հիմա կատակի ատե՛նն է: Դո՛ւն կ'ըսես, թէ կացութիւնը ծանր է: Եթէ պատերազմ ըլլայ, արժանական ուսմբ անպայման պիտի դործածուի, եթէ արժանական ուսմբ դործածուի, աշխարհ պիտի կործանի ու մարդկութիւնը պիտի ջնջուի:

- Ծիչդ կ'ըսես:

- Հէյ ապո՛ւչ ըսեմ, - նախտուեց զիս, - զարգացած մարդու հողեր կ'ատենս, կնոջդ մազերուն մի քանի թել ճերմակը ներկելու ժամանակը ճիշդ զըտեր ես, կարծես արժանական ճառագայթները պիտի խնայեն կնոջ՝ իր մազերուն գոյնին համար: Ես զացի:

Արտորանքով հեռացաւ Անշուշտ մինչեւ տուն հասնիլը անպայման կը լուսարանուէր: Որովհետեւ ամէն քայլ լափոխին, խօտակեցի մը հանդիպելու յոյսը ունէր:

ՅՈՒՍԱՀԱՏԸ

(Աստուած հոգին լուսաւորէ)

Երեք ամիս ատուջ, Ռաուշէի կողմերը յուսահատ դէմքով բարեկամի մը հանդիպեցայ: Չեմ յիշեր ե՛րբ եւ ո՛ւր ծանօտացած էի այդ երկայնահասակ, սքան մարդուն: Երբիսկ անունը մոռցած էի: Տարիքը քառասունէն յիսունի միջեւ տեղ մը ըլլալու էր... քսան տարի է զիս: Չորրորդ ծառի մը նման, իր տարիքը ցոյց չէր տար, ոչ ալ կը փոխէր: Այս ընդհանուր չորութիւնը թափանցած էր մինչեւ գլխուն մէջ, կարծես ուղեղին ծանրութեան համեմատութիւնը հաւասարակշիռու համար մարմնին թեթեւութեան հետ: Եւ բարեկամս, որուն անունը տակաւին չկրցայ յիշել,

զարձած էր շափուզանց դիւրահաւան, դիւրագրգիռ, ջղային եւ կեդրոնախոյս:

Կը քալէր գետին նայելով, կարծես կորսուած թանկագին առարկաներ գործնելու յոյսով:

- Ի՞նչ կ'ընես այս կողմերը, - Հարցուցի առանց բարեւելու:

Կանգ առաւ յանկարծ ու երեսիս նայեցաւ: Իր կողմէ յարգուած ու ճանչցուած էի որպէս խելացի մէկը:

- Կեանքէս ծանձրացած եմ, - ըսաւ ազալական երեսիս նայելով, - կ'ուզեմ անձնասպան ըլլալ, ճեւ մը սորվեցուր ինձի:

Երբեք չուզեցի դաւաճանել զիս:

ցի մարդնու վարկիս ու առանց բողոքի մը իսկ վարանելու, թելադրեցի:

- Ինքզինքդ կահիէ:

- Փողկապ եւ վզնոց կապելը երբեք չեմ սիրած, խեղդուելու պէս կ'ըլլամ, - պատասխանեց:

- Մո՞վու կամ գետի մէջ խեղդամահ կ'ըլլի:

- Ադի ջուրը չեմ սիրեր: Լիքանանի մէջ ալ խորունկ գետեր չկան:

- Զինուորագրուէ եւ պատերազմի դնա՞, անպատճառ կը մեռնիս:

- Զ'ըլլար, մեռնելէս ետք կ'ուզեմ փառաւոր թաղում մը եւ մարմարէ դամբարան:

- Մէկը գրողէ, մենամարտի հրաւիրէ, պարագ ստրճանակով ներկայացիր ու անպարճան... կը սպաննուիս, - ըսի:

- Խիղճ մը ոճրագործութեան մղած կ'ըլլամ, խղճի խայթ կ'ունենամ:

- Լա՛ւ, ի՞նչ յուարեցար եղբայր, դաշոյն մը առ ու սիրող միտէ:

- Արիւնէն կը սարսափեմ: Երեւակայէ մաագործի մը խանութին առջեւէն անցած ատեն, աչքերս կը դոցեմ:

Իրապէս վիճակս յուսահատական դարձած էր: Երեւակայութիւնս զիչ մըն ալ քրքրեցի:

- Ի՞նչ ըսեմ քեզի: Պանքայի մը վըրայ գինեալ յարձակում գործէ:

- Մի՛ գողնար, Աստուած ըսու Մովսէսի:

- Գտայ, գտայ, - բացականչեցի ուրախութեամբ, - այս մէկը ի՞նչպէս մոռցած էի:

- Ո՞ր մէկը:

- Թոյն խմէ:

Պոսակեցո անհանձոյ ծամածռութիւն մը ունեցաւ:

- Լեղի՛ է: Սկզբունքով գէ՛մ եմ կըծուի, թթուի եւ լեզիէ:

Յուսահատեցայ:

- Եղբայր, - ըսի յոգնած ու հառաչելով, - դուն անձնասպան եղողը չես, այնքան քաջութիւն չունիս:

Յուսահատ դէմքով բարեկամս, որուն անունը յիշելու վերջին փորձ մը

կ'ընէի մտքիս մէջ, յանկարծ կատաղութեամբ պոռթկաց:

- Կը բաւէ՛, կը բաւէ՛ անխիղճ մարդ, պապանձէ՛, կը բաւէ՛:

- Ի՞նչ եղու քեզի, - ըսի այլայլած:

Բացատրեց, հատիկ-հատիկ արտասանելով բառերը:

- Յուսահատած էի: Մտքէս անցաւ անձնասպան ըլլալ: Դէմս դուն ելար, քորսիրտ մա՛րդ: Ըսի՝ ազատեցանք, այս մարդը հիմա դեռ կը միտթարէ, կը համոզէ որ ետ ատենմ որոշումս:

Եունչ առաւ, թուրը կլլեց ու շարունակեց:

- Մինչդեռ դուն համոզիչ խօսք մը չըսիր, միտթարական արտայայտութիւն մը չունեցար: Ընդհակառակն, վատարար սկսար քաջալերել զիս որ այս ծաղիկ հասակիս մէջ անձնասպան ըլլամ:

- Ի՞նչ կը բարկանաս, - եղբայր,

- ըսի շափազանց վերաւորուած, - ուղիս անձնասպան եղիր, ուղիս մի՛ ըլլար, ինծի ի՞նչ:

Ըսի եւ ուղեցի քալել: Սակայն խօսակցես թեւէս բռնեց:

- Վերջին խօսք մը, - ըսաւ աչքերուս մէջ շեշտ նայելով: Քեզ յուսահատընելու եւ ճաթեցնելու համար, անձնասպան պիտի չըլլամ:

Տ

Անցեալ օր թերթին մէջ մահազոյ մը կարդացի: Իր անունն էր, յիշեցի: Տարիքը ՅԱ, մահուան ժամը եւ թուականը յտակօրէն գրուած էին, մութ կը մնար միայն, թէ ինչպէս մեռած էր: Դիպուածով, այդ մատին լուսարանուցայ, երբ երկու դրացի կիներ, պատըշգամէ-պատըզամէ կը զրուցէին:

- ... Պիւթակազը բաց մոռցեր են: Ոսքի չխառնուեցայ:

Ինչո՞ւս պէտք, եթէ ըսէի, թէ ինք բացած էր պիւթակազը, որպէսզի վերջ տար կեանքին, թերեւս Երեսի վրայ պառկեցնէին զինք: Կ'ուզէի որ յուսահատ բարեկամս, գոնէ՛ դադարդին մէջ, հանգիտտ նիրհէր:

Ս. Ս.



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՎ

ՄԻԱՅՆ ԹԷ՛ ԼՈՍԻ՛, ՄԼԱՐՁԱԿԻ, ԸԼԼԱ՛Յ...

«Ազգակ»ի 31 Օգոստոսի քիւիճ մէջ, Մ. Իշխան շօշափած է վերջին տասնամեակին նոր քափ ստացած յախտեճական հարց մը.

«Հինը եւ նորը դրականութեան մէջ»:

Վարսումական քուականներէն առիճն, Հայաստանի մէջ քէ արտասանանի, հինի եւ նորի կապակցութեան բաւական մեղան հասեցուցին մեր մտաւարականները, յանգեղով ի վերջոյ նարածեութեան եւ նարայարութեան տարբերիչ տարբերը հաստատող ոչ շատ անծանօթ սահմանումներու:

Նարածեութիւնը հետեւակներու հետեւանք է, կ'ըսեն ճիճները ու նարարարութիւնը տողանդարներու ընական արգասիք:

Եթէ գրողը տաղանդ ունի եւ տէր է բացառիկ խառնուածքի, եթէ բանաստեղծը ըսելիք ունի եւ տէր է ներքին փոքարկումներու, այդ պարագային նա'ր է իր խօսքն ալ, իր ապրումն ալ: ... Երբ հարգատ է բանաստեղծին ներաշխարհը եւ գորարո' անհատականութիւնը, անպայման որ պնդք խօսքին բովանդակութիւնը, ինչպէս նաեւ ճեղք նոր կ'ըլլան»:

Քիւրեղային պայծառութեամբ օժտուած այս հաստատումներում կռօքին՝ Մ. Իշխան յայտնած է նաեւ ուրիշ մտքեր, որոնք ի չգոյէ հիւնաւար տուեալներու, կը մնան էապէս վիրաւոր: Անծանօթ տղոց պարբերական փորձերում մէջ դիտուած օտարամուտ ու հանկուկային ու քառային բաներում ի տես, դառնութիւն մը համակած է զինք եւ այն սպաւարութիւնը ունի, քէ՛

«Նարածեութեան ետեւէն վագերու ախտը շատ անգամ արիւնաքամ կ'ընէ շնորհալի երիտասարդներ, որոնք կրնային տեղ մը հասնիլ, եթէ շիյնային օտար ազդեցութիւններու ջրապատյտին մէջ, եթէ համեստօրէն ու պարկեշտօրէն լսէին իրենց ներքին ձայնը»:

Դժուար է կռահել, թե ո՞ր «շնորհալի երիտասարդներ»-ում մասին է խօսքը եւ ի՞նչ հիման վրայ կ'երաշխաւորուի անոնց «ներքին ճայնին» գոյութիւնը:

Մարդ չի կրնար համոզել ընթերցողը, թէ շնորհալի տղայ մը այս դիւրութեամբ նորածնութեան կը գտնէ իր շնորհը կամ թոյլ կաւ տայ, որ օտար ազնուկները խնդրեմ իր «ներքին ճայնը»: Հակառակ պարագային՝ ի՞նչ շնորհ, ի՞նչ «ներքին ճայն»:

Մեր կարծիքով, պզտիկ ռազմավարութիւններու գտնելը եմք բռնաւ ալ եւ քիչ մը շատ լուրջի առած ենք ներարարութեան անունով երդում ընող անվաստակ «հեղինակութիւնները»:

Ոչ ոք կը մտածէ որ պատուհաններ գոցուին օտար մշակոյթներում առջեւ, թումբ ճաշուի նոր աւիշներում դիմաց: Մեծ հոսանքներում, գարտուղի նամբաներում, լայն աշխարհներում շարժումը, քարմութիւնը, լոյսը աներթաժշտ տարբեր են բոլոր գրականութիւններում, ամէն տերունդի համար, պայմանաւ որ մարտում ըլլան, անհատականացած ըլլան, հրապարակ հանուին տնտեսադրամ շեշտերով:

Ըսել կ'ուզենք ներութեան անհաղորդ չենք եւ հիներում ոնը յանձնարարողներում դասին չենք պատկանիր, բայց դժբախտաբար «շնորհալի երիտասարդներ»-ում մասին խօսք բանալու բաւարար տուեալներ չենք տեսներ մեր շուրջը: Առայժմ նորերում ունեցածը իզճեր են միայն, որոնց ազդիւրը մարդ չի գիտեր անկարողութեան ժայռերէ՞ն, թէ բուն կարողութիւններու քննմանար արգանդէն ծնունդ կ'տան:

Եօթ-ութ տարիներ է վեր, հետաքրքրութենէ մզում կամ ի պաշտօնէ կը հետեւինք այդ «նորարարներում», բայց ծաւալում գործունէութեան մը ակամատես ըլլալու հանոյքը չտրուեցաւ տակաւին մեզի: Ինչ որ տեսնուեցաւ մինչեւ հիմա իրենց մօտ, հինը չհասնելու վերամբարձ պերճանք մըն է աւելի, քան հինը հակազդելու կաշուած պատկառագրու կամ անհզոյու իրագործում մը:

Գրական շարժումները տեսական մարգանքներու չեն հետեւիր, ընդհանրապէս տեսութիւնները կը բխին յայտնութիւններէն: Մեր մէջ, ընդհակառակն, առայ տեսութիւններն են որ կը յեղեղուին: Մնաց որ, նորութեան ջատագովները հաս եւս չափազանց ազատ են: Ի վերջոյ ո՞վ է այն երիտասարդը, որ հիմնաւոր գրութեամբ մը բացատրէր մեզի հիներուն թանգարանային բնոյթը եւ մատնանշէր նորին յաղթական յառաջխաղացքը: Իրագործուածին առջեւ թեքուօրէն ուս թօթուելով կամ ժխտականօրէն օդին մէջ դունչը հրերցնելով կարելի չէ հող շահիլ ու գրականութիւնը բաժնի ըլլալու պատրանքներով հեղինակութիւն դառնալ: Կեցածք մը ընդունելի դարձնելու համար աներթաժշտ է լուրջ պատեառներ ունենալ, հայքայքել, երկնել մանասանդ, գործեր ստեղծել, մինչդեռ ո՞չ միայն իրագործուած քանի մը հատար չկայ մէջտեղ, այլեւ հեռահայեաց նորութիւններու նուաճման համար կռիւ մղելու սիրտ անգամ չկայ ներարարութեան պատմութեան կրող տղոց կարծիքն տակ:

Տարականն խառնուածքները երբեւիցէ չեն ստեղծուած մեզ: Մեզի համար սիրելի է որքան խեղճութիւն, երբ արուեստական չէ անիկա, երբ մէկու մը չի հետեւիր ու հետեւողական կը մնայ ինքնիրեն: Ատիկա կ'ենթադրէ հարագատութիւն մը, հարագատութիւնը պատեառ կ'ըլլայ հաւատարմութեան ու հաւատարմութիւնը կ'առաջնորդէ գարգացման ու բիւ-

քեզացման: Մեր պարագային երևոյթը հետու է այս բախտաւոր հոլովոյթէն: Մեր «նորարարներուն» սօտ խառնուածքային գիծ չէ խնթութիւնը, հետեւակային է, ուսումնասիրուած եւ ապա ցուցակաձորէն հանդիսադրուած, եւ, հետեւաբար, գարկ յուսադրիչ կարելիութիւններէ:

Դեռ խօսքը բարձրովին որակին չի վերաբերիր, աւելի մտահոգիչը կատարուած փորձերուն քանակական նիւաբութիւնն է, որ, սնշուշտ, հետեւանք է հաւատքի ստոյգ պակասի մը: Յարդ հրամցուածը կը յիշեցնէ հայրենակցական մեր միութիւններէն մէկուն կամ միւսին տարեկան ձեռնարկը: Շատերը այդ միութիւններէն իրենց տարեկան ձեռնարկով ոտքի կը կենան, կը սնուցանեն իրենց փառքը, քիչ մըն ալ, մերձ ասաց, իրենց փառասիրութիւնը:

Մեր «նորարարներուն» համար, գրելու արարքը, լաւագոյն պարագային, հայրենակցական միութիւններու տարեկան ձեռնարկին տէր քան մըն է, ամէնօրեայ տագնապ, ամէնօրեայ հրամայական, փոքորկայոյց խռովք ու դրսեւորուելու անդիմադրելի պահանջք չէ, եւ հո՛ս է, որ մարդ, ուզե՛ չուզէ, կը կասկածի անոնց իրաւութեան ու լինելութեան մասին:

Երեւի այդպէս կը պատահի բոլոր անբնական երևոյթներուն հետ: Օտարամուտ ու ստացական ամէն շնորհի փայլատակումը եւ փլուզումը երեւի կը պատահի միանգամայն: Ստացական ուժը անմասն օրէնքին չի հպատակիր, կը խամրի ու կը յագնեցնէ շուտ, անխուսափելի դարձնելով բեկումը իբր եւ հեթակային միջեւ:

Մինչդեռ տարբեր է պարագան բնականին, ինքնակին, խառնուածքային անհանգստութիւններուն:

Պիտի ըսէինք, քէ ազբիւր մը չի կրնար գտնուի ինքզինք, կը պարթկայ:

Առողջ հունտ մը, հանդարտ չի մնար, կը ծլարձակի:

Թռչուն մը կարելի չէ լուս պահել անգամ վանդակին մէջ:

Փոխարեութիւնները փոխադրելով գրականութեան մէջ, ըսենք իսկոյն... Թող պարտը ըլլայ ազբիւրին ջուրը, միայն քէ՛ հոսի՛, քող փուշ ըլլայ ստղմը, միայն քէ՛ ծլարձակի, քող ազատի կռիւն ըլլայ երգը, միայն քէ՛ ըլլա՛յ, տարեկան ու տե՛ստան ձեռնարկ չմնայ, ըլլա՛յ:

Այդ պարագային միայն կ'արդարանայ «նորարարներով» խանդավառուելու կամ մտահոգուելու փութկոտութիւնը:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

**ՊՈՏԼԷՐԻ ԱՇԽԱՐՀՆ
ՈՒ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ**

ՊՈՏԼԷՐԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԳԱՆ
ՀԱՄԱՋՈՒՄՆԵՐԸ

Ուշ կամ կանուխ, սեւէ երիտասարդ
յրող կամ արուեստագէտ բախում կ'ու-
նենայ շուրջը տիրող նիւթապաշտ քա-
ղաքակրթութեան եւ վարչածիւին հետ եւ
անոնց հակազդելու իր փորձերէն ետք՝
կու՛մ կը քաշուի փղոսկրէ աշտարակին
մէջ եւ հոն կը դառնայ արուեստի եւ ա-
ռանձնութեան Երզուեսլ քուրմը եւ կամ
կը մասնակցի իւրօրինակ եւ իտէսա-
պաշտ հոսանքներուն:

Պոտլէր, պարագաներու բերձմբ եւ
նաեւ իր անհատական պայմաններուն
մղումով՝ ազրեցաւ այս հողէվիճակը եւ
յանդեցաւ երկու ծայրայեղութիւններուն
ալ:

Պոտլէր, որուն հայրը ապրած էր
ժԸ.—րդ դարու նրբացած տղնուական
ընտանիքներու մէջ, ժառանգած էր ա-
րիսրոկրաքի՛ք ճաշակներ եւ անհատա-
պաշտ սկզբունքներ: Ատած է 1789-ի յե-
ղափոխութիւնը իր անմիա լաւատեսու-
թեան եւ առաջ բերած անիշխանութեան
համար: Ժողովրդավարութիւնը նկատած
է մեծագոյն պատուհասը, որովհետեւ ան



կը պարտադրէ տգէտ մեծամասնութեան
մը բունակալութիւնը անհատին վրայ: Իր
յետմահու հրատարակուած օրագրին է-
ջերուն մէջէն կարելի է քաղել այսպիսի
նախադասութիւններ.

Փոզովուրդները ամէն ջանք կը քա-
փեն մեծ մարդեր չունենալու համար:
Ցառաջդիմութեամ գաղափարը ծոյ-
լերու վարդապետութիւնն է:

Մարդը միշտ նման է ինքնօրինակ, այսինքն միշտ վայրենի:

Իրեն պէս կը մտածէին իր սերունդին պատկանող բոլոր իրաւ գրողները եւ արուեստագէտները. Յրուպէր, Ռենան, Կոթիէ, Կոնգուր... Պոտլէր կ'ամբաստանէ ամերիկեան ժողովրդավարութիւնը, զոր կը նկատէ ամէնէն նեղմիտն ու նիւթապաշտը, որովհետեւ ան չյարգեց ու չհասկցաւ իր հողեկան եղբայրը Խուար Ալամ Փօն:

- Կարծէք, - կը գրէ, - ազատութեան հետքնու սէրը ծնունդ տուած է անասուններու բնատրոյթեան...: Արիգոնայի կարմրամորթը անլի բազալակը: Բըւած է՞ քան իր տէրը՝ Ծանֆի մեծահարսուսը:

Եւ Պոտլէր կը մարգարէանայ նոյնիսկ.

- Պիտի մեռնիմք ա՛յն քաներէն, որունցմով ուզեցինք ապրիլ. այսինքն մեռնիմք այն եւ ընկերակարութեան: Կայաւածախրական եւ ընտանեկան դրութեան անհետացումով, մարդը պիտի կտրանցնէ իր անհատականութիւնը, եւ պիտի վերածուի անսիրտ Էակի մը, որուն միակ նպատակը պիտի ըլլայ. դրամ շահիլ:

Ընկերային եւ քաղաքական տիրող եւ տիրելիք կարգերուն հանդէպ թշնամական այս կեցուածքը ունի խորունկ պատճառներ: Նախ կայ արուեստագէտին տեսակէտը. ան կ'արհամարհէ ինչ որ միջակ է ու հասարակ: Եւ տնտեսական տաշնայնները, եւ քաղաքական վերիվայրութիւնները կը դիտէ զեղեցկազնուական տեսանկիւնէն: Կը բաղդատէ անցեալն ու ներկան: Եւ որովհետեւ անցեալը կը ճանչնայ բանաստեղծներու եւ նկարիչներու գործերուն մէջէն, այսինքն կը տեսնէ միայն անոր փարթամ ու նկարէն երեւոյթները, կը դատապարտէ ներկան, որ անպիտան է եւ ստիպակ, ուր մարդիկ մեծ ազմուկ կը հանեն մանր բաներու համար:

Կայ մանաւանդ այն յախտենական անհասկացողութիւնը, որ կը տիրէ արուեստագէտին եւ զինքը չըջապատող հասարակութեան միջեւ: Որքան իր հան-

ճարով արուեստագէտը զերազանցէ իր ժամանակը եւ վեր մնայ նիւթական եւ առօրեայ մանր-մուշկ հայելներէն, ա՛յնքան կը լայննայ իրամատը իր եւ իր ժամանակակիցներուն միջեւ: Ծոսա քիչեք կը հասկնան զինք. ամբօրը, կոյրերու թափօրէ մը պէս կ'անցնի, առանց տեսնելու իր հանճարին զօրաւոր ու կենսատու լոյսը: Եւ արուեստագէտը աւելի եւ աւելի կը քաշուի առանձնութեան անսպասելի մէջ եւ կ'արհամարհէ իր ժամանակակիցները, որոնք կը շարունակեն անտեսել զինք, վազելով դրամին եւ հաճոյքին հետեւէն: Ասոր արդիւնքը կ'ըլլայ նիւթական ու բարոյական անձկայից վիճակ մը, որ աւելի կը դառնացնէ արուեստագէտը. մանաւանդ, երբ շուրջը տիրէ բարգաւաճ կացութիւն մը, որմէ կ'օգտուին միայն բոլոր այն հասարակ մարդիկը, զորս ինք կ'արհամարհէ: Իր հռանդը, իր ներշնչումը կը վերածուի զգուհութեան: Քէն ու տտելութիւնը կը զգայ բոլոր անոնց հանդէպ, որոնք երկնց ձեռքերուն մէջ նիւթական եւ տնտեսական ուժը ունին եւ կը վայելեն ամբօրին հիացումը եւ կ'արհամարհեն այն հանճարները, որոնք ունին հողի աննիւթական ուժը:

Պոտլէր կը պատկանի մտաւորական երկտասարդներու այն փաղանգին, որոնք զկը քափառին ներկային մէջ, ինչպէս նամարդը մը մշտնջատ անտառին:

Դարուս գաւկի մը խոտովանութիւնը անուն իր գործին մէջ, բացատրելով անոնց հողեքանութիւնը, Ալֆրէտ տը Միւսէ կ'ըսէ.

«Իրենց ետին ձգած էին ընդմիշտ բանդուած անցեալը, որ երբեմն կը ջրմուկը իր աւերակներու ծանրութեան տակ... զիմացնիմ՝ բայց շատ հեռուն, անհուն հորիզոնի մը արշալոյսը, սպառազայի առաջին ճշոյնները...»:

Մինչեւ 1846, Պոտլէր թշնամի է հանրապետականներուն, որովհետեւ, ըստ իրեն, անոնք թշնամիներն են վարդերու, բոյրերու, արձաններու եւ բանաստեղծութեան: Սակայն, ո՞վ զարմանք, երկու-

տարի ետք, ան կը պայքարի անոնց կողմէն:

Ինչո՞ւ:

Որովհետեւ իր խորթ հայրը, զօրավար Օփիք, կը վայելէ Թաղաւորական կառավարութեան վասակութիւնը: Բանաստղծին աչքին, ան կը խորհրդանշէ տիտիփին, իշխանութիւն, օրէնք: Պոտլէր որոշած էր միայ անոր հակառակորդը ըլլալ, որովհետեւ իրմէ իւրած էր մօրը սէրը եւ դուրսդուրանքը: Եթէ Օփիք հանրապետական ըլլար, Պոտլէր պիտի պաշտպանէր իշխանութիւնը. բայց որովհետեւ Օփիք իշխանութեան կողմն էր, Պոտլէր կը դառնար հանրապետական եւ յեղափոխական:

Պոտլէր կը մտնակցի ցոյցերու. հրոցանը ձեռնն կը հրահրէ իր ընկերները, կը քաջալերէ իր զինակիցները, որպէսզի բռնեն զօրավար Օփիքը եւ պահ զնրան հարեն: Ճառեր կը խօսի օրճարաններու մէջ. կը մենամարտի իր հակառակորդներուն հետ. նոյնիսկ կը հիմնէ յեղափոխական Թերթ մը՝ Ազգային Վերկայութիւն, որմէ միայն երկու թիւ լսյս կը տեսնէ:

Իր հանրապետական ըլլալուն երկրորդ պատճառը պէտք է փնտռել իր ասպարած միջավայրին մէջ: Կը բնակէր Լատինական քաղը, ուսանողներով շրջապատուած, ունէր յեղափոխական բարեկամներ. Թորէ, Հիփոլիթ, Փրուտոն: Ինք՝ որ երիտասարդ էր եւ ըմբոս, չէր կրնար հետու մնալ այս շարժումէն:

Եւ երբորդ ու Թերեւս ամէնէն կարեւոր պատճառը այն էր, որ Պոտլէր կ'ուզէր գրականութիւն ընել, ապրելով այդ պատմական օրերը: Իր օրագրին մէջ հետեւեալը կը խոստովանի.

— 1848-ի արեւելքեան շարժումը: Վրէժի իզօր: Քանիչուս բնական ու մարդկային եամայրը: Գրական արեւելքեան, ընթերցումներուս ազդեցութիւնը:

Ինչպէս կը տեսնուի, քաղաքական համոզումով չէ որ Պոտլէր յեղափոխական դարձաւ, այլ իբր արուեստագէտ: Քանի մը տարի ետք, կը մտնայ այս բու-

լորը եւ կը քննադատէ իր երբեմնի զինակիցները: Քաղաքականութիւնը զինք այլեւս չի հետաքրքրեր: Ինք ուրիշ երազներ ունի իրազործելիք:

Եւ եթէ արտաքինապէս կը շանայ ցուցադրել ազնուապետական եւ տանտի ապրելակերպ ու տեսակէտներ, խորքին մէջ կը մնայ սակայն ժողովուրդի կողմէն: Կը սիրէ ատուապող բազմութիւնները, կը համակրի աղքատ գործաւորին, որ կը տքնի օրն ի րուն, պատառ մը հասցի համար: «Անկարելի է, — կը գրէ իր Վիպապաշտ Արուեստը գործին մէջ, — ինչ որ ալ ըլլամ իր համոզումները, ո՞ր կուսակցութեամ ալ պատկանի, անկարելի է քր մարդ չլուգուի, տեսնելով այս հիւանդոտ ամբոխը, որ կը շնչէ գործատուի դիմաց: Գործը քաղցր է, կը կլլէ քամակը, ձեռքերը կը քաքխէ անդիկին եւ սպիտակաքիզին եւ ամէն տեսակ քոյներու մէջ, որոնք անբարձեշտ են արուեստագէտին գոյս-գործըներ յօրինելու համար: այս ամբոխը՝ որ կը բնանայ ոչիլներու մէջ, քաղերու լաքիլաքիներու մէջ, ուր ամէնէն վստի առաջինութիւնները կը կեանակցին ամէնէն անասնի մոլորութիւններու հետ, այս ստապտող, հայտնադ եւ աղօթող ամբոխը»:

ՊՈՏԼԷՐ ԺԱԿԱՏԱԳՐԻ ԺԻՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Մինչեւ իր վերջին շունչը, Պոտլէր մտքանեցաւ ճակատագրին դէմ:

Իր զէնքերը արտաքին ու ներքին ուժեր էին: Այս զէնքերէն մէկ մասը, ժառանգած էր իր ծնողէն, միւսերը ինք պատրաստած էր հոգիին զինարանին մէջ:

Իր ծնողէն ժառանգած էր տանտիպը. այսինքն՝ արտաքին վայելուցիւն, քաղաքավարութիւն եւ կնամեծարութիւն. հոգեկան բարձրութիւն եւ անտարբերութիւն՝ ճակատագրի հարուածներուն հանդէպ: Այս զէնքով, Պոտլէր պատենէ կը կանգնէր իր եւ զինքը շրջա-

պատող հասարակ ու քաղքենի սպրեյակերպին միջև:

«Տանտիները, - կը գրէ Պոտլէր, - կը կազմեն ազնուական գասը այն շրջաններուն, երբ ժառանգական ազնուապետութիւնը փնայած է արդէն»:

Պոտլէր սպրեյաւ Լուի Ֆրիլիի Առաջինի եւ Նափոլէոն Երրորդի շրջանին, Ֆրանսան ինքզինքը վերադառնալու հրապարակաբար տեսնապէս: Փարվընիները եւ ճարտարարուեստով ու անեւտուրով հարստացողները իրենց շուրջը կը ստեղծէին ճոխութեան մթնոլորտ մը եւ կ'ազնիւնացնէին ժիւ: Եւ ԺԼ. զարեհու ազնուականներուն պէս, առանց սննեստանանց ժառանգական յատկութիւնները: Մէկ կողմէ փարթաւութիւն, շուստութիւն, Հաճոյալի կեանք, միւս կողմէ պտրտութեամբ եւ նեղմիտ մտայնութիւն մը:

Իսկ բուն ընտանիքն, իրաւ արուեստագէտները, որոնք չէին կրնար մրցիլ նոր միլիոնատէրերու հետ՝ ճոխութեան պտրտութեամբ, ի գործ կը զննէին իրենց ճաշակը եւ երեսակայութիւնը, տարբեր սպրեյակերպ մը որդեգրելու համար: Այս սպրեյակերպը, որ տանտիզմ կը կոչուի, իրենցմէ կը պահանջէր անպիսի զոհողութիւններ: Տանտիզմ, ամէն զեռով, կ'ուզէր շնորհիւ իր գերակայութիւնը, իր արհամարհանքը, իր անկախութիւնը, իր ազատագրումը ոչնչութիւնը մեղակերպութիւններուն եւ նախապաշարումներուն հանդէպ, որոնց մէջ կը տուայտէր քաղքենի աշխարհը: Կը ջանար միջոց մը ստեղծել իր եւ շուրջի սպրեյներուն եւ հասարակ մարդոց միջև:

Տանտիզմը, ուրեմն, սպրեյակերպ մը եւ մտայնութիւն մըն էր: Պոտլէր ոչ մէկ առիթ կը փախցնէր զարմացնելու եւ սպաշնցնելու իր շուրջները: Իր սանտիքով, որ կը զանգատէր գիշերային ժխտներէն, կը պատասխանէ պաղտաբանութեամբ. - Ձեռք ստակմար, ինչ կ'ուզէք ըսել, Պարոն: Ինչ որ կ'անցնի կը դառնայ տամս մէջ, կը պատահի մահու բալտը ազնուականներու երդիքին տակ. փայտ կը կըտրուի դանդիմիմ տախտակամածիմ վրայ,

համանունիս կը քաշկոտեմ մագրիմ բըռնած:

Երբ ճաշարան կը դառնուի, իր հասակցութեան մէջ բարձրաձայն կ'ընէր հետեւեալ յայտարարութիւնները.

- Խեղճ հայրս դաշունահարել ետք... Այն օրը՝ որ համանունիս պատուանդան վար մետոցի... Ես՝ որ քահանայի գաւակ եմ... Երբեք չէ՛ք մկատած որ մանուկի մը ուղեղին համը բիշ մը ընկողի կամ ունի...

Տանտիզմ կը յատկանշուի նաեւ իր վայելչասիրութեամբ:

Երբ Պոտլէր դրամ ունենար, անմիջապէս կ'ապստիւրէր հազուադէպ ու կ'ապուստ: Ինք կ'ընտրէր ձեւը, ինք կ'ընտրէր կերպաներուն զոյնն ու տեսակը: Ինչո՞ր էր ժամանակակից արուեստագէտները, հիացումով կ'արտայայտուէին իր հազուելու ճաշակին մասին: Իր ամէնէն ինկած տարիներուն, իր մաշած հագուստներուն մէջ իսկ պահած էր իր երբեմնի վայելչութիւնը: Մայրութեան մաքրասէր էր, միշտ կը կրէր անարատ ճերմակեղէններ. մանուսար խնամք կը տանէր իր ձեռքերուն:

Վայելուչ արտաքինով այս բանաստեղծը, ունէր նաեւ ներքին մաքրասիրութիւն մը, բարոյական ազնուականութիւն մը: Գաղաբազմար էր բոլորին հետ եւ փափկանկատ: Երիտասարդ տարիներու արտաքին տանտիզմը, տարիներու թերումով կը դառնար բարոյական հոգեվիճակ մը:

Պոտլէր ատուպեցաւ ու լուց, Վինյի ստոյիկեան գայլին պէս: Տանտիզմ, պէտք չէ արտայայտէ իր ներքին տկարութիւնները, որպէսզի մարդկային ընկերութիւնը զինք չնկատէ իր հասարակ անվամներէն մէկը: Պոտլէր ուսման ճիշդութեամբ է, որ ինքզինքը կը նկատէ դերազատ եւ եզական: Կը տատապի, կը ձանձրանայ, բայց կը լուէ: Ինչպէս Շաթոպրիանի հերոս Ուրնէն, որուն համար հովիւին մահակը եւ թագաւորին մահանը նոյն արժէքը ունին: Ինչպէս Պայրենի Մանֆրէտը, որ մահուան դռներուն առջև կը պահէր իր անդրադուելի անտար-

բերութիւնը, Պոտլէր կը դառնար ստոյգիկեան մը, որուն համար միայն լռութիւնը մեծ է: Եւ սակայն այս մտայնութիւնը պիտի կը տանի անելի մը առջեւ, որուն ծայրը կը բացուի անդունդը մահուան: Կը փորձէ անձնասպան ըլլալ: Իր դրչին տակ կը կարդանք հետեւեալ նախադասութիւնը, որ խոստովանութիւն մըն է.

«Ստոյգիկեան մտածելակերպը, կրօնք մըն է, որ ունի մէկ խորհուրդ միայն՝ անձնասպանութիւնը:

Կեանքի գէժ մղուող այս առօրեայ հոգեկան պայքարը զանազան եղանակներով կը նկատուի տարած է այլազան բնութիւն ունեցող արուեստագէտները: Եթէ Վինյի եւ Պոտլէր նոյն հայեցողութիւնը ունին կեանքի զգուարութիւններուն, մարդու ճակատագրին եւ մղուելիք պայքարի մասին, անոնք սակայն կը բաժնուին, երբ հարցը կու գայ Աստուծոյ մասին:

Վինյիի համար երկիրը խուլ է, Աստուծո չի պատահաներ մարդ էակի ազաչանքներուն, ինչպէս Ձիթենեաց Պարաէզին մէջ լուս մոտց, երբ Որդին իրեն կը դիմէր անձկազին, ուրեմն կ'ըսէ Վինյի.

— Գանգատիլ, լուլ եւ մանուանդ աղօթիլ՝ տկարութիւններ եմ:

Պոտլէր չզանգատեցաւ մարդոց, չլացաւ իր մտերիմներուն առջեւ, բայց աղօթեց իր մինակութեան մէջ, որովհետեւ չէր կրնար հաշտուիլ այն վաղափայրին հետ, որ ստեղծագործութեան վերջնական լուծումը ըլլար մարդկութեան եւ տիեզերքի ոչնչացումը: Կը հաւատար մեղքին եւ անոր ներգործութեան եւ ուրեմն հատուցումին եւ վերկութեան: Զգալով իր ինկած վիճակը, կը տառապէր ու կը ջանար բարձրանալ զէպի գեղեցկութիւն եւ լոյս:

«Ամէն բանէ առաջ պէտք է ցանամ հերքս մը եւ աւրք մը թլլալ ինքզինքիս համար. այս է կեանքի կարեւորագոյն նպատակը:

Պոտլէրի կեանքը եղաւ երկարատեւ պայքար մը իր բնազդներուն եւ սրբա-

նանալու ջանքերուն միջեւ: Եւ եթէ յաճախ ինկաւ ու տապալակեցաւ ցեխին մէջ, պատճառը ա՛յն է՝ որ այս պայքարը կը տանէր առանձին, իր տկար միջոցներով: Պոտլէր ապրեցաւ երկար Գողգոթա մը, զահեհներով շրջապատուած: Երկնք կարեւորագոյնները. մօրը անտարբերութիւնը, նիւթական զգուարութիւնները, հիւանդութիւնը, իր բնութիւնը եւ ժամանակը:

Պոտլէր ունէր երիտասարդ, դեղեցիկ ու զգալուն մայր մը, որ դինք շատ կը սիրէր: Սակայն երիտասարդ տարեքին այլի մնալով, կնքեց երկրորդ ամուսնութիւն մը եւ ապրեցաւ կաշկանդուած իր ամուսնոյն դերքին վերաբերեալ պարտաւորութիւններով եւ քաղքենի բարոյականի մը կապանքներով: Բարոյին կը սիրէր իր զուակը եւ կը տառապէր իր զակին թշուառ վիճակէն, սակայն զանուեցաւ տկար եւ նախընտրեց բաժնուիլ անկէ, զրեթէ զոճեց զայն իր կնքած ամուսնութիւնը չլիտանդու համար: Որքան ալ մեծ եղած ըլլան Շարլին յանցանքները, դատապարտելի կը դատուէնք Բարոյիին այս անտարբերութիւնը: Բարոյին կը սիրէր զուակը անտարակոյս, բայց չէր հասկնար անոր հանճարին մեծութիւնը, այլապէս ինչպէ՛ս բացատրել մօրը այս վարմունքը: Ինչպէ՛ս մայր մը կրնայ խուլ ձեւանալ, երբ զուակը սրտատուչ ու անձկագին կոչեր կ'ուղղէ իրեն. երբ կ'աղաղակէ մէկու մը պէս, որ կը խեղդուի, երբ մահացու կարօտը ունի մայրական գիրկին եւ փոխարէնը կը ստանայ իրատներ եւ յորդորներ:

Հարկաւ ծանր էր բանաստեղծին դժբաժնը տողերը մօրը մասին, Օրբնութիւն կարոյին մէջ.

— Երբ Աստուծոյ մէկ երեսանգով, բանաստեղծը կը յայտնուի ճանճարացած այս աշխարհին մէջ,

— Մայրք, սարսափած եւ անէծքնաբով լեցում,

— Կը պրկէ բռունցքները դէպի երկինք, որ կը գրայ իր վրայ...

- Որպէսզի գարշամբը ըլլամ իմ անբախտ ամուսինիս,

- Եւ որովհետեւ չեմ կրնար կրակի մէջ նետել սիրոյ ճամակի մը պէս, Այս այլանդակ հրէշը. պիտի ցայտեցնեմ իր վրայ քու նզովող աստուաթիւնդ:

Բայց իր նամակները ճշգրիտ պատկերներն են իր բուն զգացումներուն.

«Ո՞վ գիտէ, որ մը բնօր պիտի կարենամ քանակ արգիօք հոգիս, գոր երբեք չհասկցար ու չգնահատեցիր»:

Եւ անդրազանաւով մանկութեան երջանիկ օրերուն, Պոտլէր կը գրէ.

«Անոք ինձի համար եղան մայրական սիրոյ լաւագոյն օրերը: Ներողութիւն՝ եթէ լաւագոյն կը կոչեմ այդ օրերը, որոնք քեզիս լաւ չեղան էնքի նամար: ... Ձեմ ազիբ երկարել, որովհետեւ գիտեմ որ այժեպը կ'արցունեն տիմ: ... Կ'ազայեմ, եկո՛ւր, եկո՛ւր, յուսանաւած եմ եւ քաջութիւն չունիմ: Ամբողջ կեանքս պիտի գտնէի եթէ մը բեզ համարելիս եմ: ... Միմակ եմ, առանց բարեկամի, առանց սիրուելիի, առանց շունի, առանց կատուի, որո՞ւմ գանգատիմ: Ունիմ միայն ինք պատկերը, որ միշտ համր է»:

Մէկ խօսքով, Պոտլէր շնանչաւ ընտանեկան տաքուկ մթնոլորտը, շտապաւ պէտք եղած բարոյական ու կրօնական կրթութիւնը: Ոչ ոք առաջնորդեց զինք կեանքի վտանգաւոր արահետներէն. խորթ հայրը երբեք չուզեց հասկնալ անոր հանճարը, եւ մայրը՝ ինչպէս տեսնեց վերը, չեղաւ իր պահպան հրեշտակը:

Սակայն, արդար ըլլալու համար, պէտք է ըսենք որ պատասխանատուութիւններէն մաս մըն ալ կ'իյնայ բանաստեղծին ուսերուն վրայ: Տկար էր կամքը, չէր վարժուած կանոնաւոր աշխատանքի ենթարկուիլ: Մէկ խօսքով, անասակ որդի մը, որ չունէր իր վերադարձին սպասող հարուստ ու ներող հայր մը:

Անմիջապէս որ Պոտլէր ստացաւ ժառանգութեան իր բաժինը, սկսաւ անխը-

նայ ծախսել: Երկու տարեկէն արդէն, կերած էր ունեցածին կէսը, որ կը բարձրանար 72,000 Ֆրանքի: Անմիջապէս ընտանիքը միջամտեց եւ զինքը դրաւ զատկան խորհուրդի մը հակակշիռին սակ: Ատկա խոհեմ կարգադրութիւն մըն էր, որովհետեւ այսպիսով, մինչեւ կեանքին վերջին օրը, Պոտլէր անօթի չմնաց: Բայց ինքզինքը նուստացած զգաց եւ մինչեւ վերջը զանդուտեցաւ արդ կարգադրութեան դէմ, զայն արժանապատուութեան հարց նկատելով, մանաւանդ որ 30,000 Ֆրանք պարտք ունէր եւ չէր կրնար իր խոստումները յարգել պարտատէրերուն հանդէպ: Եւ կը սկսի իր սզիտականը: 1843-էն սկսեալ, իր դէմ կը կազմակերպուի պարտատէրերու սարքած անինայ պատերազմը: Անոնց հետապնդումներուն դէմ մէկ գէնք ունի միայն՝ - փախուսաւ: Անդադար կը փոխէ իր բնակարանը. կ'անցնի պանդոկ-պանդոկ: Գրամ կը խնդրէ անջն ու ծախէն, մօրմէն, բարեկամներէն, Գրամ դէտներու միութենէն, պարոն Անտէլէն, որ իր դատական խնամակալն է: Մօրը կը գրէ. - Վերջին անգամը որ ինձի 15 ֆրանկ դրկած էիր, երկու օր է բան մը չէի կերած, քառասունըրոր ժամ անօթի մնացած էի»: Կը խոստանայ աշխատել, դրամ չա՛իլ, վերադառնալ Հնդկաց Ռիկիանոս՝ վաճառականութիւն ընելու համար: Մեկնիլ, մեկնիլ առանց վերադարձի. մեկնի՛լ, մեանի՛լ:

- Անճամապան կ'ըլլամ, որովհետեւ անպէտք եմ շուրջիններուս եւ վտանգաւոր՝ անձիս: Անճամապան կ'ըլլամ, որովհետեւ կը հաւատամ անմահութեան եւ կը յուսամ:

Հիւանդութիւնը եղաւ Պոտլէրի մեծագոյն դահիճը: Ինչպէս գիտենք, տանընթ տարեկանին, Պոտլէր, ընտանիքէն բաժնուած՝ կ'ապրէր սանձարձակ կեանք մը: Գիւրամատոյց ազլիկներն ու հանրատան քրմուհիները եղան երկուսուսարդ բանաստեղծին սիրոյ ուսուցչուհիները: Եւ կը կարծուի, թէ շատ կը յանձարէ Սարա աննոյով Հրէուհի մը, որուն մահիճին մէջ վարակուեցաւ օրփի-

լիսով, ինչպէս շատ մը ուրիշ երկտա-
սարդներ: Ձգիմեց բժիշկներու, այլ փոր-
ձեց ինքզինքը խնամել եւ հրեք չբուժ-
ւեցաւ: Ախար կամաց-կամաց անցաւ ար-
եան մէջ եւ իշխեց միսերուն, մկաննե-
րուն, շիղերուն եւ ուղեղին եւ օր մըն ալ
տապալից զինք:

Ահա ինչ կը գրէ մօրը, այդ մատին,
տարիներ հտը. — «Գիտես որ երիտասար-
դութեանս ունեցայ գէշ հիւանդութիւն
մը: Հետագային կարծեցի, թէ ամբողջո-
վիմ քաւածուած եմ... Ներկայիս սակայն
կրկին կը յայտնուի»:

(Շար. 2)

Կը տառապի ստամոքսէն, աղիքնե-
րէն, շիղերէն: Անքնութիւնը իր առօր-
եայ ընկերն է: Իրամ շունի որ գեղ պէ՛
եւ ինքզինքը խնամէ: Գլխու պտոյտներ
կ'ունենայ, կը փօխէ: Երեք օր չի կրնար
ստէի կենալ, արքովներու, — կ'ըսէ, —
զլուխս արեւի ծանր կը կշռէ, քամ մար-
միմս»:

Եւ վերջապէս, Նամուրի Աէն Լու ե-
կեղեցիին մէջ կը ստանայ մահացու հար-
ւածը. կը դառնայ անդամալոյժ, համր
մինչեւ մահուան փրկարար այցելութիւ-
նը:

Ն. Զ.

ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Հրեշտակներուն պէս շարաչուի
ես քու մահի՞նքդ պիտի գամ,
Պիտի սաւիտ հոմ լըռելեայն
Ստուերներուն հետ գիշերի:

Սեւահերդ իմ, քեզ պիտի տամ
Լուսնակին պէս ցուրտ համբոյրներ,
Ու գգուանքներ օձի նըման
Որ կը սողայ փոսի մ'ընթեր:

Ու երբոր գայ տժգոյն առտուն,
Տեղըս թափուր պիտի գտնես,
Եւ պիտ' ըլլայ ցո'րբու մինչ իրկուն...

Թո՛ւ՛ր ուրիշները գգուանքով՝
Կեանքիդ վըրայ դեռաստի՛ ես
Տիրի կ'ուզեմ լռիկ սարսափով...

Թարգմ. Ա. Ե.

ՊՈՏԼԻՐ

LE REVENANT

Comme les anges à l'œil fauve,
Je reviendrai dans ton alcôve
Et vers toi glisserai sans bruit
Avec les ombres de la nuit;

Et je donnerai, ma brune,
Des baisers froids comme la lune
Et des caresses de serpent
Autour d'une fosse rampant.

Quand viendra le matin livide,
Tu trouveras ma place vide,
Où jusqu'au soir il fera froid,

Comme d'autres par la tendresse,
Sur ta vie et sur ta jeunesse,
Moi, je veux régner par l'effroi.

Charles Baudelaire



Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ

Քէ այդ վտանգը կանխելու ինչ գործնական աշխատանքներ են կատարուում այսօր՝ մենք տեղեկութիւն չունենք, Բայց միամտութիւն կը լինէր կարծել, թէ մի ամբողջ ժողովուրդ կարող է աչքերը փակել ու չտեսնելու տալ չորս կողմից սպառնացող վտանգների դոյութիւնը, չմտահոգուել իր իսկ անուշադան ազատութիւնը հարցներով եւս չլին։

Բայց եւ այնպէս, այս ամէնով հանդերձ, այսօր անողոք իրականութիւն է, որ Հայ ժողովրդի կեանքի վերաբերեալ ոչ-բոլոր ճշմարտութիւններն են հասնում ժողովրդական լայն զանգուածներէ դիտակցութեանը, մանաւանդ՝ նորահաս սերունդին։ Քանզի շատ ճշմարտութիւններ թաքցուած եւ զբանով իսկ զժողովրդին են ժողովրդի յառաջընթացը, խախտում ու թուլացում նրա արդար ինքնավստահութիւնը, չհիմնուող անուշադան վախ ներշնչում, ըլլալու օւժերը։ Եթէ այսօր, ինչ-ինչ պատճառներով, Հայաստանում սեղանի վրայ չեն դրուած քաղաքական հարցեր, ապա ոչ մի պատճառ չկայ ազգային ու պատմական ճշմարտութիւններից հրաժարուելու եւ դրանք թաքցնելու։ Քանզի պատմութեան դասը, բայց անփոփոխար ճշմարտութիւնը այսօր Հայութեան ձեռքին այն հողերը զէնքն է, որի շնորհիւ նա կարող է թարմ ու դաշար պահել իր յիշողութիւնը, յստակ ու վճռական Հայիացք ունենալ ներկայի նկատմամբ, դաշինքի համար ճանապարհ հարթել, ազգային տրամադրելի ուժերը համակարգել եւ ընդհանուր գործարար յարտարարի բերել։ Հայ ժողովրդի թշնա-

միները, ի հարկ է, հաշտ չեն այդ յուշարար ճշմարտութեան հետ եւ միշտ պիտի ջանան պղտորել նրա ահունքները, չփոթութեան մատնել Հայերին եւ օտարներին։ Բայց հայկական ճշմարտութիւնն էլ ինքը կեանքի արդիւնք է եւ անսպաս ու միշտ պիտի բխի եւ ճանուղայթի, անկախ շարակամների բոլոր որոգայթներից։ Հայկական ճշմարտութիւնը վառ պահելու ասպարէզում անմըցելի նշանակութիւն ունի բանաւոր ու զբաւոր հրապարակային խօսքը, ըթափեցնող ու արթուն պահող հոգատար ձայնը։ Եւ ամէն մի Հրատարակութիւն, որն իր էջերում բացայայտում է Հայկական ճշմարտութեան թէկուզ մի համեստ բաժին, անպայմանօրէն ունի հանրային ու գործնական նշանակութիւն Հայութեան համար։

Այս ընդհանուր տեսանկիւնից դիտելով Աս. Մնացականեանի մենագրութիւնը կարող ենք ասել, որ այն իր հանրային նշանակութեամբ առաջմ եւ զտկի ու աննախընթաց երկույթ է՝ որոշակի ասպարէզում։ Այդ մենագրութիւնը բացում է միլիոնաւոր Հայերի, մանաւանդ նորահաս սերունդի աչքերը, ցոյց տալով, թէ պատմական Հայաստանի մի հատուածում ինչը ինչին է նախորդել կամ յաջորդել եւ ինքը ինչպէս է ընթացել։ Յիշատի, երբ մարդիկ, մանաւանդ նորահաս պատանիները, չզիտեն Հայկական կեանքին առընչուող պատմական ճշմարտութիւնը, էլ ինչպէ՞ս կարող են կողմնորոշուել առօրեայ Հանրային կեանքի խաչմերուկներում։ Ամէն մարդ գիտնական չէ, ոչ էլ պատմաբան,

այն էլ միաժամանակ բոլոր բնագաւառներում: Այս պայմաններում՝ նոյնիսկ խորքով հայրենասէր, բայց դիւրահաւատ մարդիկ կարող են թիւրիմացաբար կամ ժամանակաորակէս խաբուել, թշնամու ծողակն բնկնել ու ըստ էութեան, գործուն թէ կրաւորական եղանակով, հակահայրենական գործերի նըպաստել: Եւ ոչ մի գրաւոր կամ անդէր Դատաստանադիրք չի օգնի՝ նրանց ըստ հուժեան գէթ բարոյապէս դատելու համար: Բացի այդ, իրական կեանքում գոյութիւն ունեն ոչ միայն անդիջում հայրենասէրներ, այլև կան հանրային շահերի նկատմամբ անելի կամ պակաս անտարբեր տառապեղներ, պոչից ընթացողներ եւ այլն: Գաղտնիք չէ, որ ոչ միայն գիտութիւնն է ուժ, այլև սզիտութիւնը, միայն թէ հակառակ ուղղութեամբ գործելով, որից օգտւում են բացասական տարբերը: Արդ, այդ բոլոր մարդկային խաւերից բնականօրէն հայրեն վայել վերաբերմունք ու գործ պատահուց առաջ՝ նախ պէտք է նրանց հասցընել իրական ճամբատութեան ճայնը, լուսաւորել նրանց միտքը: Այնուհետև ամէն ինչպէս մարդ կը ճշտի իր դիրքը եւ կը դրսեւորի իր ինքնութիւնը, այսինքն պատասխանատու կը լինի իր ստանձմաների ու արարքների համար:

Հայ կեանքի որեւէ բնագաւառ ճշմարտօրէն ներկայացնելը նշանակութիւն ունի ոչ միայն հայերի, այլև օտարների, տուեալ դէպքում հենց ազգբնակների համար: Անշուշտ, Բունիաթովներ սննդն ու հրապարակ հանելը լաւ բարենիչ չէ եւ ազգբնակական ժողովրդի օգտին չի վկայում: Բայց նոյնիսկ հարիւրաւոր Բունիաթովներ արատադրուելու դէպքում, դարձեալ ճակատագրական սխալ կը լինէր կարծել, թէ մի ամբողջ ժողովուրդ բոլորովին զուրկ է ողջմիտ ու արդարամիտ դաւաններից: Այսօր, ըստ երեւոյթին, այդպիսիները այնքան ջիւն եւ անցօր, որ չեն երեւում եւ գործին միջատում, որովհետև եւ ընդհանուր մթնոլորտը արդարատեութեան համար աննպաստ է: Բայց դա

չի նշանակում, թէ նրանք առհասարակ չկան, չեն կարող լինել եւ երբեք նրանց ճայնը չի լուսելու: Իսկ որպէսզի աւելանալ ժողովրդի շահերը յարգելու օգտին՝ հանդէս գալ՝ պէտք է հենց իրենք նախապէս իրազեկ լինեն, թէ ինչը ինչից է: Այստեղ, բնական է, պատրանքների հարց չի կարող ծագել: Պարզապէս նըկատի ունենք կենսական շահերի գիտակցութեան մակարդակը: Քանզի անհաստատութիւն կը լինէր ենթադրել, թէ հայ ժողովուրդը մշտապէս պիտի հանդուրժի ձեռք ու ոտքը կապած եւ մէջքի վրայ պակկեցրած վիճակը: Հետեւապէս խելացիութիւն է հայուի արունել եւ այդ կարգի ամէն ինչի հետեւանքները: Եւ մենք նկատի ունենք այն, սր որեւէ ողջմիտ ազգբնակցի չի կարող անտեսել կեանքի հրամայական թելադրանքները: Նախ՝ երկու ժողովուրդների լարուած յարաբերութիւնից կարող են տուժել ոչ միայն հայերը, այլև գոյցէ առաջին հերթին հենց ազգբնակցիները: Երկրորդ՝ հայաբնակ հայկական հողերը Ազգբնակի մէջ պահելը չի թեթեւացնում ազգբնակցիների ընդհանուր քաղաքական կամ առօրեայ բնուր, բայց անհուշօրէն ծանրացնում է հայերի վիճակը եւ մղում ուժերի անշահաւէտ միման, հակամիջոցներ ըստեղծել փոխադարձ մրցամազի: Այս անպատեհութիւնները արդէն բաւական են՝ որեւէ ողջմիտ ազգբնակցու սթափեցնելու համար: Բացի այդ, ճամբատութեան լախար պակրասան Բունիաթովների գլխից վեր շահեցնելը կարող է սթափեցուցիչ դեր խաղալ նաև միւս արկածասէր հեղինակների ճանապարհին: Նրանք այլևս նոյն անձնաճակատութեամբ չեն յոխորտայ եւ գրիւղաց ու խօսելուց առաջ թերեւս մի ջիւն անելի երկար մտածեն, ասելիքները շափեն ու ձեւեն: Այդ բանը, այսինքն հայկական ուժը դէթ խօտքով արտայայտելու արարքը, կը ստնձի նաև ազգբնակական շովինիստների ծաւալապաշտական սխորժակները: Եւ այն:

Այս կապակցութեամբ նպատակա-

յարմար ենք համարում անդրադառնալ մի հարցի: Նրանք, ովքեր տեղեակ են խորհրդային իրականությանը, տիրող վարչակարգի զսպանկներին, անընդհատ հոլովուտը քաղաքական ու գաղափարախոսական հակադրային նշանախօսքերին, թերեւս տարակուսանքի մատնուհան են հարցնեն, որ եթէ այնտեղ դործնականում անթոյլատրելի է համարուած անհատի ու ազգերի անկապտելի իրաւունքների պաշտպանութիւնը, ապա մի՞թէ կարող է թոյլատրուել պատմական ճշմարտութեան քարոզչութիւնն իջնին չի հակասում տիրող կարգերի եւ օրէնքների ողուն: Նախ՝ ոչ մի օրէնքի մէջ եւ ոչ մի վարչակարգի դրօշի վրայ չի դրուած «կորչի ճշմարտութիւնը» եւ հետեւապէս պատմական ճշմարտութեան արծարծումը, ըստ էութեան չի կարող հակասել բուն օրէնքի ողուն ու գաղափարական հիմքին, նոյնիսկ եթէ այն շատերի դուր չգայ: Այդ ճանապարհի վրայ պատահող բոլոր արկածները պլանաւորապէս տուեալ հաստատութեան անմիջական քաղաքացիական խնդիր տուեալ պահի ընթացիկ հակամարտութիւնների արդիւնք են: Բայց այդպէս լինելով հանդերձ, մենք չենք ուզում այստեղ ծանրանալ խորհրդային վարչակարգի ընդհանուր բնութագրման հարցերի ու ճշմարտութիւն քարոզչութեան հետադարձների վրայ: Վերջում ենք մեզ հետաքրքրող ազգային հարցը: Կոմունիստական գաղափարախօսները, ճիշտ է, երբեք ի սրտէ ուղղակի հանդէս չեն եկել այս կամ այն ազգի գոյութեան իրաւունքների օգտին: Եթէ երբեւէ հանդէս են եկել՝ ապա բոլորովին ուրիշ կապակցութեամբ եւ ուրիշ նպատակներով, պարզապէս ընդհանուր մարդկային տեսանկիւնից կամ ընթացիկ նկատումով: Բայց կենքը չի հնթարկուել նրանց վերացական-միջազգայնական գեղատմութիւն: Եւ իրականում ենք մէջ ուժերի պայքարը այլ հունով է ընթացել: Այնպէս որ ազգային հարցի դործնական դրուածքը հակասական է եւ յաճախ չի համապատասխանում կոմունիստական կուլքերի տեսական երբեմնի պատուիրաններին, որոնք նոյնպէս հակասական են: Լենինը, օրինակ, զանազան նոյնիսկ ընդունելի տեսակէտեր է յայտնել ազգային հարցի նախնական փուլի շուրջ, որոնք այդպէս էլ մնացել են տեսակէտներ, առանց դործադրութեան: Լենինը անթոյլատրելի էր համարում, մասնաւորապէս, որ որեւէ ամբողջական հայրենիք եւ ազգ մասնատուի, բաժան-բաժան լինի: Թէ որքանով էր հուսատու նա իր սաստիճիկ դատարար հարց է, բայց ասուածը փաստ է: Արդ, ի՞նչ ենք տեսնում: Հենց Լենինի օրօք կովկասեան Հայաստանը, էլ չիտած Արեւմտեան Հայաստանի մասին, բառացիորէն յօշոտուց եւ նրա կէսը կեր դարձաւ «եղբայրական հանրապետութիւններին»: Եթէ մարքտիզմ-լենինիզմը եւ Լենինի դրոյթները իրական կշիռ եւ արժէք ունենային՝ այդպիսի բան չէր պատահի: Սակայն այդ գաղափարախօսութիւնը այսօր էլ դարտագիր կրօն է համարում խորհրդային Միութեան մէջ, մինչդեռ հայութեան նկատմամբ դործադրուած տնարդարութիւնները յաճախ բխում են ոչ թէ վարչակարգի կամ գաղափարախօսութեան բուն սկզբունքային պահանջներէ, այլ իշխողների մեծամասնութեան տրամադրութիւնից, շահերից եւ կամ էլ հայութեանը թշնամի ուժերի գերակշռութիւնից: Զէ՞ որ տուժած Հայաստանի կողքին, նոյն վարչակարգի դրօշի ներքոյ, զանուտ են եւ օգտուող ու խորհրդային կայսրութեան մէջ մանրանկար կայսրութիւն հանդիսացող երկրներ: Եթէ ազգերի տուժելը կամ օգտուելը ընդհանուր պայման լինէր բոլորի համար՝ ապա պէտք է որ միտմանակ նոյն աչքով նայուէր անխտիր բոլորի վրայ: Այսինքն՝ բոլոր երկրներն էլ ազգային տեսակէտից կամ կ'օգտուէին, կամ էլ կը տուժէին, եւ մէկ ազգի կողմից միւսին ճնշելը չէր համարուի առաջինի «ինտերնացիոնալիզմ», իսկ որեւէ ազգի ազատ ապրելու ճիշտումն ու կամքը՝ յանցապարտ ճնացիոն-

